

327(43)  
4-70

*Ռ.Պ. Կոմիտասյան*

ԱՐԵՎՍՏԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ

ՄՈՆՈԴՈՒԻՄԵՆՏԻ

ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԹՈՒՐԲԻԱ

ԵՐԵՎԱՆ

1963

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

---

СЕКТОР ВОСТОКОВЕДЕНИЯ

Р. П. КОНДАКЧЯН

ВТОРЖЕНИЕ ЗАПАДНО-  
ГЕРМАНСКИХ МОНО-  
ПОЛИЙ В ТУРЦИЮ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР

---

ЕРЕВАН 1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ,

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

327(43)

4-70

Ռ. Պ. ԿՈՆԴԱԿՉՅԱՆ

ԱՐԵՎԷԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԿԱՆ  
ՄՈՆՈԳՐԱԿԱՆԵՐԻ  
ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԹՈՒՐԻՒՄ

228

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼԻՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1963



Աշխատութեան մեջ քննութեան է առնու-  
մբ Արեւմտեան Գերմանիայի մոնոպոլիստա-  
կան կապիտալի ներխուժումը Քուրրիա:  
Գրքույկը հիմնականում ընդգրկում է երկրորդ  
համաշխարհային պատերազմի ավարտից հետո  
մինչև 1960 թվականի մայիսի վերջը ընկած  
ժամանակաշրջանը և Քուրրիայում տեղի ունե-  
ցած գինիւրական հեղաշրջումը: Գրքույկը  
նախատեսված է բնթերյուղների լայն շրջաննե-  
րի համար:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԹՈՒՐքԻԱ  
ՆԵՐԽՈՒԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Գերմանական իմպերիալիզմի ներխուժումը Արևելքի երկրներն ու Թուրքիան ունի իր պատմական անցյալը: XIX դարի 30-ական թվականներից սկսած պրուսական ռազմամուլ յունկերությունն իր հայացքն ուղղեց դեպի Օսմանյան Թուրքիա:

Իմպերիալիզմի փուլը թևակոխելուց հետո Գերմանիան իր գաղութատիրական պլաններում սկսեց ավելի ու ավելի մեծ տեղ ու նշանակություն հատկացնել Օսմանյան կայսրությանը:

Վիլհելմ II կայսեր 1889 և 1898 թվականներին Օսմանյան Թուրքիա կատարած այցելությունները «դեպի Արևելք» (Drang nach Osten) տիրահուշակ քաղաքականության բացահայտ դրսևորումն էին: Մուսուլմանական ժողովրդներին սիրաշահելու նպատակով, գերմանական կայսրը Գամասկոսում սուլթան Սալադինի դամբարանի առջև բարձրակոշ հայտարարեց. «Թող սուլթանը և երեք հարյուր միլիոն մուսուլմանները, որոնք ի դեմս սուլթանի հարդում են իրենց խալիֆին, համողված լինեն, որ

գերմանական կայսրն ամենուրեք ու ամեն ժամանակ կլինի նրանց բարեկամը»<sup>1</sup>:

Հենց այդ ժամանակ գերմանական իմպերիալիզմը շուտ քաշեց Բեռլին-Բաղդադ երկաթուղային ճանապարհի շինարարության պլանը, նույնպես ունենալով այդ միջոցով տարածել իր ազդեցութունը ամբողջ Մերձավոր արևելքում, ինչպես նաև դուրս դալ գեպի Հնդկական օվկիանոս:

Վ. Ի. Լենինը, բացահայտելով Արևելքի երկրներն իմպերիալիստական պետությունների խուժման բուն դրդապատճառները, «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» աշխատության մեջ գրում է. «Այս հետամնաց երկրներում շահույթը սովորաբար բարձր է, որովհետև կապիտալները քիչ են, հողի վինը համեմատաբար մեծ չէ, աշխատավարձը ցածր է, հում նյութեղենները էժան են»<sup>2</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Գերմանիան արդեն շոշափելի դիրքեր ուներ Թուրքիայի էկոնոմիկայում, պետական ապարատում և բանակում: Այստեղ գործում էին 60 գերմանական բանկեր և բանկային դրասենյակներ («Deutsche Bank», «Deutsche-Orient Bank», «Deutsche-Palestina Bank» և ուրիշներ):

<sup>1</sup> Г. И. Канчев, Турецкое наследство и мировая война, Петроград, 1917, стр. 68.

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր, 1951, հատ. 22, էջ 318:

Գերմանական մոնոպոլիաներին էին պատկանում Ադանայի ու Էրեզլիի ածխի հանքերը, Ալեքսանդրեպոլիսի նավահանգիստը, Ադանայի դաշտավայրի ուռդիչ սիստեմը և մի շարք ուրիշ մեծ ու փոքր արդյունարերական ձեռնարկություններ: Գերմանական մոնոպոլիաները սկսել էին ներթափանցել նաև երկրի գյուղատնտեսության մեջ: Նրանք ստացան Օսմանյան կայսրության տերիտորիայում գյուղատնտեսական գաղութներ կազմակերպելու իրավունք: Այսպիսի գաղութներ հիմնվեցին Պաղեստինում, Թվով հինգը, որոնք ունեին 624 գերմանացի վերլարնակիչներ<sup>3</sup>:

Այդ ժամանակ Կոստանդնուպոլսում գերմաներեն լեզվով թերթ էր լույս տեսնում: Գերմանիայի ազդեցությունն ուժեղ էր անանձնապես թուրքական բանակի վրա: Թուրքական կառավարության հրավերով<sup>4</sup> բանակի վերադիման համար Թուրքիա ժամանեց գերմանական ղինվորական միսիա՝ գեներալ Ֆոն դեր Գոլցի գլխավորութեամբ, իսկ հետո՝ գերմանական գեներալ Լիման Ֆոն Սանդերսը: Վերջինը փաստորեն ամբողջութեամբ իր ձեռքը վերցրեց Օսմանյան կայսրության ղինված ուժերի հրամանատարությունը: Լիման

<sup>3</sup> В. А. Кряжун, Национально-освободительное движение на Ближнем Востоке, М., 1923, стр. 12.

<sup>4</sup> P. Baudin, La Turquie et les Ottomans, Paris, 1896, p. 106. Ընդդժումը մերն է—Ռ. Կ.:

Ֆոն Սանդերսի միախաչի գործունեությունը թուրքական բանակում հանդիսացավ առաջին համաշխարհային պատերազմին՝ Գերմանիայի օգտին Օսմանյան կայսրության մասնակցելու պատճառներից մեկը:

Ինչպես Վ. Ի. Լենինն էր գրում 1917 թ. սկզբում «Գերմանիան այս բոլեիս թուրքիային վերածել է իր թե՛ ֆինանսական, թե՛ ռազմական վասալի»<sup>5</sup>:

Գերմանական իմպերիալիզմի քաղաքականությունը թուրքիայում ու թուրքական կառավարողների՝ «երիտասարդ թուրքերի» գերմանասիրական քաղաքականությունը երկիրն ու նրա ժողովրդին կանգնեցրեց ազդային կործանման անդունդի առաջ: Օսմանյան կայսրությունն իր պատմության մեջ չտեսնված պարտություն կրեց ու դադարեց գոյություն ունենալուց:

Թուրքիան ազդային կործանումից փրկվեց: Թուրք աշխատավոր մասսաների՝ երկրի ազատության ու անկախության համար մղած անձնվեր պայքարի շնորհիվ, ստեղծվեց նոր պետական ձև՝ բուրժուական ռեսպուբլիկա: Այդ կատարվեց միայն ու միայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի ամենահաղթ դադափարների ազդեցության տակ:

Առաջին համաշխարհային պատերազմում

<sup>5</sup> Վ. Ի. Լենին, Ընտիր Երկեր, 1951, հատ. 23, էջ 235:



կրած պարտության պատճառով Գերմանիան կորցրեց իր նախկին դիրքերը գաղութներում և ուրիշ վայրերում, ինչպես նաև Թուրքիայում: Թուրքական ռեսպուբլիկայի կառավարութունն անցավ ետաթիզմի՝ պետական կապիտալիզմի քաղաքականության ու սկսեց ետ գնել բոլոր օտարերկրյա, այդ թվում նաև գերմանական մոնոպոլիստական կապիտալին պատկանող ձևոնարկութունները՝ 62 միլիոն Թուրքական լիրա (այսուհետև թ. լիրա—Ռ. Կ.) ընդհանուր դրամագլխով<sup>6</sup>: Սակայն համեմատաբար կարճ ժամանակամիջոցից հետո Գերմանիան վերսկսեց իր նվաճողական ակտիվ քաղաքականութունը Թուրքիայում:

1928 թվականին Թուրքիա այցելեց Գերմանիայի էկոնոմիկայի մինիստր ու կայսերական բանկի գլխավոր Շախտը, որը մշակեց Թուրքիայի տնտեսության վրա գերիշխելու պլան: Այս պլանի էութունը հետևյալն էր. նախ և առաջ, բացառապես դյուղատնտեսական ապրանքներ ու արդյունաբերության համար հումք արտադրող Արև-վելքի երկրներում այդ ապրանքների արտահանումը դարձել էր անհրաժեշտութուն: Երկրորդ այդ երկրները շէին կարող սպասել առավել հարմար ժամանակի ու այդ ապրանքների պաշար

<sup>6</sup> R. Cenani, Foreign Capital Investments in Turkey, Istanbul, 1958, p. 10.

կուտակել: Այնուհետև, քանի որ այդ երկրների  
Ֆինանսները թույլ էին ու եկամուտները քիչ,  
նրանք ստիպված էին այդ ապրանքները վաճառել  
առանց հետաձգման, իսկ Գերմանիան ի վիճակի  
էր. գնելու նրանց արտադրանքի մեծ մասը, այն էլ  
կայուն ու ավելի բարձր գներով, քան համաշխարհ-  
հային գներն էին<sup>7</sup>: Սակայն գերմանական կապի-  
տալի ներխուժումը Թուրքիա ուժեղացավ հատկա-  
պես Գերմանիայում ֆաշիստական կարգեր հաս-  
տատելուց հետո: Ճիշտ է, թեև գերմանական  
մոնոպոլիստական կապիտալը Թուրքիայում անց-  
կացվող ետաթիզմի քաղաքականության պատճա-  
ռով զրկված էր ուղղակի կապիտալ ներդրումներ  
կատարելու հնարավորությունից, այնուամենայ-  
նիվ մի շարք գերմանական ֆիրմաներ ստացան  
արդյունաբերական ձեռնարկությունների, է եկ-  
տրակայանների, երկաթուղային ու ավտոմոբիլա-  
յին ճանապարհների շինարարության պատվերներ:

Այսպես, օրինակ՝ Ուշաքում և Ալիուլույում  
կառուցվող շաքարի գործարանների շինարարու-  
թյան համար գերմանական «Մաշինեն-Ֆաբրիկեն  
Բյուրգաու Ռ. Վոլֆ Ա. Գ.» ֆիրման Թուրքիային  
տրամադրեց համապատասխան սարքավորում և  
մասնագետներ: Նույն ձևով գերմանական ֆիր-  
մաները տեքստիլ գործարաններ կառուցեցին էրեզ-

<sup>7</sup> Yves Fanchon et Maurice Leruth, L'Allemagne  
et le Moyen-Orient, Paris, 1957, p. 14.

լիում; Մալաթիայում ու Բարբրջոյում: Բայց առաւել խոշոր արդյունաբերական կառույցը, որի շինարարութեան պատվերը ստացաւ Գերմանիան, դա Կարաբյուքի մետալուրգիական կոմբինատն էր: Վերջինիս շինարարութեանը (1937—1939 թթ.) իրագործվեց Կրուպպի կոնցերնի նախադժով, սարքավորումով ու մասնագետների հսկողութեամբ, բայց՝ անգլիական վարկի հաշվին:

Գերմանական մոնոպոլիստական կապիտալը ձգտում էր արդյունաբերական շինարարութեանից ստացած իր շահույթների պակասը լրացնել առևտրական ներխուժման միջոցով: 1930—1933 թթ. ընթացքում Թուրքիայի ներմուծման մեջ Գերմանիայի բաժինը տարեկան աճում էր ընդամենը 2—3 տոկոսի շափով: Գերմանիայի արտահանումը Թուրքիա 1933 թվականին կազմեց 25,5 տոկոս՝ 1930 թվականի 18,7 տոկոսի դիմաց, իսկ ներմուծումը՝ 18,9 տոկոս, 1930 թվականի 13,1 տոկոսի դիմաց<sup>8</sup>:

1933 թ. օգոստոսին երկու երկրների միջև կնքվեց առաջին կլիրինդային առևտրական պայմանագիրը, որից հետո ֆաշիստական Գերմանիայի արտահանումը Թուրքիա սկսեց աճել տարեկան 6—8 տոկոսով: Արդեն 1936 թվականին, Գերմանիայի արտահանումը Թուրքիա կազմում

<sup>8</sup> Yves Famchon et Maurice Leruth, *ibid*, p. 16.

էր վերջինին ներմուծման 46,4 տոկոսը<sup>9</sup>: 1933—1936 թթ. ընթացքում աճում է նաև Գերմանիայի ներմուծումը Թուրքիայից, տարեկան 10—13 տոկոսի շափուլ: Այսպես օրինակ՝ 1936 թվականին Թուրքիայի արտահանման մեջ Գերմանիայի բաժինը կազմեց 51 տոկոս, իսկ 1938 թվականին՝ 43 տոկոս<sup>10</sup>: Չնայած այն հանգամանքին, որ 1938 թվականին գերմանա-թուրքական առևտուրը տոկոսային հարաբերությամբ վերցրած ավելի ցածր էր, քան 1936 թվականի մակարդակը, այնուամենայնիվ Գերմանիան դրավում էր առաջին տեղը Թուրքիայի ներմուծման ու արտահանման մեջ: Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին Գերմանիայի բաժինը կազմում էր Թուրքիայի ներքին ու արտաքին առևտրի համարյա կեսը:

Գերմանիան իր ստրատեգիական պաշարները լրացնելու նսլատակով Թուրքիայից մեծ քանակությամբ ներմուծում էր քրոմ, պղինձ, երկաթ, բամբակ, բուրդ, ինչպես նաև մրգեղեն, հացահատիկ, ծխախոտ և ուրիշ ապրանքներ, իսկ Թուրքիա արտահանում էր արդյունաբերական սարքավորում, էլեկտրատեխնիկական ու տեքստիլ ապրանքներ և այլն: Հարկ է մասնավորապես շեշտել այն, որ գերմանական ֆիրմաները Թուրքիա-

<sup>9</sup> Yves Famchon et Maurice Leruth, *ibid*, p. 16.

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 20:

յից ներմուծած գյուղատնտեսական ապրանքների  
որոշ մասը արտահանում էին ուրիշ շուկաներ և  
նրանց շահույթները գրաւանում:

Գերմանիան կարողացավ իր ազդեցութեանը  
տարածել նաև թուրքական բանակի վրա: Այդ տա-  
րիներին բանակի վերազինման ու ռազմական օր-  
ջեկտների կառուցման համար թուրքական կառա-  
վարութեանը գերմանական զինվորական մասնա-  
գեաներ հրավիրեց<sup>11</sup>: Միաժամանակ պետք է նշել,  
որ թուրքական բանակի վերազինումն էլ հիմնա-  
կանում կատարւում էր Գերմանիայից ներմուծ-  
ւած զենքի հաշիւին:

Ֆաշիստական Գերմանիայի ազդեցութեանը  
Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականու-  
թյան վրա սկսեց ուժեղանալ երկրորդ համաշ-  
խարհային պատերազմի նախօրյակին: 1941 թվա-  
կանի հունիսի 18-ին՝ Սովետական Միութեան  
վրա սխտադրուժ կերպով հարձակւիլու նախօր-  
յակին, Գերմանիան Թուրքիայի հետ կնքեց պայ-  
մանագիր 10 տարի ժամկետով, որը վերջինին  
ներքաշեց Գերմանիայի ագրեսիւլ արտաքին քա-  
ղաքականութեան հորձանուտի մեջ: Այդ նույն  
թվականի հոկտեմբերին երկու երկրների միջև  
առևտրական նոր պայմանագիր կնքվեց, որի հա-  
մաձայն Գերմանիան քրոմի հանքանյութի դիմաց

<sup>11</sup> Aziz Hanksi bey, Turcs et Atatürk, Caire, 1939, p.  
87. Ընդդժումը վերն է—Ռ. Կ.:

Թուրքիա պետք է արտահաներ պողպատ և ուղ-  
մական հանդերձանք:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժա-  
մանակաշրջանում Թուրքիան Գերմանիային մա-  
տակարարում էր մեծ քանակությամբ գյուղա-  
տնտեսական հումք և հանքային հանածոներ:  
Գերմանիան ուշադրություն էր դարձնում հատկա-  
պես քրոմի հանքանյութի ներմուծմանը:

Գերմանա-թուրքական առևտուրը, որը 1940  
և 1941 թվականներին բավականաչափ ընկել էր  
նախորդ տարիների համեմատությամբ [11,9 տո-  
կոս և 12 տոկոս Թուրքիայի ներմուծման մեջ և  
8,7 տոկոս ու 21,8 տոկոս արտահանության մեջ],  
1943 թվականին հասավ 38,1 տոկոսի՝ ներմուծ-  
ման և 23,7 տոկոսի արտահանության մեջ<sup>12</sup>: Դրա-  
նից հետո գերմանա-թուրքական առևտուրը նորից  
ընկավ:

Թուրքիայում իրենց եռանդուն գործունեու-  
թյունն էին ծավալում նաև գերմանական, հատ-  
կապես Գերմանական-արևելյան և Գերմանական-  
Հոլանդական բանկերը:

Ֆաշիստական Գերմանիան Թուրքիայում վեր-  
ջինիս պատերազմի մեջ ընդգրկելու նպատակով  
լայն պրոպագանդա էր ծավալում:

Պատերազմի ժամանակ այստեղ գործում էին  
գերմանական վեց հեռադրական գործակալու-

<sup>12</sup> Yves Fanchon et Maurice Leruth, *ibid*, p. 21,

թշուեններ, որոնցից երկուսը՝ «Տրանսկոնտինենտ  
պրեսսը» և «Նախրիխտեն պրեսսդիենտը» հրա-  
տարակում էին ամենօրյա բյուլետեններ Անկա-  
րայում, Ստամբուլում, Իզմիրում և Էրզրումում<sup>13</sup>։  
Թուրքիայում Գերմանիան հրատարակում էր  
«Թյուրքիշե պոստ» թերթը ու իր հսկողութչան տակ  
էր պահում ֆրանսերեն լեզվով լույս տեսնող «Էր  
Բեշդղու» և «Իսթանբուլ» թերթերը։ Այստեղ տա-  
րածվում էին նաև «Ֆյուլկիշե բեռախատեր» և «Ալ-  
գեմաչնե ցայտունդ» թերթերը։

Պատերազմի պսիխոլոգի ասեղծման ու Գեր-  
մանիայի ժամանակավոր ռազմական հաջողու-  
թշուենների փառաբանման գործում գերմանական  
մամուլից ետ շէր մնում Ստամբուլում գտնվող  
նաև «Տեառնիա» ակումբը։

Պատերազմի ընթացքում Թուրքիայում էին  
գտնվում մեծ թվով գերմանական ղինվորական  
հրահանգիչներ, որոնք ղինվորական կցորդ գեներ-  
ալ Ռոզեի ու ծովային կցորդ ծովակալ Մարվիցի  
պլիսավորութչամբ թուրքական բանակը պատ-  
րաստում էին ռազմական գործողութշուենների։  
Գերմանական գործակալներն ուղղակի վիստում  
էին սովետա-թուրքական սահմանի վրա և երկրի  
տերիտորիան օդապործում հակասովետական  
գործողութշուենների համար։

Նրանք սերտ կապեր հաստատեցին նաև

<sup>13</sup> Yves Fanchon et Maurice Leruth, *ibid*, p. 30–31.

պանթուրքիստական տարրերի հետ, որոնց օգտագործում էին Սովետական Միության դեմ քայքայիչ գործունեություն ծավալելու ուղղությամբ:


Ֆաշիստական Գերմանիան ջանք չէր խնայում Թուրքիային Սովետական Միության դեմ պատերազմի մեջ ներգրավելու համար: Այդ նպատակով Ֆոն Պապենը Թուրքիային խոստացավ Սովետական Հայաստանը և Սովետական Ադրբեջանը ու Բրիտանական կայսրության «չուզալի կտորները»<sup>14</sup>: Թուրքական կառավարողներն էլ իրենց հերթին հաճույքարար կատարում էին դերմանական դեսպանությունից ստացվող բոլոր ցուցումները, որովհետև դրանք համապատասխանում էին նաև իրենց նպատակներին: Թուրքիայի կառավարող շրջանները հուշս ունեին, որ Գերմանիայի հաղթանակի դեպքում իրենց կհաջողվի հետ դրավել Օսմանյան կայսրությանը պատկանած հողերը: Թուրքիան խախտում էր իր կողմից հռչակված «չեզոքությունը»: Այսպես օրինակ՝ թուրքական իշխանությունները թուլատրում էին գերմանական ռազմականներին ազատ կերպով անցնել Սև ծով, որով վտանգ էր ստեղծվում ՍՍՌՄ-ի սևծովյան ափերի համար: Այնուհետև գերմանական ռազմականները հնարավորություն

<sup>14</sup> Տե՛ս В. А. Секистов, Странная война в Западной Европе и в бассейне Средиземного моря (1939—1943), М., 1958, стр. 194,



ունեցան սևծովյան նեղուցները ազատ օգտա-  
գործել իրենց փախուստի համար: Դա ոչ միայն  
«չեղոքության» խախտում էր, այլ նաև սևծովյան  
նեղուցների միջազգային-իրավական ռեժիմի կո-  
պիտ խախտում:

Թուրքական բանակի մեծ մասը կենտրոնաց-  
ված էր սովետա-թուրքական սահմանի վրա: Այդ  
պատճառով Սովետական Միությունը ստիպված  
էր դիմված ուժեր պահել Անդրկովկասում, այն  
ժամանակ, երբ սովետական այդ զորամասերը  
կարող էին հաջողությամբ օգտագործվել պատե-  
րազմի ճակատներում: Թուրքիան փաստորեն  
մասնակցեց երկրորդ համաշխարհային պատե-  
րազմին՝ ընդդեմ Սովետական Միության ու հա-  
կաֆաշխատական կոալիցիայի մյուս պետություն-  
ների: Դեռ ավելին, թուրքական կառավարողները  
Սովետական Միության վրա ուղղակի ռազմական  
հարձակում գործելու պլաններ էին մշակում:  
Սակայն այդ պլանները հօդս ցնդեցին Վոլգոգրա-  
դի պատերի տակ դերմանական բանակի աննախ-  
ընթաց պարտությունից հետո: Թուրքական կառա-  
վարողների համար պարզվեց, որ Գերմանիան  
պատերազմն անվերադարձորեն տանուլ է տա-  
լիս: Վերհիշելով առաջին համաշխարհային պա-  
տերազմում Գերմանիայի օգտին Օսմանյան կայս-  
րության մասնակցության դառն ճակատադիրը,  
նրանք որոշեցին հարձակվել ՄԱՄ-ի վրա:



Պարզ էր նաև, որ Թուրքիայի մասնակցութիւնը պատերազմին, նրան կարժանացներ Գերմանիայի բախտին<sup>15</sup>: Այս հարցում անհրաժեշտ է նկատի ունենալ նաև հետևյալ հանդամանքը: Արևմտյան երկրները՝ ԱՄՆ-ը և Անգլիան երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում ամեն կերպ ջանում էին Թուրքիային իրենց կողմը ներքաշել: Այդ նպատակով ԱՄՆ-ը Թուրքիային տրամադրեց օգնութիւն լենդ-լիդի գծով, շնայած այն բանին, որ դա լենդ-լիդի մասին օրենքի խախտում էր, քանի որ Թուրքիան չէր պատերազմում Գերմանիայի դեմ: Այնուհետև ԱՄՆ-ը և Անգլիան Թուրքիային տրամադրեցին գենք ու ազմական հանդերձանք, ինչպես նաև ֆինանսական օգնութիւն: Անգլիայի ու Թուրքիայի, իսկ

<sup>15</sup> Ի դեպ այժմ հայտնի է դարձել, որ ֆաշիստական Գերմանիան այդ ժամանակ մտադիր է եղել հարձակվելու Թուրքիայի վրա: Հարձակումը նախատեսված էր 1943 թվականի ամռանը, իսկ հարձակման պլանը («Անատոլիական օպերացիա») մշակված էր դեռևս 1940 թվականի աշնանը գերմանական բանակի ցամաքային ուժերի գլխավոր շտաբի օպերատիվ վարչութիւնն պետ՝ պատերազմի հանցագործ, գեներալ Հոյզինգերի կողմից (Տե՛ս «Труд», 24 декабря 1960 года): Ֆաշիստական Գերմանիայում մշակվել էր նաև Թուրքիան հրեաներին ջարդելու պլան: Ինչպես տեսնում ենք Թուրքիայի օկուպացումը ձախողվեց սովետա-գերմանական հակառակ գերմանական բանակի պարտութիւն հետևանքով:


հետո ԱՄՆ-ի, Անգլիայի ու Թուրքիայի պետական գործիչները Ադանայի (1943 թվականի հունվար) և Կահիրեի (1943 թվականի դեկտեմբեր) կոնֆերանսներում քննարկեցին Թուրքիայի արտաքին քաղաքականության հարցը: Դրանից հետո 1944 թվականի օգոստոսին Թուրքիան խզեց իր դիվանագիտական ու տնտեսական կապերը Գերմանիայի հետ, իսկ այնուհետև՝ 1945 թվականի փետրվարի 23-ին պատերազմ հայտարարեց նրան: Պատերազմի հայտարարումից հետո թուրքական կառավարությունը բռնագրավեց գերմանական սեփականությունն ավելի քան 100 մլն. արևմտագերմանական մարկ (այսուհետև մարկ—Մ. Հ.) արժողությամբ՝ 1961 թվականի կուրսով:

Թուրքիան ֆաշիստական Գերմանիային ձևական պատերազմ հայտարարեց ապագայում միջազգային մեկուսացումից խուսափելու և Միավորված ազգերի կազմակերպության Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսին մասնակցելու իրավունք ստանալու<sup>16</sup>, այսինքն ՄԱԿ-ի անդամ դառնալու նպատակով:

Սովետական Միության վրա չհարձակվելու և Գերմանիային պատերազմ հայտարարելու թուրքական կառավարողների քաղաքականությունը լիովին համապատասխանում էր ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության նպատակներին՝ ետպա-

<sup>16</sup> „The Middle East 1959“, London, 1959, p. 300.

տերազմյան ժամանակաշրջանում Թուրքիան օդ-  
ատործել որպես ռազմա-քաղաքական պլանց-  
դարմ ՍՍՌՄ-ի դեմ:



Երկրորդ համաշխարհային պատերազմում  
դերմանական ֆաշիստական իմպերիալիզմի պար-  
տուժյունից հետո ՍՍՌՄ-ը, ԱՄՆ-ը ու Անգլիան  
1945 թվականի օգոստոսին Պոտսդամում ստո-  
րագրեցին համաձայնագիր՝ Գերմանիայի ապա-  
դա տնտեսական ու քաղաքական կացութաձևի  
վերաբերյալ: Այնուհետև այդ համաձայնագրին  
միացավ Ֆրանսիան: Պոտսդամյան համաձայնա-  
գիրը նախատեսում է ամբողջ Գերմանիայի զի-  
նաթափում և տալառազմականացում, միլիտարիզ-  
մի ու նացիզմի մեկընդմիջտ լիկվիդացում ու  
քաղաքական կյանքի դեմոկրատացում: Համա-  
ձայնագիրը միաժամանակ նախատեսում է մո-  
նոպոլիստական միավորումների՝ կարտելների,  
սինդիկատների, տրեստների ու կոնցերնների լիկ-  
վիդացում, որոնք կրում են երկու համաշխար-  
հային պատերազմների սանձազերծման գլխավոր  
ուսատասխանատու լինելը:

Բայց շուտով ԱՄՆ-ը և արևմտյան մյուս եր-  
կրրները կոպիտ կերպով խախտեցին պոտսդամ-  
յան համաձայնագիրը ու սկսեցին վարել գերմա-  
նական ռազմամուլ-մոնոպոլիստական միավոր-

բուճանների սլահապանման, վերականգնման ու հետադա հղորացման՝ գերմանական ժողովրդի համար ազդային մեծ շարիքաբեր քաղաքականություն:

Ամերիկայի Միացյալ Նահանգները Ռուսի մագնատների հղորության վերականգնման նպատակով մշակեցին և իրագործեցին մի շարք սլահաններ, ինչպես՝ Մարշալի սլահանը և Շումանի սլահանը, Հյուսիս-ատլանտյան ազրեսիվ խմբավորման կազմակերպման ու բունդեսվերի վերածրնման և այլ սլահաններ:

Ամերիկյան իմպերիալիզմը վերոհիշյալ սլահանների շրջանակներում ֆինանսական մեծ օգնություն տրամադրեց արևմտադերմանական մոնոպոլիստների:

1945—1956 թվականների ընթացքում ԱՄՆ-ը Արևմտյան Գերմանիային տրամադրեց 3,8 միլիարդ դոլլարի ուղղակի տնտեսական «օգնություն»: Այս գումարի մեջ չի մտնում 700 մլն. դոլլարի այն տնտեսական «օգնությունը», որ ԱՄՆ-ը տրամադրել էր այդ նույն ժամանակաշրջանում Արևմտյան Բեռլինին: Արևմտյան երկրների ու հատկապես ԱՄՆ-ի մոնոպոլիստական կապիտալի օժանդակությամբ Արևմտյան Գերմանիայի արդյունաբերական արտադրանքի ծավալը ոչ միայն վերականգնվեց, այլև նախապատերազմյան ամբողջ Գերմանիայի համեմատությամբ ավելի քան երկու անգամ աճեց:

Արևմտյան Գերմանիայի տնտեսական հզորության վերականգման պատճառները բացահայտելով ընկ. Խրուշչովը, պարտիայի XXII համագումարի քննարկմանը ներկայացված ՍՄԿՊ Կենտկոմի հաշվետվության մեջ, նշում էր հետևյալը.

«Նոստալերազմյան տարիներին ԱՄՆ-ի մոնոպոլիաները հսկայական կապիտալներ ներդրեցին Արևմտյան Գերմանիայի և Ճապոնիայի էկոնոմիկայի մեջ: Այդ երկու երկրները մի շարք տարիներ փաստորեն ազատվեցին սեփական ազդման ծախսերի բեռից, քանի որ ԱՄՆ-ը նրանց սպառազինություն էր մատակարարում ամերիկյան վարկատուների հաշվին: Արևմտյան Գերմանիան և Ճապոնիան հսկայական կապիտալ ներդրումներ կատարեցին իրենց էկոնոմիկայի զլխավոր ճյուղերում՝ մշտական կապիտալը նորացնելու, ժամանակակից հիմքի վրա արտադրությունը վերակազմելու նպատակով: Դրա հետևյալնքով նրանք արդեն այժմ համաշխարհային շուկայում հանդես են գալիս որպես Անգլիայի, Ֆրանսիայի ու Նույնիսկ Ամերիկայի Միացյալ Նահանգների լուրջ մրցակիցներ»<sup>17</sup>:

Արդյունաբերական արտադրանքի ծավալով Բոննի Ռեսպուբլիկան արդեն հասել է Անգլիային,

17 Ն. Ս. Խրուշչով, ՍՄԿՊ Կենտկոմի հաշվետվությունը պարտիայի XXII համագումարին, 1961, էջ 24:

իսկ արտահանման ասպարեզում՝ նույնիսկ առաջ  
անցել նրանից<sup>18</sup>։

Արևմտադերմանական մոնոպոլիաները վե-  
րահանգնել են իրենց առևտրական դիրքերը ոչ  
միայն այն շուկաներում, որտեղից նրանք դուրս  
էին մղվել երկրորդ համաշխարհային պատերազ-  
մի ընթացքում ամերիկյան ու անգլիական կա-  
պիտալի կողմից՝ Արևմտյան Նվլբուրա, հյուսիսա-  
յին ու հարավային Ամերիկա, այլև ներխուժում  
են նոր երկրներ, հատկապես Մերձավոր ու Մի-  
ջին արևելք, հարավ-արևելյան Ասիա ու Աֆրիկա։

Արևմտյան Գերմանիայի արտաքին առևտրա-  
կան էքսպանսիայի հաջողութունը բացատրվում  
է մի շարք գործոններով։

Առավել կարևոր գործոնը՝ արևմտադերմա-  
նական ապրանքների էժան լինելն է անգլիական  
ու մասամբ, նույնիսկ ամերիկյան ապրանքների  
համեմատ։ Նրանք ունեն բարձր որակ ու մատա-  
կարարվում են համեմատաբար կարճ ժամկետ-  
ներում։ Այնուհետև, արևմտադերմանական կա-  
ռավարութունն ու մոնոպոլիաները վարկային  
ավելի հարմար պայմաններ են ստեղծում արտա-  
քին առևտրի համար, քան ԱՄՆ կամ Անգլիան։  
Արտաքին առևտրի հաջողությանը նպաստում է  
նաև այն հանգամանքը, որ արևմտադերմանական  
արդյունաբերութունն առայժմ այնքան էլ ծան-

18 Ն. Ա. Խրուշչով, նույն տեղում, էջ 24։

բարեւոնված շէ՛ ուղղմական սլառվերներով, ինչ-  
պես մշուս կապիտալիստական մեծ երկրները,  
ուստի հնարավորութիւնն ունի ժամանակին կա-  
տարելու իր սլաշմանադրային սլառվերները և  
այլն:

Պատերազմի դերմանական մի շարք միջադ-  
րային հանցագործներ, ինչպիսիք են Ֆոն Պա-  
պենը ու հատկապես Շախտը, եռանդուն արտա-  
քին. տնտեսական գործունեութիւնն են քարոզում  
և ծավալում: Այս ասպարեզում նրանցից ետ շեն  
մնում Արևմտյան Գերմանիայի պետական գոր-  
ծիչներ Ադենաուերը, էրհարդը և ուրիշները:

Համաշխարհային միասնական շուկայի տրոհ-  
ման, սոցիալիստական ու կապիտալիստական  
համաշխարհային շուկաների առկայութեան սլաշ-  
մաններում անգլիական, ամերիկյան ու արևմտա-  
դերմանական մոնոպոլիաների մրցակցութիւնը  
օրավուր ընդունում է սուր բնույթ: Այդ շեն թաքցը-  
նում նույնիսկ հիշված երկրների կառավարողներն  
ու բուրժուական մամուլը:

Բացի իրենց ուղղմա-արդյունաբերական հզո-  
րութեան վերականգնումից ու նրա հետագա  
ընդարձակումից, արևմտադերմանական մագնատ-  
ները լայն մասշտաբի միջոցառումներ են գոր-  
ծադրում նաև զինված ուժերի՝ բունդեսլերի վերա-  
կանգնման և այն նորագուն ուղղմական տեխնի-  
կայով զինելու նպատակով: Ուժեղանում են ռեակ-



ցիացի դիրքերը երկրի ներսում: Կարելի է հա-  
մարձակ կերպով պնդել, որ Արևմտյան Գերմա-  
նիայում ներքաղաքական կյանքն ընթանում է  
դեպի ֆաշիզմ: Բոննի կառավարութունը հենվե-  
լով մոնոպոլիստական միավորումների ու արև-  
մբտյան երկրների կառավարող շրջանների աջակ-  
ցության վրա, վարում է Արևմտյան Գերմանիան  
պատերազմի սլացդարմի վերածելու, Գերմա-  
նիայի պառակտումը խորացնելու, սահմանների  
վերանայման ու սկանչիզմի քաղաքականութուն:

ԱՐԵՎՄՏԱԴԵՐՄԱՆԱԿԱՆ ՄՈՆՈՊՈԼԻԱՆԵՐԻ  
ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱ

Ինչպես վերևում նշվեց, Ռուրի ռազմամուլ մագնատները ներխուժում են Արևմտյան Եվրոպայի, հյուսիսային ու հարավային Ամերիկայի, հարավ-արևելյան Ասիայի, Աֆրիկայի ու մասնավորապես Մերձավոր ու Միջին արևելքի երկրները:

Մերձավոր ու Միջին արևելքում արևմտադերմանական մոնոպոլիստական կապիտալի ներխուժմանն աջակցելու նպատակով ԳՖՌ-ի պետական գործիչները ու խոշոր մոնոպոլիաների ներկայացուցիչները հաճախակի ուղևորություններ են կատարում դեպի այդ երկրները: 1955 թ. ապրիլին Արևմտյան Գերմանիայի Ստամբուլում հրավիրեց Մերձավոր ու Միջին արևելքում հավատարմագրված իր դեսպանների առաջին խորհրդակցությունը: Խորհրդակցության ժամանակ դեսպանները հանդես եկան իրենց աշխատանքը կոորդինացնելու վերաբերյալ միջոցառումների առաջարկներով և մշակեցին հետագա համատեղ աշխատանքի պլան: Արևմտյան Գերմանիայում հիմնվեց «Մերձավոր ու Միջին արևելքի Ընկերու-

թյուն» («Nah-und Mitteleost Verein») դ-ր Ռեյն-  
գարդ Հյուբերի գլխավորութչամբ (Համբուրգ)՝  
Այս ընկերութչունը, փաստորեն, Գերմանական-  
Արևելյան ընկերութչյան ժառանգորդն է, որը հիմնը-  
վել էր Ֆաշիզմի իշխանութչյան գլուխ անցնելուց  
հետո՝ 1934 թվականին: Այն միավորում է աշ-  
խարհի այս մասում գործող արևմտագերմանա-  
կան մոնոպոլիաներն ու բանկերը:

Վերոհիշյալ ընկերութչունը գրառվում է Մեր-  
ձավոր ու Միջին արևելքի երկրների տնտեսութչյան  
ու առևտրի ուսումնասիրութչյամբ ու նրանց հետ  
առևտրի համար երաշխավորութչուններ է տալիս  
արևմտագերմանական մոնոպոլիաներին: Այս ըն-  
կերութչունը 1956 թվականի սեպտեմբերի 29-ից  
մինչև հոկտեմբերի 14-ը Համբուրգում ցուցահան-  
դես կազմակերպեց նվիրված Մերձավոր ու Մի-  
ջին արևելքին:

«Մերձավոր ու Միջին արևելքը երեկ և այսօր»  
կոչվող այդ ցուցահանդեսին մասնակցում էին  
մերձավորարևելյան տասը պետութչուն, Թուր-  
քիան, Իրանը, Եգիպտոսը, Իրաքը և այլն:

Ցուցահանդեսը ֆինանսավորվեց ԳՖՌ-ի էկո-  
նոմիկայի մինիստրութչյան, Համբուրգի քաղաքա-  
պետութչյան ու 85 մասնավոր ֆիրմաների ու բան-

---

Վ Ռ. Հյուբերը մահացել է 1959 թվականին Ստամբու-  
լում:

կերի կողմից (Կրուպալ, Կլյուկներ, Մաննեսման և  
ուրիշներ): Ցուցահանդեսում ելույթ ունեցավ նաև  
Ֆոն Պապենը, որը հատկապես շեշտեց ԳՖՌ-ի ու  
Մերձավոր ու Միջին արևելքի երկրների տնտեսա-  
կան հարաբերությունների աճող կարևորությունը<sup>2</sup>:

Բռննում լույս է տեսնում հատուկ շարաթա-  
թերթ, որը լուսարանում է Արարական Արևելքի  
տնտեսական խնդիրները՝ «Wirtschafts-Inforna-  
tionen aus der arabischen Welt» («Արարական  
աշխարհի տնտեսական տեղեկագիր»)՝<sup>3</sup>:

Արևմտյան Գերմանիան ակտիվ առևտրական  
գործունեություն է ծավալում Մերձավոր ու Միջին  
արևելքի շուկաներում: Արևմտադերմանական  
մոնոպոլիաները Մերձավոր ու Միջին արևելքի  
երկրներն են արտահանում արդյունաբերական  
դանադան սարքավորում, առևտրական ու մարդա-  
տար նավեր, ավտոմոբիլներ, թեթև արդյունաբե-  
րության ապրանքներ և այնտեղից ներմուծում  
նավթ, քրոմի հանքանյութ, պղինձ, երկաթ, հա-  
ցահատիկային կուլտուրաներ, բամբակ, բուրդ և  
այլն: Արևմտյան Գերմանիայի արտահանումը  
դեպի Մերձավոր ու Միջին արևելք 1956 թվակա-  
նին կազմեց նրա ընդհանուր արտահանության

---

<sup>2</sup> „Moniteur officiel du commerce et de l'industrie“,  
1956, 22 novembre, p. 3751.

<sup>3</sup> „Middle Eastern Affairs“, 1956, january, p. 12.

5,4 տոկոսը, իսկ ներմուծումը՝ նրա ընդհանուր ներմուծման 5,4 տոկոսը<sup>4</sup>:

Ա Ղ յ Ո Ն Ս Ա Կ 1

Արևմտյան Գերմանիայի ներմուծումը Մերձավոր ու Միջին արևելքի երկրներից (մլն. դոլլարով)<sup>5</sup>

Երկրները	1950	1951	1952	1953	1954	1955	1956
Եգիպտոս	23,5	24,5	30,4	25,3	33,6	32,0	25,8
Իրաք	18,2	32,9	40,3	36,2	43,1	57,1	61,9
Սիրիա	1,1	1,3	3,6	0,8	21,0	9,3	12,2
Լիբանան	1,1	1,1	0,6	9,8	0,8	1,9	2,9
Իսրայել	0,02	0,01	0,1	1,8	0,8	2,0	5,7

Ա Ղ յ Ո Ն Ս Ա Կ 2

Արևմտյան Գերմանիայի արտահանումը Մերձավոր ու Միջին արևելքի երկրները (մլն. դոլլարով)<sup>6</sup>

Երկրները	1950	1951	1952	1953	1954	1955	1956
Եգիպտոս	19,1	29,7	38,4	54,5	46,9	54,5	61,6
Իրաք	0,3	2,3	4,7	9,0	15,9	20,5	26,4
Սիրիա	7,1	7,7	9,4	11,5	20,4	20,8	19,4
Լիբանան	7,1	3,9	11,4	14,9	13,7	17,4	20,9
Իսրայել	0,5	4,1	5,4	13,8	53,3	62,8	65,3

<sup>4</sup> „Middle Eastern Affairs“, 1957, august-september, p. 315.

<sup>5</sup> Ibid, 1956, january, p. 18, 1957, august-september, p. 315.

<sup>6</sup> Ibid, 1956, january, p. 18, 1957, august-september, p. 315.

Արևմտյան Գերմանիայի արտաքին առևտուրը Մերձավոր ու Միջին արևելքի երկրների հետ, արդեն 1953 թվականին, դերազանցեց նախապատերազմյան մակարդակը: Ինչպես հետևում է 1, 2 աղյուսակներից, Արևմտյան Գերմանիայի արտաքին առևտուրն աշխույժ բնույթ ունի Մերձավոր ու Միջին արևելքի հենց այն երկրների հետ (Եգիպտոս, Սիրիա, Լիբանան, Իսրայել, Իրաք) ուր երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ գերիշխում էր անգլիական ու ֆրանսիական կապիտալը:

Անդրադառնալով Արևմտյան Գերմանիայի առևտրական ներխուժմանը Մերձավոր ու Միջին արևելք ու այստեղ ծավալվող սուր մրցակցությանը ամերիկյան, անգլիական ու արևմտագերմանական մոնոպոլիաների միջև «Յունացտեդ Ստեյտս Նյուս ընդ ուտլդ ոխպորտ» հանգեսը գրում էր՝ «Պատերազմում կրած պարտությունից ուժ տարի հետո գերմանացիները Միջին արևելքում անցան Մեծ Բրիտանիայից ու մրցակցում են Միացյալ Նահանգների հետ: Գերմանական առևտրականները պայքարում են ամերիկացիների հետ այս շրջանում առաջին տեղը գրավելու համար: Գերմանական ֆիրմաները խլում են պատվերները ամերիկյան և անգլիական մրցակիցների ձեռքից»<sup>7</sup>:

<sup>7</sup> „United States News and World Report“, 1953, 30 october, p. 29.

Արևմտագերմանական մոնոպոլիաների ար-  
տաքին առևտրական էքսպանսիայի ընդարձակ-  
ման նախորդ գլխում արդեն հիշատակված դոր-  
ժոններից բացի Արևմտյան Գերմանիայի և Մեր-  
ձավոր ու Միջին արևելքի երկրների միջև առևտրա-  
կան հարաբերությունների ընդարձակման պատ-  
ճառներից մեկն էլ աչն է, որ ԱՄՆ-ի, Անգլիայի  
ու Ֆրանսիայի հեղինակությունն աշխարհի այն  
շրջանում այժմ ցածր է, քան երբևէ, որպիսի հան-  
դամանքից և օգտվում են արևմտագերմանական  
մոնոպոլիաները: «Ուսուղ տելեգրամ ընդ Սան»  
թերթը այս կապակցությամբ գրում էր. «Միջին  
արևելքում գերմանական ընկերությունները՝ գերա-  
կշռող դիրքի հասան այն կապակցությամբ, որ  
Սուեզի ճգնաժամից հետո արաբները շեն ուզում  
դորժ ունենալ ոչ անգլիացիների ու ֆրանսիացի-  
ների և ոչ էլ ամերիկացիների հետ»<sup>8</sup>:

Այժմ արդեն դադարել է գաղտնիք լինելուց  
այն, որ Արևմտյան Գերմանիան իրոք իր առջև  
հաղատակ է դրել արևմտյան երկրներին դուրս մղել  
Մերձավոր արևելքից ու զավթել նրանց դիրքերը:  
Այդ մասին վկայում է նաև Արևմտյան Գերմա-  
նիայի վիցե-կանցլեր ու տնտեսության մինիստր  
Էրհարդի 1958 թվականի դեկտեմբերին Կահիրե  
ուղևորվող արևմտագերմանական տնտեսական

<sup>8</sup> „World Telegram and Sun“, 1957, 4 may.

սլատվիրակութեան անդամներին արած հետևյալ հայտարարութեանը: «Գերմանիայի Ֆեդերալ սեպարելիկան պետք է գրավի այն տեղը, որը մինչև հիմա գրավում էին արևմտյան երկրները Միջին արևելքում ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական ասպարեզում»<sup>9</sup>:

Արևմտագերմանական մոնոպոլիաները ուժեղացնելով իրենց ներխուժումը Մերձավոր ու Միջին արևելք, իրենց առջև դնում են մի նպատակ ևս, ամեն կերպ խանգարել Սովետական Միութեան ու սոցիալիստական համաշխարհային սիստեմի մյուս պետութեանների տնտեսական համադործակցութեանը մերձավորարևելյան երկրների հետ<sup>10</sup>: «Դի վելտ» թերթը կոչ է անում արևմտագերմանական մինիստրներին հաճախակի այցելել Մերձավոր արևելքի երկրները, որպեսզի խանգարեն սոցիալիստական երկրների ազդեցութեան ծավալմանը աշխարհի այս մասում և որպեսզի թույլ ղարդացած երկրներում տնտեսական մրցակցութեան ասպարեզում հաղթեն կապիտալիստական և առաջին հերթին արևմտագերմանական մոնոպոլիաները:

Սակայն այդ թերթը միաժամանակ ստիպված խոստովանում է, որ եթե գերմանական մոնոպոլիաները ի վիճակի են պահպանելու իրենց դիր-

<sup>9</sup> „Blitz“, 1959, 28 march.

<sup>10</sup> „New Republic“, 1959, 12 january, p. 6.



քերը այստեղ, ապա մրցակցել ՄՍՌՄ-ի երկա-  
րատե վարկերի ու ցածր տոկոսների հետ, ի վի-  
ճակի շեն<sup>11</sup>:

Արևմտագերմանական մոնոպոլիաները, բա-  
ցի առևտրական էքսպանսիայից դեպի Մերձավոր  
ու Միջին արևելքի երկրները, այնտեղ կատարում  
են նաև ուղղակի կապիտալ ներդրումներ, ստա-  
նում են արդյունաբերական ձեռնարկությունների  
շինարարության պատվերներ, ստեղծում են խառը  
բաժնետիրական ընկերություններ տեղական կա-  
պիտալի հետ միասին, բացում են բանկային բա-  
ժանամունքներ, տրամադրում են տեխնիկական  
մասնագետներ ու վարկեր, ստանում են հանքային  
հարստությունների, նույնիսկ նավթի հետախուզ-  
ման կոնցեսիաներ և այլն: Օրինակ՝ Միացյալ  
Արարական Ռեսպուբլիկայի Եգիպտական շրջա-  
նում արևմտագերմանական «Դեմագ» ֆիրման կա-  
ռուցեց մետալուրգիական կոմբինատ Հելուանում,  
իսկ մյուս ֆիրմաները՝ էլեկտրակայան, ալյումինի,  
ավիացիոն, տեքստիլ, քիմիական պարարտանյու-  
թերի ու ավտոհավաքման գործարաններ:

Արևմտագերմանական ֆիրմաները ստացել են  
մետալուրգիական, շաքարի, ցեմենտի ու տեքս-  
տիլ գործարանների շինարարության ու սարքա-  
վորում տրամադրելու պատվերներ նաև Իրանում  
և այլն:

<sup>11</sup> „Die Welt“, 1957, 4. Dezember.

Անդրադառնալով Արևմտյան Գերմանիայի ներխուժմանը Մերձավոր ու Միջին արևելք «Սաարբրյուկիեր ցայտունդ» թերթը 1957 թվականի ապրիլի 15-ին գրում էր հետևյալը. «Լեվանտի երկրների մի շարք շրջանակներում (քաղաքական—Ռ. Կ.) լուրեր են տարածվում այն մասին, որ մյուս երկրների (Անգլիայի և Ֆրանսիայի Մ. Զ.) ձախողման կապակցությամբ կնքված է ամերիկա-գերմանական դաշտնի համաձայնագիր, որպեսզի ԳՖՌ-ն խաղա Արևմուտքի միջնորդի դերը Միջին արևելքի էկոնոմիկան— «ազատ աշխարհի» հետ կապելու համար»<sup>12</sup>:

Տեսնելով, որ Անգլիայի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի դադուժատիրական սլանները հանդիսվում են Մերձավոր ու Միջին արևելքի ժողովուրդների լուրջ դիմադրությանը, Արևմտյան Գերմանիան հանդես է գալիս հակադադուժացնության դրոշի ներքո և այն օգտագործում աշխարհի այս մասում իր ներխուժումն ուժեղացնելու և վերոհիշյալ պետությունների տեղը դրավելու համար:

\* \* \*

Արևմտադերմանական մոնոպոլիաներն ակտիվ առևտրական գործունեություն են ծավալում մասնավորապես թուրքական շուկայում: Ինչպես

<sup>12</sup> Տե՛ս «Recherches Internationales à la lumière du marxisme», 1958, juillet-août, p. 188.

անցյալում, այնպես էլ այժմ, արևմտագերմանա-  
կան խմբերի աշխուժ թուրքիացում վարում է դա-  
դութային քաղաքականութիւն, որը ոչ բովանդա-  
կութեամբ և ոչ էլ իր մեթոդներով չի տարբերւում  
նախկին քաղաքականութեանից: Ինչպես միշտ,  
այնպես էլ այժմ, թուրքիացում արևմտագերմա-  
նական խմբերի աշխուժի վարած դադութային քա-  
ղաքականութեան գլխավոր լծակը տնտեսական  
էքսպանսիան է, իսկ նպատակը՝ հաստատելով իր  
գերիշխանութիւնը երկրի էկոնոմիկայի վրա, այն  
վերածել իր հումքային բաղաչի ու ձևականորեն  
պահպանելով նրա տերիտորիալ ամբողջականու-  
թիւնը, զրկել նրան ներքին և արտաքին ինքնու-  
րույն քաղաքականութեանից: Բացի այն գործոն-  
ներից, որոնք աջակցում են արևմտագերմանական  
մոնոպոլիաների ակտիվ առևտրական էքսպան-  
սիային կապիտալիստական համաշխարհային  
շուկայում, նրանց ակտիվ առևտրական ներխուժ-  
մանը, տվյալ դեպքում նաև դգալի կերպով օգ-  
նում են իրենց հին կապերը թուրքական բուրժուա-  
զիայի այն խավի հետ, որն անցյալում միշտ  
հակված է եղել դեպի Գերմանիան:

Արևմտագերմանական մոնոպոլիաների ներ-  
խուժմանը թուրքիա մեծ շափով աջակցում են նաև  
Գ.ՖՌ-ի սկտական գործիչները ու գործարար շրջ-  
անների աչքի ընկնող ներկայացուցիչները, որոնք  
ստեպ-ստեպ անցելում են թուրքիա: Եթե մի

Թուրքիկ հայացք պցենք անցած ժամանակաշրջանի վրա, ապա կտեսնենք, որ ետպատերազմյան ժամանակաշրջանում Թուրքիա են այցելել Գ.ՖՆ-ի համարյա թե բոլոր բարձրաստիճան պետական գործիչները: Պաշտոնական այցելությամբ Թուրքիայում եղել են Գ.ՖՆ-ի կանցլեր Ադենաուերը (1953, 1954 և 1957 թթ.), վիցե-կանցլեր ու տնտեսության մինիստր էրհարդը (1951, 1959 թթ.), ռազմական մինիստրներ Բլանկը (1955 թ.) ու Շտրաուսը (1957 թ.), Գ.ՖՆ-ի պրեզիդենտ Հեյսը՝ արտաքին գործերի մինիստր Ֆոն Բրենտանոյի ուղեկցությամբ (1957 թ.), հաղորդակցության ճանապարհների մինիստր Զեբոմը (1957 թ.), գյուղատնտեսության մինիստր Էյուբբեկեն (1957 թ.) և ուրիշներ:

Արևմտյան Գերմանիայի կանցլեր Ադենաուերը, մոնոպոլիստական կապիտալի էքսպանսիային աջակցելու հարցում ուղղակի հետևում է Վիլհելմ Զ-րդի օրինակին:

Թուրքիա են այցելել նաև արևմտագերմանական մոնոպոլիստական կապիտալի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են գերմանական նախկին դեսպանության առևտրական խորհրդական Շենկեն (1951 թ.), գերմանական բանկի նախկին գիրեկտոր Վեյդեմանը (1951 թ.), Արևմտյան Գերմանիայի առևտրական պալատի գիրեկտոր Մյուլ-

լերը (1951 թ.), Շախտը (1954 թ.), Ալֆրեդ Կրուպ-  
պը (1957 թ.) և ուրիշներ:

1951 թվականի սեպտեմբերի 27-ին Թուրքիա  
ժամանեց նաև Ֆոն Պապենը: Անդրադառնալով  
Ֆոն Պապենի Թուրքիա կատարած ուղևորության  
արդյունքներին, որը հայտարարել է, թե Թուրքիան  
հանդիսանում է իր երկրորդ հայրենիքը, «Ապեկ-  
տեյտոր» հանդեսը գրում է.

«Ժամանակակից Թուրքիայի քաղաքականու-  
թյան ամենազարմացուցիչ առանձնահատկություն-  
ներից մեկը Թուրքիայի ու Գերմանիայի միջև  
եղած վաղեմի կապերի վերականգնումն է: Ան-  
ցյալ ամսին Ֆոն Պապենին ցույց տրված սրտազին  
ընդունելությունը Ստամբուլում անտարակույս էր:  
Ի դեպ ասած, Ֆոն Պապենի ապարատի (ուղմա-  
կան ժամանակի) մի քանի աշխատակիցներ, ըստ  
լուրերի, արդեն հիմնավորվել են գերմանական  
դեսպանատանը: Զանազան առևտրական, կուլ-  
տուրական ու տեխնիկական միսիաների կազմում  
Թուրքիա վերադարձած գերմանացիները, որոշ  
բարձրակոշ, բայց լիակատար հիմքով վստահու-  
թյուն են հաշտնում իրենց ապագա պոպուլյարու-  
թյան մասին»<sup>13</sup>:

Տնտեսական կապեր հաստատելու նպատա-  
կով Թուրքիա գործուղված ներկայացուցիչներին

<sup>13</sup> „Spectator“, 1951, 2 november, p. 562.

Յվով Արևմտյան Գերմանիան զրաւում է երկրորդ տեղը՝ ԱՄՆ-ից հետո:

Արևմտագերմանական դեղին մամուլը լայնորեն քննարկում է թուրքական շուկայի դավթման հարցը: Այստեղ հրատարակվում են գրքեր, որոնք Թուրքիայի գաղութացման ուղղակի կոչեր են անում: Այդ գրքերում գովերգվում են նաև գերմանական ֆաշիստների ու թուրքական կառավարողների «վաղեմի սրտագին բարեկամությունը» ու Թուրքիան դեպի Արևմտյան Գերմանիա կողմնորոշելու տնտեսական ու քաղաքական «օգտավետությունը»: Արևմտագերմանական մոնոպոլիտական շրջանների համաշխարհային պլանները Թուրքիայի նկատմամբ անավել հստակ ու պարզ կերպով հնչակրվել են Շախտի կողմից, որը չի դադարում գովերգելուց այն միտքը, թե «Թուրքիան և Գերմանիան տնտեսապես լրացնում են միմյանց»<sup>14</sup>:

Գերմանիայի հետ առևտրական ու դիվանագիտական կապերի խզման ու նրան պատերազմ հայտարարելու հետևանքով Գերմանիայի դիրքերը Թուրքիայում համարյա թե լիկվիդացվեցին: Պատերազմում կրած պարտության ու տնտեսական քայքայվածության պատճառով Արևմտյան Գերմանիայի բաժինը Թուրքիայի ներմուծման մեջ, 1945—1946 թվականներին կտղմում էր 1,1 և

<sup>14</sup> „Известия“, 23 марта 1954.

0,03 տոկոս<sup>15</sup>: Այդ նույն տարիների ընթացքում Արևմտյան Գերմանիայի բաժինը Թուրքիայի արտահանման մեջ իջել էր մինչև զերոյի: Թուրքիայի ներքին ու արտաքին առևտրի հաշվեկշռում Արևմտյան Գերմանիային փոխարինեց Անգլիան: Բայց «Տրումենի դոկտրինայի» ու «Մարշալի պլանի» հռչակումից հետո ԱՄՆ-ին հաջողվեց Անգլիային հետին պլան մղել ու դրավել առաջին տեղը Թուրքիայի ներքին ու արտաքին առևտրական շրջանառության մեջ ընդհուպ մինչև 1949 թվականը:

Արևմտադերմանական մոնոպոլիաների ուղամաարդյունաբերական հզորության վերականգնմանը զուգընթաց աշխուժանում է նրանց առևտուրը Թուրքիայի հետ: Եթե 1947 թվականին Արևմտյան Գերմանիայի բաժինը Թուրքիայի ներմուծման մեջ կազմում էր 0,02 տոկոս, իսկ 1948 թվականին՝ 0,8 տոկոս, 1949 թվականին այն կազմեց 4,6 տոկոս, իսկ Թուրքիայի արտահանման մեջ համապատասխանաբար՝ 0,1 3,8 և 16,1 տոկոս<sup>16</sup>:

1948 թվականի ապրիլի 19-ին կնքվեց առևտրական առաջին պայմանագիրը Թուրքիայի և Արևմտյան Գերմանիայի օկուպացիոն ֆրանսիական դատու միջև, որից հետո այդ նույն թվականի դեկտեմբերի 16-ին կնքվեց առևտրական պայմա-

<sup>15</sup> Yves Famchon et Maurice Leruth, *ibid*, p. 21.

<sup>16</sup> Yves Famchon et Maurice Leruth, *ibid*, p. 46.

Նազիր Թուրքիայի ու Բիզանիայի միջև: Շուտով՝ 1949 թվականի հունվարի 15-ին կնքվեց նոր առևտրական պայմանագիր Թուրքիայի ու Տրիգոնիայի միջև: Արդեն 1948 թվականին Արևմտյան Գերմանիան թուրքական շուկայում առաջ ենցավ Անգլիայից ու դրավեց երկրորդ տեղը ԱՄՆ-ից հետո:

1949 և 1950 թվականների ընթացքում Արևմտյան Գերմանիայի արտահանումը Թուրքիայից այնտեղից կատարված ներմուծմանը: Այդ տեղի ունեցավ այն պատճառով, որ այդ տարիների ընթացքում Արևմտյան Գերմանիան Թուրքիայից ներմուծեց մեծ քանակությամբ գյուղատնտեսական ապրանքներ և այն էլ ավելի բարձր գներով, քան նրանց համաշխարհային գները: Արևմտյան Գերմանիան վերոհիշյալ երկու տարիների ընթացքում Թուրքիային պարտք մնաց մոտ 100 մլն. թ. լիրա: Արևմտյան Գերմանիան իր այդ պարտքի զգալի մասը փակեց Մարշալի պլանի համաձայն նրան տրամադրված ամերիկյան վարկի հաշվին<sup>17</sup>:

Հետագա տարիների ընթացքում առևտուրը երկու երկրների միջև սկսեց աճել արագ տեմպերով:

Արևմտյան Գերմանիայի արտաքին առևտրա-

<sup>17</sup> Տե՛ս Օ. Յ. Կուգանովա, Пелатика США и Англии на Ближнем и Среднем Востоке, М., 1960, стр. 165.



## Թուրքիայի ներածույթ

(ըստ առանձին երկրների, տպաներով)<sup>18</sup>

Երկրներ	1950	1951	1952	1953	1954	1955	1956	1957	1958	1959
ԱՄՆ	54,5	11,1	8,4	11,3	15,0	22,4	21,1	30,7	27,8	21,7
Անգլիա	10,4	17,1	17,8	13,7	8,7	7,8	8,2	7,7	7,1	11,6
Արևմտյան Գերմանիա	17,6	23,7	25,0	20,8	17,3	17,6	23,6	23,6	15,5	18,9

Աղյուսակ 4

## Թուրքիայի արտահանույթ

(ըստ առանձին երկրների, տպաներով)

Երկրներ	1950	1951	1952	1953	1954	1955	1956	1957	1958	1959
ԱՄՆ	16,9	21,4	16,0	20,2	17,4	15,5	19,7	26,0	20,3	17,8
Անգլիա	14,0	8,3	6,6	6,8	6,9	7,4	7,6	9,2	6,2	9,6
Արևմտյան Գերմանիա	22,2	26,6	23,7	15,4	17,8	15,7	16,6	12,9	18,0	22,4

<sup>18</sup> Աղյուսակները կազմված են մեր կողմից՝ ըստ հետևյալ աղբյուրների. E. Լյուշուեյտ, «Турция», М., 1955, стр. 398; «Экономическое положение капиталистических стран в 1955 году», М., 1956, стр. 537; «Middle Eastern Affairs», 1957, august-september, p. 312; «Istanbul», 1957, 18 décembre; «Three monthly economic review Turkey», Annual-supplement, London, may, 1960, p. 9.

կան ներխուժմանը Թուրքիա, որոշ շափով նսպաս-  
տեց նաև այն հանդամանքը, որ 1950 թվականի  
մայիսին Թուրքիայում իշխանությունն անցավ  
Դեմոկրատական պարտիայի ձեռքը, որի պարա-  
զուսներին մեկը՝ Ջելալ Բայարը, հանդիսանում  
էր ամերիկյան և դերմանական խմբերիալիզմի  
վաղեմի կամակատարը: Դեմոկրատական պար-  
տիայի հաղթանակը ընտրություններում մեծ գո-  
հունակությամբ ընդունվեց արևմտագերմանական  
գործարար շրջանների կողմից: «Վիրշաֆտզի-  
ենստ» հանդեսը այդ կապակցությամբ գրում էր,  
որ Դեմոկրատական պարտիայի իշխանության  
դուրս անցնելը, նոր հնարավորություններ է բա-  
ցում արևմտագերմանական մոնոպոլիաների  
Թուրքիա ներխուժելու համար: Թերթը շեշտում էր  
հատկապես այն հանդամանքը, որ Թուրքիան ու  
Արևմտյան Գերմանիան տնտեսապես լրացնում  
են միմյանց<sup>19</sup>:

Յ և 4 աղյուսակները ակնառու կերպով ցույց  
են տալիս, թե ինչպես սրվում են անդլո-արևմտա-  
գերմանական ու ամերիկա-արևմտագերմանական  
հակասությունները թուրքական շուկայում<sup>20</sup>:

Սակայն Յ, 4 աղյուսակները միաժամանակ  
վկայում են այն մասին, որ շնայած այդ ուժեղ

<sup>19</sup> Yves Fanchon et Maurice Leruth, *ibid*, p. 81.

<sup>20</sup> «Առվետական Միության կոմունիստական պարտիայի  
Նրադիրը», 1961, էջ 37:

մրցակցութեանը, Արևմտյան Գերմանիայի առևտրական ներխուժումը Թուրքիա ետպատերազմյան առաջին տարիներին համեմատութեամբ բավականաչափ ուժեղացել է: Թեև, Արևմտյան Գերմանիայի բաժինը Թուրքիայի ներքին ու արտաքին առևտրի մեջ տոկոսային հարաբերութեամբ պիջում է նրանց միջև գոյութիւն ունեցող նախապատերազմյան առևտրի մակարդակին: Աղյուսակներում բերված թվերից երևում է, որ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում արևմտագերմանական մոնոպոլիաներին հաջողվել է թուրքական շուկայում հետին պլան մղել անգլիական մոնոպոլիաներին: Այստեղ՝ առաջնութեան համար մրցակցութեանը այժմ ծավալվում է միայն ու միայն ամերիկյան ու արևմտագերմանական մոնոպոլիաների միջև, որը առանձին տարիներում լուծվում է Արևմտյան Գերմանիայի օգտին: Օրինակ՝ 1951—1954 և 1959 թվականների ընթացքում Արևմտյան Գերմանիան առաջին տեղն է գրավել Թուրքիայի առևտրական շրջանառութեան մեջ:

1951 թվականին Արևմտյան Գերմանիայի արտահանումը Թուրքիա կազմել է 105,002 հազար դոլար, իսկ ներմուծումը՝ 83,639 հազար դոլար՝ ԱՄՆ-ինը համապատասխանաբար՝ 60,074 հազար դոլար և 67,537 հազար դոլար<sup>21</sup>: Թուրքական

<sup>21</sup> Yves Famchon et Maurice Leruth, *ibid*, p. 47.

շուկայում, վերոհիշյալ երկրների մրցակցության տեսակետից, շատ հատկանշական է 1952 թվականը, երբ Արևմտյան Գերմանիայի առևտուրը Թուրքիայի հետ համարյա հավասարվեց ԱՄՆ-ի ու Անգլիայի Վառնտրի շափին: Թուրքական պաշտոնական վիճակագրության տվյալների համաձայն, այդ տարում Արևմտյան Գերմանիայի ներմուծումը Թուրքիայից կազմեց 240,7 մլն. թ. լիրա, իսկ ԱՄՆ-ի ու Անգլիայի ներմուծումը՝ 228,9 մլն. թ. լիրա: Այդ նույն թվականին Արևմտյան Գերմանիայի արտահանումը Թուրքիա կազմեց 338,6 մլն. թ. լիրա, կամ մոտ 70 մլն. լիրա՝ ով պակաս, քան ԱՄՆ-ի ու Անգլիայի արտահանումը միասին վերցրած<sup>22</sup>:

Արևմտյան Գերմանիան Թուրքիա է արտահանում սարքավորում արդյունաբերության դաշնադան ճյուղերի համար, էլեկտրատեխնիկական, օպտիկայի ու ճշգրիտ մեխանիկայի ապրանքներ, պլոլաատնտեսական մեքենաներ, տրանսպորտի միջոցներ՝ բեռնատար ու մարդատար ավտոմեքենաներ, շոգենավեր, տպագրական մեքենաներ, կրկաթի ու պղնձի ձուլվածք, պողպատյա խողովակներ, բրդյա ու բամբակյա մանվածք ու կտորեղեն, թուղթ, քիմիական ներկեր, սևափնատեխնիկական ապրանքներ, դեղորայք, ցեմենտ, քիմիական պարարտանյութեր և այլն: Նա դրավում

<sup>22</sup> „Yeni Istanbul“, 1954; 14 şubat.

է անաջին տեղը Թուրքիայի ներմուծման մեջ այն-  
պիսի ասլրանքներով, ինչպիսին են երկաթի ու  
սողալատի ձուլվածքը, էլեկտրատեխնիկական  
սարքավորումը, տրանսպորտի միջոցները, տեք-  
ստիլ ու բրդյա գործվածքեղենը, սլատրաստի հա-  
գուստը, մանվածքը, քիմիական ասլրանքները և  
այլն:

Թուրքիան իր հերթին Արևմտյան Գերմանիա  
է արտահանում քրոմի հանքանյութ, մարդանեց,  
երկաթի ու սղնձի հանքաքար, կենդանի անասուն,  
ցորեն, գարի, վարսակ, ծխախոտ, բամբակ, բուրդ,  
ձիթապտուղ, շոր մրգեղեն, միրգ, կաշի, կաղին,  
զինի, օղի, ձկան պահածոներ, անտառափայտ,  
դարադանյութ և այլն:

Թուրքիան Արևմտյան Գերմանիային քրոմի  
հանքաքար մատակարարող հիմնական երկիրն է:

«Թուրքիան հանդիսանում է Արևմտյան Գեր-  
մանիայի գլխավոր գնորդը ու մատակարարողը  
Մերձավոր Արևելքում» գրում է բելգիական «Դրա-  
պո ու ժ մադազին» թերթը<sup>23</sup>:

Արևմտյան Գերմանիան Թուրքիայից մեծ քա-  
նակույթյամբ գյուղատնտեսական հումք, հանքա-  
յին հանածոներ է ներմուծում իր ստրատեգիա-  
կան պաշարները լրացնելու և ռազմականացումն  
արագացնելու նպատակով: Արևմտյան Գերմա-  
նիան ձգտում է Թուրքիան վերածել իր ռազմա-

<sup>23</sup> „Drapeau Rouge Magazine“, 1958, 26 avril.

Թուրք-արևմտագերմանական

	1951	1952	1953	1954
Ներմուծում . .	265,7	388,6	311,1	232,1
Արտահանում .	234,3	240,7	170,1	167,4

կան մեքենայի հումքային բաղաչի, ապրանքների վաճառահանման շուկայի: Այդ տեսակետից Արևմտյան Գերմանիայի առևտրական քաղաքականությունը Թուրքիայում ոչնչով չի տարբերվում երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին ֆաշիստական Գերմանիայի վարած քաղաքականությունից:

Այսպիսով (տե՛ս աղյուսակ № 5) ստացվում է, որ վերոհիշյալ տարիների ընթացքում Թուրք-արևմտագերմանական առևտուրը ունեցել է մշտական պակասորդ (դեֆիցիտ), որն ընդհանուր առմամբ կազմում է 668,1 մլն. թ. լիրա կամ Թուրքիայի արտաքին առևտրի պակասորդի ավելի քան 25 տոկոսը: Թուրք-արևմտագերմանական առևտրական փոխհարաբերությունները քննելիս երեւում է, որ նրանք կրում են փոփոխական բնույթ՝ թե՛ ընդհանուր ծավալի և թե՛ ապրանքացուցակի տեսակետից:

Թուրք-արևմտագերմանական առևտրի մեջ Արևմտյան Գերմանիայի ներմուծման նկատմամբ

առևտուրը մլն. բ. լիրայով<sup>24</sup>

1955	1956	1957	1958	1959
244,7	269,0	151,2	136,9	234,6
137,6	141,1	125,0	126,7	222,9

արտահանման զգալի գերակշռության ու թուրքիայի արտաքին առևտրական պակասորդի մշտական աճի կապակցությամբ, Արևմտյան Գերմանիան հանդիպում է լուրջ դժվարությունների:

Օրինակ, 1953 թվականին Արևմտյան Գերմանիայի արտահանումը թուրքիա 1952 թվականի համեմատությամբ պակասեց 77,5 մլն. թ. լիրայով, իսկ ներմուծումը՝ 70,6 մլն. թ. լիրայով: Այդ նույն թվականին թուրքական կառավարությունը սառեցրեց արևմտագերմանական շահույթը մոտ 120 մլն. մարկի շափով ու նույնիսկ սահմանափակեց Արևմտյան Գերմանիայից կատարվող ներմուծումը: Վերջինս իր հերթին կրճատեց իր արտահանումը թուրքիա: 1953 թ. թուրքիայի ու Արևմտյան Գերմանիայի միջև տեղի ունեցյալ բանակցություններ՝ թուրքական դժուրաբանական

24 № 5 աղյուսակը կազմված է մեր կողմից՝ ըստ հետևյալ աղբյուրների *Б. И. Пог: апокеий, „Экспансия западногерманских монополий на Ближнем и Среднем Востоке“*, „Советское востоковедение“, 1958, № 4, стр. 53;

ապրանքների Արևմտյան Գերմանիա արտահանումն ավելացնելու վերաբերյալ: Բանակցություններն ավարտվեցին առևտրական համաձայնագրի կնքումով (1953 թվականի օգոստոս), որով Թուրքիան հնարավորություն էր ստանում 1953—1954 թթ. ընթացքում Արևմտյան Գերմանիա արտահանել 700 հազար տոննա հացահատիկ, 12 հազար տոննա ծխախոտ, 40 հազար տոննա բամբակ ու 32 հազար տոննա մրգեղեն<sup>25</sup>:

Այդ նույն թվականի հոկտեմբերին Արևմտյան Գերմանիա մեկնեց մի թուրքական առևտրական պատվիրակություն, որը բանակցություններ վարեց հացահատիկային կուլտուրաների արտահանման հարցի շուրջը: Այդ բանակցությունների ընթացքում Արևմտյան Գերմանիան վերջնականապես համաձայնվեց Թուրքիայից ներմուծել տարեկան ոչ պակաս քան 700 հազար տոննա հացահատիկ<sup>26</sup>:

---

„Yearbook of international trade statistics“, 1958, vol. 1. United Nations, New-york, 1958, p. 508; „The Middle East 1959“, London, 1959, p. 312; „Bulletin des Press-und Informationsamtes der Bundesregierung“, Bonn, den 17 März, 1960, s. 512; „The Middle East 1961“, London, 1961, p. 343.

<sup>25</sup> „Journal d'Orient“, 1953, 7 août.

<sup>26</sup> „Yeni Istanbul“, 1954. 10 ekim.



1954 թվականին Արևմտյան Գերմանիայի արտահանումը Թուրքիա 1953 թվականի համեմատությամբ նորից կրճատվեց: Եթե 1953 թվականին Արևմտյան Գերմանիայի արտահանումը Թուրքիա կազմում էր 311,1 մլն. թ. լիրա, ապա 1954 թվականին այն կազմեց 232,2 մլն. թ. լիրա: Բայց 1954 թվականի դեկտեմբերի 21-ին երկու երկրների միջև կնքվեց առևտրական նոր պայմանագիր, որից հետո հաջորդ տարում Արևմտյան Գերմանիայի արտահանումը Թուրքիա 1954 թվականի համեմատությամբ աճեց 12,6 մլն. թ. լիրայի շափով: Թուրքիայի ներմուծումը Արևմտյան Գերմանիայից 1957 թվականին կրճատվեց 118 մլն. թ. լիրայով՝ 1956 թվականի համեմատությամբ:

Այժմ հարց է ծագում, ի՞նչ հողի վրա ու ի՞նչ միջոցներով է ծավալվում թուրք-արևմտագերմանական առևտուրը, հատկապես նկատի ունենալով այն հանդամանքը, որ դեռևս 1953 թվականի մայիսին, Դորդմունդում ունեցած իր ելույթով էրհարդր հանդատացրեց Արևմտյան Գերմանիայի մրցակիցներին, որ ԳՖՌ-ն չի ձգտի ավելացնել իր արտահանումը վարկավորման միջոցով<sup>27</sup>: Բայց էրհարդի հայտարարությունն արված էր դուռ առևտու համար: Իր առևտրական

<sup>27</sup> „БИКИ“, 1953, № 60, стр. 1.

դիրքերը Թուրքիայում շկորցնելու ու ավելի ուժեղացնելու նպատակով Արևմտյան Գերմանիան Թուրքիային տրամադրում է վարկեր կամ, ուղղակի ասած, իր սեփական միջոցներով վարկալորում է առևտուրը Թուրքիայի հետ: Արևմտյան Գերմանիան լայն կերպով օգտագործում է իմպերիալիստական երկրների այն պրակտիկան, որ ինչպես Վ. Ի. Լենինն է մատնանշել «կապիտալի արտահանումն արտասահման՝ դառնում է միջոց, որով խրախուսվում է ապրանքների արտահանումն արտասահման»<sup>28</sup>: Օրինակ՝ 1954 թվականին արևմտագերմանական «Հերմես» պետական ապահովագրական ընկերությունը Թուրքիային տրամադրեց 170 մլն. մարկ քիմիական ձեռնարկությունների սարքավորում ու նավեր գնելու համար: Բայց Թուրքիայի պրեմիեր-մինիստր Ադնան Մենդերեսի Բոննում վարած բանակցություններից հետո 1954 թվականի դեկտեմբերին կնքվեց նոր առևտրական պայմանագիր, որի համաձայն Արևմտյան Գերմանիան վերոհիշյալ վարկի փոխարեն համաձայնվեց Թուրքիային տրամադրել 225 մլն. մարկ<sup>29</sup>, որից 180 մլն. մարկը տրամադրեց պետությունը, իսկ մնացածը՝ մասնավոր ընկերությունները: Վարկը տրամադրվեց Թուր-

<sup>28</sup> Վ. Ի. Լենին, *Ընտիր երկեր*, 1951, հատ. 22, էջ 322:

<sup>29</sup> „Handelsblatt“, 1956, 17 Februar.

քիային 4 տարի ժամանակով, տարեկան 7,8 առկասի հաշվով: ԳՖՌ-ն միաժամանակ Թուրքիայից սլահանջեց հնարավորություն տալ արևմտադերմանական մոնոպոլիաներին՝ մասնակցելու արտադրության միջոցների արդյունաբերությանը, որին Թուրքիան իսկույն համաձայնվեց: 1955 թվականի սկզբներին արևմտադերմանական ֆիրմաները Թուրքիային նոր վարկ տրամադրեցին 100 մլն. մարկ գումարի շափով<sup>30</sup>:

1958 թվականի հուլիսին Բոննի կառավարությունը որոշեց նոր վարկ տրամադրել Թուրքիային<sup>31</sup>: Բաշց Արևմտյան Գերմանիայի այս քայլը լուրջ դիմադրության հանդիպեց ամերիկյան կառավարողների կողմից, որոնք ձգտում են ամեն կերպ ուժեղացնել իրենց ազդեցությունը Թուրքիայի վրա: Դրա փոխարեն, ԱՄՆ-ը հանդես եկավ Թուրքիային միասնական վարկ տրամադրելու առաջարկով: 1958 թ. օգոստոսին արևմտյան երկրները որոշեցին Թուրքիային վարկ տրամադրել 359 մլն. դոլլար: Այս վարկից 234 մլն. դոլլար տրամադրվեց ԱՄՆ-ի, 100 մլն. դոլլար՝ Եվրոպական Վճարման Միության և 25 մլն. դոլլար՝ Միջազգային վալյուտային ֆոնդի կողմից<sup>32</sup>:

Ինչպես հետագայում հայտնի դարձավ, Եվ-

<sup>30</sup> „Financial Times“, 1955, 10 august.

<sup>31</sup> „Vatan“, 1958, 29 temmuz.

<sup>32</sup> „La Tribune des Nations“, 1958, 5 septembre.

բոսնիական Վճարման Միության 100 մլն. դոլլար վարկի կեսը՝ 210 մլն. մարկ, Թուրքիային տրամադրվեց Արևմտյան Գերմանիայի կողմից<sup>33</sup>: ԳՖՌ-ի պառլամենտի բյուջետային հանձնաժողովը պահանջում էր, որ այդ վարկը Թուրքիային տրամադրվեր միայն ու միայն երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում վերջինի կողմից բռնադրաված գերմանական սեփականութունը վերադարձնելուց հետո<sup>34</sup>:

Սեփականության հարցը Արևմտյան Գերմանիայի օգտին լուծվելուց հետո (տե՛ս էջ 74) բունդեստագը հաստատեց այդ վարկը: 1960 թվականի սկզբներին Մենդերեսը անձամբ դիմեց Ադենաուերին նոր վարկ ստանալու հարցով: Արևմտյան Գերմանիան որոշեց օգտվել այդ հանդամանքից, որպեսզի էլ ավելի ուժեղացնի իր դիրքերը Թուրքիայում: Նույն թվականի մարտի 11-ին Անկարայում սկսվեցին բանակցություններ, որոնց ընթացքում քննարկվեց Թուրքիային արևմտապերմանական նոր վարկ տրամադրելու հարցը: Վերջում բանակցող կողմերը ստորագրեցին կոմյունիկե, որի համաձայն Արևմտյան Գերմանիան համաձայնվեց Թուրքիային տրամադրել

<sup>33</sup> „Financial Times“, 1958, 28 november.

<sup>34</sup> Նույն տեղում, 1959, 3 december.

վարկ 150 մլն. մարկի շափով: Այդ վարկի երկու երրորդից ավելին Թուրքիան սարտավորվեց ծախսել արևմտաեվրոպական մի շարք երկրներից գնումներ կատարելու նպատակով, իսկ մնացած մասը՝ ապրանքներ ներմուծելու համար միայն ու միայն Արևմտյան Գերմանիայից<sup>35</sup>: Ադենաուերը այդ վարկը Թուրքիային տրամադրեց առանց բունդեստագի հաստատման, որ նշանակում էր վերջինիս իրավունքների կոպիտ խախտում: Նա ուղղակի կարգադրեց Վերականգնման-վարկային բանկին, Թուրքիային փոխանցելու այդ դումարը<sup>36</sup>:

Այսպիսով՝ 1960 թվականի կեսերին Արևմտյան Գերմանիայի տնտեսական «օդնությունը» Թուրքիային կաղմեց 685 մլն. մարկ կամ ԱՄՆ-ից հետո նա գրավեց երկրորդ տեղը Թուրքիային արտասահմանյան տնտեսական «օդնություն» ցույց տալու ասպարեզում: Սակայն այս հարցում պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ ամերիկյան տնտեսական «օդնության» մոտ կեսը ծախսվում է Թուրքիայի ռազմականացման նպատակով, ստացվում է, որ Արևմտյան Գերմանիան գրավում է առաջին տեղը Թուրքիային տրնտեսական «օդնություն» ցույց տալու գործում:

<sup>35</sup> „Zafer“, 1960, 8 nisan.

<sup>36</sup> „Neues Deutschland“, 1960, 31 Mai.

Թուրք-արևմտագերմանական առևտրի ապագան խիստ անհանդատություն է պատճառում արևմտագերմանական մոնոպոլիաներին, որոնք մի կողմից շեն ցանկանում կորցնել իրենց դիրքերը թուրքական շուկայում, իսկ մյուս կողմից հնարավորություն չունեն իրենց ցանկացած շափով ու տեմպերով շարունակել առևտուրը Թուրքիայի հետ: Արևմտագերմանական մոնոպոլիաներին այս վիճակից փրկեց ԳՖՌ-ի կառավարութայունը:

1956 թվականի օգոստոսի 29-ին Արևմտյան Գերմանիայի ու Թուրքիայի միջև կնքվեց Թուրքիային զենքի ու զինամթերքի արտադրության պատվեր տալու պայմանագիր 740 մլն. մարկ գումարի շափով<sup>37</sup>: Այդ միաժամանակ համապատասխանում է Բոննի կառավարողների ռազմատենչ քաղաքականութայանը, որոնք ձգտում են մի

---

37 Ի դեպ, Արևմտյան Գերմանիայի ու Թուրքիայի կառավարողներին վաղուց էր մտահոգում արևմտագերմանական բանակի համար Թուրքիայի տերիտորիայում զինամթերքի արտադրության հարցը: Դեռևս 1954 թվականի աշնանը Թուրքիայի պրեմիեր-մինիստր Մենդերեսը ու Կրուպսը գաղտնի բանակցութայուններ վարեցին ծանր հրազեն արտադրող գործարանի շինարարության հարցի շուրջը: Տե՛ս К. Миккульский, Концерн Круппа, М., 1959, стр. 83.

կողմից թեթևացնել փոխադարձ վճարումները, իսկ մյուս կողմից՝ արագացնել բունդեսվերի վերադինումը: Պաշմանադիրն ուժի մեջ մտավ 1957 թվականի մայիսի 9-ին, երբ այն հաստատվեց նաև Արևմտյան Գերմանիայի բունդեսադի կողմից: 1957 թվականի մարտին Արևմտյան Գերմանիայի ռազմական մինիստր Շտրաուսը հատուկ ուղևորութուն կատարեց դեպի Թուրքիա այդ պաշմանադրի շուրջը վերջնական բանակցութուններ վարելու համար:

Պաշմանադրի համաձայն 1957 թվականի մայիսին Արևմտյան Գերմանիան որոշում կայացրեց Թուրքիային փոխանցել 255 մլն. մարկ որպես կանխավճար<sup>38</sup>: Այդ գումարի մի մասը՝ 75 մլն. մարկ, Թուրքիան վերադարձրեց Արևմտյան Գերմանիային՝ առևտրական պարտքի դիմաց, իսկ մնացած գումարով դնեց սարքավորում ու քիմիական հումք մեքենաշինության ու քիմիական արդյունաբերության պետական ընկերության Գրքիալեի ռազմական գործարանի (Անկարայի մոտ) համար, որը այդ ժամանակվանից սկսեց դինամիկորթ արտադրել: Պաշմանադրի այն կետը, որով Թուրքիան պարտավորվեց վարկի մի մասը տրամադրել սարքավորման ու քիմիական հումքի

<sup>38</sup> „Milliyet“, 1957, 16 haziran.

դնմանը, թեևադրված էր Կրուուպյի կոնցերնի կողմից<sup>39</sup>:

Գրանից հետո Բոննի թուրքական գեսպանությունում բացվեց հատուկ բյուրո, որը հետևում էր այդ պայմանագրի իրականացման ընթացքին: Բյուրոյի գեկավար նշանակվեց գիվիզիտնային գեներալ Արզուատը՝ գեսպանորդի աստիճանով<sup>40</sup>:

Վերոհիշյալ պայմանագիրը ցնծությամբ ընդունվեց թուրքական կառավարողների կողմից, որոնք աջ ու ձախ դավեստներ էին շուայլում Արևմտյան Գերմանիայի հասցեին, նշելով նրա բարեհոգի քայլն այդ պատվերը թուրքիայում տեղադրելու հարցում: Թուրքական պաշտոնաթերթ «Ջաֆերը» գրում էր, որ պայմանագրի կնքումով երկու երկրների միջև եղած հարաբերությունները մտնում են զարգացման մի նոր փուլ:

«Հավադիս» թերթը շահապաղեց այդ առթիվ դուռըդարար հայտարարելու, թե «Այն հանդամանքը, որ Գերմանիայի (աչսինքն Արևմտյան Գերմանիայի—Մ. Հ.) նման արդյունաբերական բարձր մակարդակի հասած մի երկիր, իր բանակի կարիքները բավարարելու համար դիմում է թուրքիային, խոսում է այն մասին, որ թուրքական արդյունաբերությունը զարգացման բարձր

<sup>39</sup> „Recherches internationales á la lumière du marxisme“, 1958, juillet-août, p. 182.

<sup>40</sup> „Cumhuriyet“, 1957, 2 şubat.



աստիճանի է հասել»<sup>41</sup>: Այդ նույն թերթը շարունակում էր՝ «Գերմանա-թուրքական տրադիցիոն բարեկամությունը մեծ նշանակություն ունեցավ գերմանական կառավարության կողմից այդ կարեւոր պատվերը թուրքական արդյունաբերությանը տալու հարցում»<sup>42</sup>: Իսկ թուրքական մի այլ թերթ, այդ հարցին նվիրված իր հոդվածում ավելի հետուն գնաց, նա գրում էր՝ «Գյուլիստենսական բնույթ ունեցող մի երկիր առաջին անգամ հնարավորություն ունեցավ իր արդյունաբերական արտադրանքը ուղարկել Գերմանիայի պես զարգացած երկրի: Մենք այդ գնահատում ենք որպես Թուրքիայի պատմության մեջ շտեմնված տնտեսական հաղթանակ»<sup>43</sup>: Այնինչ, իրականում, այդ պայմանագիրը կոչված էր թուրքական էկոնոմիկան ավելի սերտ կերպով կապելու արևմտագերմանական ռեանշիստների արտաքին ագրեսիվ քաղաքականության հետ: Այն բուլտրովին էլ չի համապատասխանում ո՛չ գերմանական, ո՛չ թուրք և ո՛չ էլ նրանց հարևան ժողովուրդների արմատական շահերին, Եվրոպայում խաղաղության պահպանման ու ամրապնդման շահերին:

Վերոհիշյալ պայմանագիրը շթեթևացրեց Թուրքիայի արտաքին ս:սևտրի դժվարությունները:

<sup>41</sup> Տե՛ս „Ekonomi gazetesi“, 1957, 14 mayis.  
<sup>42</sup> Նույն տեղում:  
<sup>43</sup> Նույն տեղում, 1957, 21 mayis.

րը: Այդ իսկ պատճառով Թուրքական կառավարողները սկսեցին ուրիշ ելք փնտրել:

Երկիրը արտաքին առևտրական դժվարություններից դուրս բերելու նպատակով նրանք ձգտում էին միանալ այսպես կոչված «ընդհանուր շուկային»<sup>44</sup>: Նրանք հույս ունեին որ մտնելով «ընդհանուր շուկայի» մեջ, Թուրքիան հնարավորություն կստանա մեծ քանակությամբ գյուղատնտեսական հումք և հանքային հանածոներ արտահանել դեպի այդ շուկայի մեջ մտնող երկրները: Փաստորեն Թուրքիան ընկնելու է ավելի մեծ տնտեսական դժվարությունների մեջ, որովհետև Նա ստիպված է լինելու իր դոները բացել արևմրտաեվրոպական արդյունաբերության առաջ: Այդ իր հերթին կհանդեցնի տեղական ազգային արդյունաբերության փլուզմանը, քանի որ նա ի վիճակի չէ դիմադրելու իմպերիալիստական խոշոր մոնոպոլիաների մրցակցությանը:

---

<sup>44</sup> Եվրոպական տնտեսական համագործակցության կազմակերպության կամ «ընդհանուր շուկայի» մեջ մտնում են ԳՖՍ-ն, Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան, Հոլանդիան ու Լյուքսեմբուրգը: «Ընդհանուր շուկայի» վերաբերյալ պայմանագիրն ուժի մեջ մտավ 1958-թ. հունվարի 1-ին: «Ընդհանուր շուկան» իրենից ներկայացնում է մի տնտեսական միություն, որի ներսում աստիճանաբար վերացվելու են բոլոր տարիֆային մաքսերը ու անցնելու են ազատ առևտրի, առանց որևէ սահմանափակման: «Ընդհանուր շուկան» ՆԱՏՕ-ի տնտեսական հավելուկն է:

Թուրքական կառավարության այս մտադրու-  
 թյունը ամեն կերպ քաջալերվում է Արևմտյան  
 Գերմանիայի կողմից: Եվ դա միանգամայն հաս-  
 կանալի է: Նախ և առաջ, Արևմտյան Գերմանիան  
 սենսալով ուժեղ և ավելի դարգացած էկոնոմի-  
 կա, քան ընդհանուր ԱՄՆ-ից, ՆԱՏՕ-ի մասնակից<sup>45</sup> և  
 «ընդհանուր շուկայի» մեջ մտնող մյուս երկրները,  
 ամենից շատ կշահի դրանից: Երկրորդ՝ Արևմտ-  
 յան Գերմանիան արդեն դառնի դիրքեր ունի  
 Թուրքիայի էկոնոմիկայում և «ընդհանուր շուկա-  
 յին» վերջինիս միանալուց հետո նրա դիրքերը  
 այստեղ ավելի կուժեղանան: Այդ իսկ սրատճա-  
 րով «ընդհանուր շուկայի» մեջ մտնող երկրներից  
 առաջինը Արևմտյան Գերմանիան էր, որ էրհարդի  
 Թուրքիա կատարած այցելության ժամանակ հայ-  
 տարարեց, թե Արևմտյան Գերմանիան կողաշտ-  
 ողանի այդ շուկային միանալու Թուրքիայի ձգտու-  
 մը<sup>46</sup>: Աջակիսով, արևմտագերմանական մոնոպո-  
 լիաների կողմից «ընդհանուր շուկայի» օգտա-  
 դործումը՝ իրենց դիրքերը Թուրքիայում է՛լ ավելի  
 ամրապնդելու նպատակով, ոչ այլ ինչ է, քան  
 նրանց վարած դադութային քաղաքականության  
 դրսևորում:

<sup>45</sup> Н. С. Хрущев, Разоружение—путь к упрочению  
 мира и обеспечению дружбы между народами, „Прав-  
 да“, 15 января 1960.

<sup>46</sup> „Zafer“, 1959, 24 agosto.

Թուրքական մի շարք ընդդիմադիր քաղաքա-  
կան դործիչներ ու թերթեր խիստ քննադատու-  
թյան ենթարկեցին Մենդերեսի կառավարութչան  
այդ մտադրութչունը: Այնուամենայնիվ, 1960  
թվականի հունվարին թուրքական կառավարութչու-  
նը հայտարարեց, որ մտադրութչուն ունի երկիրը  
միացնելու «ընդհանուր շուկային»:

Թուրք-արևմտագերմանական առևտուրը, շա-  
հույթի մեծ աղբյուր է Արևմտյան Գերմանիայի  
համար: Էժան գներով Թուրքիայից ներմուծելով  
դյուղատնտեսական հումք ու հանքային հանածո-  
ներ, արևմտագերմանական մոնոպոլիաները գա-  
ժան շահագործման են ենթարկում Թուրքիայի  
բնական հարստութչունները, աշխատավոր դյու-  
ղացիութչանը ու բանվոր դասակարգին: Սակայն  
արևմտագերմանական մոնոպոլիաները կեղեքում  
են Թուրքիայի աշխատավոր մասսաներին՝ երկրի  
հիմնական սպառողներին, նաև մոնոպոլ բարձր  
գներով արդյունաբերական ապրանքներ արտա-  
հանելու միջոցով: Արևմտագերմանական մոնո-  
պոլիաների առևտրական ներխուժմանն աջակցում  
է թուրքական միջնորդ առևտրական բուրժուա-  
զիան, որը նրանց հետ միասին մասնակցում է  
Թուրքիայի բանվոր դասակարգի ու աշխատավոր  
դյուղացիութչան շահագործմանը:

ԱՐԵՎՄՏԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄՈՆՈՊՈԼԻԱՆԵՐԻ  
ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ  
ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ

Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին թուրքական բուրժուազիան արդեն բավականաչափ հարստացել էր պետութչյան միջոցով աշխատավոր մասսաներին շահագործելու, ինչպես նաև ֆաշիստական Գերմանիային գյուղատնտեսական հումք ու հանքային հանածոների վաճառելու միջոցով: Մյուս կողմից, պետական կապիտալիզմի քաղաքականութչյունը սկսել էր կաշկանդել թուրքական բուրժուազիայի ազատ գործարարական գործունեութչյունը: Ահա թե ինչու թուրքական գործարար շրջանները պատերազմից հետո սկսեցին ավելի համարձակ հանդես գալ հօգուտ մասնավոր կապիտալի գործունեութչյան շրջանակների ընդարձակման:

1946 թվականի սկզբներին Թուրքիայում ստեղծվեց նոր քաղաքական պարտիա՝ Դեմոկրատական պարտիան, որի հիմնական կորիզը ուղեկավարութչյունը կազմված էր թուրքական առևտրական ու ֆինանսական բուրժուազիայի, կալ-

վածատիրութեան ու կուլակութեան ներկայացուցիչներին: Այս պարտիայի ծրագիրը պահանջում էր մասնավոր կապիտալին տրամադրել դործողութեան շահն ոչորտ ու ամեն կերպ խրախուսել նրա նախաձեռնութեանը<sup>1</sup>:

Ամերիկյան մոնոպոլիաները, որոնք երկրորդ համաշխարհային պատերազմից հետո անհամեմատ ուժեղացրին իրենց էքսպանսիան կապիտալիստական ամբողջ աշխարհով մեկ, ամեն կերպ օգնեցին այդ պարտիային, քանի որ վերջինիս ծրագիրը ազատ հնարավորութեան էր ընձեռում նաև օտարերկրյա մոնոպոլիստական կապիտալի ներխուժմանը Թուրքիա՝ տեղական մասնավոր կապիտալի հետ հավասար իրավունքներով, այսինքն հենց այն, ինչ որ իրենք պահանջում էին: Դեմոկրատական պարտիային ցույց տված թուրքական և ամերիկյան բուրժուազիայի աջակցութեանը մեծ նշանակութեան ունեցավ 1950 թվականի մայիսի պառլամենտական ընտրութեանն հետո նրա հաղթանակի համար:

Իշխանութեան գլուխ անցնելով Դեմոկրատական պարտիան սկսեց վարել թուրքական ու օտարերկրյա մասնավոր կապիտալի աջակցման քաղաքականութեան, որն արդյունաբերության

---

<sup>1</sup> T. Tunaya, Türkiye'de siyasi partiler, (1859—1952), İstanbul, 1952, s. 667.

րնապատկանում նրա վարած քաղաքականութեան հիմնական ուղղութեաններէից մեկն էր:

Գեմոկրատական պարտիայի կառավարութեանը մշակեց ցեմենտի ու շաքարի դործարաններէի, ինչպէս նաև մի շարք այլ արդյունաբերական ձեռնարկութեաններէի շինարարութեան պլան: Այդ նպատակով, ինչպէս պետական ու մասնավոր, այնպէս էլ միայն մասնավոր կապիտալի մասնակցութեամբ այստեղ հիմնուեցին մի շարք նոր բանկեր ու բաժնետիրական ընկերութեաններ: Այսպէս օրինակ՝ հիմնուեց «Թուրքիյե շեքեր ֆարրիկալարի Անոնիմ Շիրքետի» ընկերութեանը պետական կապիտալի ու «Բշբանկի»՝ (Գործարար բանկ) մասնակցութեամբ: Հիմնուեց նաև «Թուրքիյե շիմենտ սանայի Անոնիմ Շիրքետի» ընկերութեանը 250 մլն. թ. լիրա դրամագլխով «Բշբանկ», «Սումերբանկ» և «Էմլյաքբանկ» բանկերի մասնակցութեամբ: Թուրքական կառավարութեանը ձեռնարկէ է նաև էլեկտրականներէի ու արդյունաբերական այլ ձեռնարկութեաններէի շինարարութեան երկրի տարբեր վայրերում: Թուրքական բուրժուազիան, ինչ խոսք, պարզ գիտակցում է, որ ին սեփական միջոցներով ինքն ի վիճակի չէ իրականացնելու վերոհիշյալ շինարարութեանը և միևնույն ժամանակ հաղթահարելու երկրի տնտեսական դժվարութեանները: Թուրքական բուրժուազիան դիմում է օտարերկրյա կապիտալի օգնու-

թյանը, կապիտալ ներդրումների, սարքավորման, պատենտների և տեխնիկական մասնագետների տրամադրման համար:

1951 թվականի օգոստոսի 1-ին թուրքական մեջլիսը ընդունեց № 5821 օրենքը՝ օտարերկրյա կապիտալի խրախուսման մասին, որի հիմնական սկզբունքները առաջարկված էին ամերիկյան ու արևմտաեվրոպական մոնոպոլիաների կողմից: Այս օրենքի համաձայն, օտարերկրյա մասնավոր կապիտալն ազատ հնարավորություն ստացավ կապիտալ ներդրումներ կատարելու արդյունաբերության, էներգետիկայի, կապի, հասարակական աշխատանքների ու տուրիստական կազմակերպությունների բնագավառներում<sup>2</sup>: Օտարերկրյա կապիտալն իրավունք ստացավ ներդրման օրից 3—5 տարվա ժամկետը լրանալուց հետո իր կապիտալները փոխադրել Թուրքիայից, իսկ շահույթները՝ ոչ ավելի քան ներդրված կապիտալից ստացված տարեկան շահույթի 10% -ը:

Չնայած այն հանգամանքին, որ նախորդ ժամանակաշրջանի հետ համեմատած, այս օրենքը սրտախիորեն բացում էր երկրի էկոնոմիկայի դոմենները օտարերկրյա մոնոպոլիաների առջև, այնուամենայնիվ կապիտալի և շահույթի փոխա-

---

<sup>2</sup> R. Cenani, Foreign Capital Investments in Turkey, Istanbul, 1954, p. 18.



դրմանը վերաբերող կետերը դժգոհություն առաջացրին Արևմուտքում:

1954 թվականի հունվարի 18-ին Թուրքական մեջլիսը Ռենդոլլի<sup>3</sup> միսիայի հանձնարարականների հիման վրա ընդունեց նոր օրենք օտարերկրյա կապիտալի խրախուսման մասին, որի համաձայն, օտարերկրյա կապիտալ ներդրումներն այստեղ ոչնչով չեն սահմանափակվում: Այնուհետև, օտարերկրյա մոնոպոլիաներն իրավունք ստացան ցանկացած ժամանակ ու շափով արտասահման փոխադրել իրենց կապիտալը և շահույթները: Օտարերկրյա կապիտալը ստացավ հավասարազոր իրավունքներ տեղական կապիտալի հետ և աչն: Վերոհիշյալ օրենքի ընդունումից հետո ուժեղացավ օտարերկրյա, հատկապես ամերիկյան ու արևմտագերմանական մոնոպոլիատական կապիտալի ներխուժումը Թուրքիա:

Արևմտագերմանական մոնոպոլիաների կապիտալ ներդրումներին նախորդեց արևմտագերմանական բանկերի բաժանմունքների բացումը 1951 թվականին: Արևմտագերմանական «Ռեյնիշ Վեստֆալիշե», «Նորդդոյչե» և «Ջյուդդոյչե» բան-

<sup>3</sup> Կլաունս Ռենդոլլը ԱՄՆ-ի կոնգրեսի արտաքին տրնտեսական հանձնաժողովի նախագահն ու պրեզիդենտի օգնականն էր, որը 1953 թվականի օգոստոսին իր էքսպերտների հետ ժամանեց Թուրքիա օտարերկրյա մոնոպոլիատական կապիտալի խրախուսման օրենքի փոփոխման կապակցությամբ:

կերը, որոնք «Դոյչերանկի» ժառանգորդներն են, բացեցին իրենց միացյալ բաժանմունքը Ստամբուլում: Բաժանմունքի գիրեկտոր նշանակվեց է. Գուդենբերգը, որը նախկինում «Դոյչերանկի» Ստամբուլի մասնաճյուղի գիրեկտորն էր, իսկ այնուհետև՝ «Թուրքիյե կրեդի բանկասի» բաժնետիրական ընկերության գլխավոր գիրեկտորը<sup>4</sup>: Թուրքիայում իրենց բաժանմունքները բացեցին նաև «Դրեզդեներ բանկ»<sup>5</sup>, «Համբուրգեր-կրեդիտ», «Ռեյն-Մայն», «Ռեյն-Ռուր» և «Բանկ ֆյուր հանդել ունդ ինդուստրի» բանկերը: Թուրքիայում վերսկսել է իր գործարքները արևմտագերմանական ասպահավազրական ընկերությունը, և վերականգնվել են գերմանական այն ֆիրմաների իրավունքները, որոնք այստեղ գործում էին երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ:

Արևմտագերմանական մոնոպոլիաների կապիտալ ներդրումներին աջակցելու նպատակով 1954 թվականի մարտին Ադենաուերը հատուկ ուղևորություն կատարեց դեպի Թուրքիա: Նա այդ հարցի շուրջը բանակցություններ վարեց թուրքական կառավարողների հետ: Բանակցությունների ավարտումից հետո հրատարակված կոմյունիկեում նշվում էր, որ թուրքական կառավարությունը «մի-

<sup>4</sup> „Handelsblatt“, 1954, 26 Juli.

<sup>5</sup> М. Бункина, Внешняя экономическая экспансия западногерманских монополий, М., 1958, стр. 54.

ջոցներ կձեռնարկի Թուրքիայի կապիտալ ներդրումներում գերմանական արդյունաբերության մասնակցությունն ապահովելու համար<sup>6</sup>:

Ինչպես նշում է «Նախարիխտեն Ֆյուր Աուսենհանդել» հանդեսը արևմտագերմանական մոնոպոլիաները Թուրքիան դիտում են որպես «խղճալական դաշտ գործունեության համար»<sup>7</sup>:

Արևմտագերմանական մոնոպոլիատական կապիտալը ակտիվորեն մասնակցում է արդյունաբերական շինարարությանը, ոչ թե Թուրքիայի տնտեսական զարգացմանը աջակցելու, այլ իր շահույթն ապահովելու նպատակով: Այդ մասնակցությունը վաճառահանման հարմար շուկայի ապահովումից բացի, Արևմտյան Գերմանիան ձգտում է Թուրքիայի արդյունաբերական զարգացմանը տալ իրեն հարմար ուղղություն և ընթացք: Արևմտագերմանական մոնոպոլիաները ջանք չեն խնայում կառուցվող ձեռնարկությունների շահագործման ղեկավարությունը իրենց ձեռքը վերցնելու: Նրանք մասնակցում են այդ շինարարությանը քաջ գիտակցելով, որ եթե աչդ իրենք շանեն, ապա կանեն մյուս կապիտալիստական երկրները: Արևմտյան Գերմանիան հետապնդում է էաև մեկ ուղի՝ կարևոր նպատակ. ամեն կերպ խանգարել Թուրքիայի ու սոցիալիզմի համաշ-

<sup>6</sup> „Правда“, 23 марта 1954.

<sup>7</sup> „Nachrichten für Aussenhandel“, 1954, 20 September.

խարհային սիստեմի տնտեսական համագոր-  
ծակցութեանը:

Արդյունաբերական ձեռնարկութեանների շի-  
նարարութեանը մասնակցելու համար Թուրքիայում  
հիմնվում են խառը բաժնետիրական ընկերու-  
թեաններ թուրքական մասնավոր կապիտալի ու  
արևմտագերմանական ֆիրմաների, ինչպես նաև  
արևմտագերմանական կապիտալի ու թուրքական  
այն ընկերութեանների հետ, որոնց դրամագլխիսը  
կազմված է թե՛ պետական և թե՛ մասնավոր կա-  
պիտալից: Խառը բաժնետիրական այդ ընկերու-  
թեաններում արևմտագերմանական կապիտալի  
մասնակցութեանը, ըստ թուրքական օրենսդրու-  
թեան, թույլատրվում է հիմնական դրամագլխի  
մինչև 51% -ի չափով: Արևմտագերմանական  
ֆիրմաներն այդ ընկերութեաններին մասնակցում  
են զլխավորապես գործարանային սարքավորման,  
տեխնիկական մասնագետների, պատենտների ու  
լիցենզիաների տրամադրման, ինչպես նաև ձեռ-  
նարկութեանների ղեկավարման ձևով: Միաժա-  
մանակ հայտնի են դեպքեր, երբ արևմտագերմա-  
նական մոնոպոլիաները դրա դիմաց ստանում են  
արդյունաբերական ձեռնարկութեանների շահա-  
գործմանը մասնակցելու իրավունք՝ համաձայն  
տոկոսային պայմանավորվածութեան: Հաճախ,  
արևմտագերմանական ֆիրմաները հանդես են  
գալիս որպես կապալառու: Հիմնված խառն ընկե-

րությունների հատկանշական գիծը այն է, որ  
Երանք մեծ մասամբ կառուցում են ոչ մեծ ձեռ-  
նարկություններ, որոնք հումքի և պահեստամա-  
սերի ապահովման տեսակետից կախման մեջ են  
գտնվում հիմնական ֆիրմաներից, այսինքն՝ կա-  
ռուցվող ձեռնարկությունները լրիվ արտադրական  
ցիկլ չեն ունենում:

Օտարերկրյա կապիտալի խրախուսման 1951  
և 1954 թվականների օրենքների ընդունումից հե-  
տո արևմտադեմանական մոնոպոլիաները Թուր-  
քիայում կառուցել են մի շարք տարրեր արդյու-  
նարերական ձեռնարկություններ:

Օրինակ՝ «Բադիշե Անիլին ունդ Սոդա Ֆաբ-  
րիկա Ա. Գ.» և «Ալտտ սանայի Թուրք Անոնիմ  
Շիրքետի» ընկերությունները հիմնեցին խառը  
բաժնետիրական ընկերություն Քյութահայում ա-  
լտտի գործարան կառուցելու նպատակով (120  
մլն. թ. լիրա)<sup>8</sup>: Այդ գործարանի շինարարութունը  
սկսվեց 1955 թվականի հուլիսին ու վերջացավ  
1958 թվականի վերջերին: Նրա տարեկան արտա-  
դրողականությունը կազմում է մոտ 120 հազար  
տոննա քիմիական պարարտանյութ<sup>9</sup>: 1955 թվա-  
կանի մայիսին հիմնվեց նաև «Սումերբանկ-Ման-  
նեսաման Բոուլ էնդուստրիսի Թուրք Անոնիմ Շիր-  
քետի» խառը բաժնետիրական ընկերությունը 5,5

<sup>8</sup> „Ekonomi gazëtesi“, 1957, 22 ocak.

<sup>9</sup> „Chemische Industrie“, 1955, Juni, s. 310.

մշն. թ. լիբա դրամագլխով՝ «Սումերբանկի» և «Մաննեսաման» ֆիրմայի կազմից, Իզմիրում խողովակի գործարանի կառուցման համար: Գործարանն արդեն հանձնված է շահագործման<sup>10</sup>: 1956 թվականի նոյեմբերին «Շապլվերկե Զյուզլեստֆայեն Ա. Գ.» ու «Մաքինա վե քիմյա էնդուստրիաի Կուրումու» և «Մադեն Հուրդաջիլիք Թ. Ա. Շ.» ընկերությունները հիմնեցին «Թուրք-Ալման Զելիք չիմիտեդ Շիրքեթի» ընկերությունը՝ Քրքկալեի պողպատածուլական գործարանի ընդլայնման նպատակով: Ընկերության վերջնական դրամագլխով կազմեց մոտ 2 մլն. մարկ. որի 49% -ը տրամադրվում էր թուրքական ընկերություններին, իսկ մնացածը՝ արևմտադերձականական ֆիրմային, որը կապիտալ ներդրումը կատարեց պողպատածուլական սարքավորման ու մեքենաների տրամադրման ձևով: Քրքկալեի գործարանի ընդլայնման շնորհիվ բարձրորակ պողպատի արտադրությունն ավելացավ 2—3 անգամ, հասնելով տարեկան մինչև 25 հազար տոննայի: Արևմտադերձական մեկ ուրիշ ֆիրմա՝ «Բենտելեր Վերկե Ա. Գ.-ն» թուրքական «Մուխլիս-էմեք Շիրքեթի» ընկերության հետ Ստամբուլում կառուցեց խողովակների գործարան: Այդ ընկերության դրամագլխով կազմում էր 2 մլն. թ. լիբա, որի կեսը

<sup>10</sup> „Ekonomi gazetesi“, 1957, 11 şubat.

տրամադրվեց արևմտագերմանական ֆիրմայի կողմից<sup>11</sup>։

Արևմտագերմանական մոնոպոլիաները ակտիվ մասնակցութիւն են ունենում հատկապես շաքարի ու ցեմենտի գործարանների շինարարութեանը։

«Ռոյչե Բերգվերկս ունդ Հյուտտենբաու» ֆիրման 1954 թվականին շաքարի գործարաններ կառուցեց Քոնյայում ու Ամասիայում<sup>12</sup>։ Վերոհիշյալ գործարանները օրական մշակում են 1800 տոննա շաքարի ճակնդեղ։ Նրանց շինարարութեան արժեքը կազմել է 32 մլն. մարկ։ Այդ նույն ֆիրման կառուցել է շաքարի գործարան Սուսուրլուկում և Բուրդուրում<sup>13</sup>։ Թուրքիայում շաքարի գործարաններ են կառուցել նաև «Մաշինեն-Ֆարրիկեն Բյուլկիաու Ռ. Վոլֆ Ա. Գ.» և «Արդե» ֆիրմաները Ադապարում, Աֆյոնում, Քյուսթահյայում և այլ վայրերում։

Արևմտագերմանական ֆիրմաները թուրքական կառավարութեանից ստացան նաև ցեմենտի 12 գործարանի կառուցման պատվեր, այն պայմանով, որ շինարարութեան ավարտումից հետո մասնակցեն նրանց շահագործմանը։ Ցեմենտի

<sup>11</sup> „Zafer“, 1954, 8 eylül.

<sup>12</sup> „Zeitschrift für die Zuckerindustrie“, 1955, 20 März, № 3, s. 124.

<sup>13</sup> W. Uhrenbacher, Türkei, Berlin, 1957, s. 98.

գործարանների շինարարությանն արևմտադե-  
մասնական ֆիրմաները մասնակցեցին ֆրանսիա-  
կան կապիտալի հետ միասին: Համատեղ ներ-  
գրումները կազմում են 8 մլն. թ. լիրա<sup>14</sup>: Թունշ-  
րիլերի ու Սաքարյա գետի վրա Սարիերի էլեկ-  
տրակայանները ևս կառուցվեցին արևմտադե-  
մասնական մոնոպոլիաների կողմից:

Արևմտադեմասնական մոնոպոլիատական կա-  
պիտալի մասնակցությամբ վերջին տարիների ըն-  
թացքում Թուրքիայում կառուցվել են նաև պահա-  
ծոնների, էլեկտրատեխնիկական, գրասենյակային  
պիտույքների ու կահույքի, դյուրալիտի, դեղորայք-  
ների, էլեկտրական մարտկոցների, դիզել մեքե-  
նաների, սլաքատմասսայի, ապակու, կղմինդրի,  
թղթի, ձկան պահածոների, կարելի և այլ գործա-  
րաններ:

Արևմտյան Գերմանիան Եռանդուն մասնակ-  
ցություն է ցուցաբերում նաև Ճանապարհաշինու-  
թյան առարկեզում: 1957 թվականի դեկտեմբե-  
րին Թուրքիայի երկաթուղային ճանապարհների  
գլխավոր վարչության և «Սիմենս ունդ Հալսկե»  
ֆիրմայի միջև ստորագրվեց համաձայնագիր Գեր-  
մեկ-Կայսերի-Բողազքյուփրյու-Ուլուկըշլա-Ադանա  
երկաթուղագծի (620 կմ) վերանորոգման հա-  
մար անհրաժեշտ սարքավորում մատակարարելու

<sup>14</sup> „Investments in Turkey“, Washington, 1956, p. 177.



մասին: Վերսահիշյալ երկաթուղագծի վերանորոգման աշխատանքները ավարտվեցին 1960 թվականի սկզբներին: Արևմտագերմանական ֆիրմաների կողմից կառուցվեց Սամսունի նավահանգիստը և վերանորոգվեց Ստամբուլ—Անկարա—Ջոնդուղակ երկաթուղագիծը: Մի շարք ռազմական բազաներ՝ օդանավակայաններ, ավտոմոբիլային էանսպարհներ, նուշնուկա կառուցվել են Արևմտյան Գերմանիայի կողմից: 1956 թվականի վերջերին Թուրքիայում գործող արևմտագերմանական ֆիրմաների թիվը հասավ 33-ի<sup>15</sup>, իսկ նրանց կապիտալ ներդրումները՝ 18 մլն. մարկի<sup>16</sup>: Արևմտագերմանական մոնոպոլիստական կապիտալը Թուրքիայում գրավում է երկրորդ տեղը թե աչատեղ գործող ֆիրմաների թվով և թե կապիտալ ներդրումների գումարով, ղիջելով միայն ամերիկյան մոնոպոլիստներին:

Արևմտագերմանական մոնոպոլիստների դիրքերն էլ ավելի ամրապնդելու նպատակ էր հետապնդում էր հարդի ուղևորութունը գեպի Թուրքիա 1959 թվականի օգոստոսին: էրհարդը այդ հարցի շուրջը Ստամբուլում բանակցութուններ վարեց Թուրքական կառավարության հետ: Բանակցող կողմերը եկան համաձայնության այն մասին, որ Արևմտյան Գերմանիան երկարաժամկետ վար-

<sup>15</sup> „Investments in Turkey“, . . . p. 177—179.

<sup>16</sup> „Problèmes Economiques“, 1957, 25 juin, p. 12.

կերով մասնակցի Թուրքիայի կապիտալ ներդրում-  
ների եռամյա պլանին: «Զաֆեր»-ի տվյալների  
համաձայն, այդ վարկերը կազմելու էին 500—  
700 մլն. դոլլար<sup>17</sup>: կապիտալ ներդրումները կա-  
տարվելու էին հատկապես հանքային հարստու-  
թյունների շահագործման մեջ:

Էրհարդը դրադվեց նաև Թուրքական էկոնոմի-  
կայի ֆինանսավորման ներքին աղբյուրների ու-  
սումնասիրութչամբ: Նա առաջարկեց Թուրքական  
կառավարութչանը կրճատել կապիտալ ներդրում-  
ները արդյունաբերութչան այն ճյուղերի մեջ, ո-  
րոնք ունեն կապիտալի երկարատև շրջապտույտ,  
այսինքն կծկել ծանր արդյունաբերութչուներ:

Էրհարդը բացահայտ ճնշում դործադրեց Թուր-  
քական կառավարութչան վրա, որպեսզի վերջինս  
վերադարձնի երկրորդ համաշխարհային պատե-  
րազմի ժամանակ բռնադրաված գերմանական սե-  
փականութչուներ: Եվ պետք է ասել, որ նրան հա-  
ջողվեց դրական արդյունքի հասնել այդ հարցում:  
Այսպիսով ստացվում է, որ արևմտագերմանական  
մոնոպոլիստական կապիտալի ներդրումները  
Թուրքիայում միանգամից ավելացան ավելի քան  
100 մլն. մարկով: Փաստորեն ստացվում է, որ  
Էրհարդի աչցելութչան հիմնական նպատակը գեր-  
մանական սեփականութչան վերադարձումն էր:

<sup>17</sup> „Zafer“, 1959, 24 agosto.

էրհարդի աչս ուղևորությունը նշանալորում էր արևմտագերմանական մոնոպոլիստական կապիտալի Թուրքիա ներխուժման նոր էտապը: Կասկածից վեր է, որ այդ ուղևորությունից հետո Արևմտյան Գերմանիայի դիրքերը Թուրքիայում ավելի պետք է ուժեղանան, նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ: Այն մի կողմից հանդեցնելու է նաև օտարերկրյա մոնոպոլիաների միջև մրցակցության ուժեղացմանը, իսկ մյուս կողմից կարող է նոր դժվարություններ առաջացնել Թուրքիայի էկոնոմիկայի ինքնուրույն զարգացման ճանապարհին: Էրհարդի այցելությունը չուրջ անհանդստություն պատճառեց ամերիկյան ու անգլիական գործարար շրջաններին: Այդ մասին «Բիրմինգհամ պոստ» թերթը գրում էր. «Էրհարդի այցելությունը Թուրքիա, այստեղ հաստատեց այն համոզմունքը, որ Գերմանիան կարող է դուրս մղել Ամերիկային՝ Թուրքիային օգնություն տրամադրելու հարցում»<sup>18</sup>:

Էրհարդի այցելությունը տարբեր կերպ գնահատվեց Թուրքիայում:

Թուրքական կառավարողները մեծ հույսեր էին կապում նրա այցելության՝ հետ, նշելով, որ Էրհարդի խորհուրդները, որն ավելի լավ գիտե Թուրքիայի տնտեսական դրությունը քան որևէ մեկը

<sup>18</sup> „Birmingham post“, 1959, 8 september.

աշխարհում, կօղնեն իրենց երկիրը «Ծաղկող պարտեզ» դարձնելուն: Նրանք նաև հույս ունեին, որ Արևմտյան Գերմանիան Թուրքիային «մեծ փոխառություններ» կտրամադրի և ամեն կերպ փառաբանում էին վերոհիշյալ բանակցությունների արդյունքները, դրանք բնութագրելով որպես մի մեծ հաջողություն Թուրքիայի և հենց իրենց արտաքին տնտեսական քաղաքականության համար:

Հակառակ դրան, ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչներն ու մամուլը իրավամբ նշում էին, որ այդ բանակցությունները ոչ մի ուսուցողական շուրջը չեն Թուրքիային, որովհետև Արևմտյան Գերմանիան հրաժարվեց նրան նոր վարկ տրամադրելուց և համաձայնվեց միայն մասնավոր կապիտալի նոր ներդրումներ կատարելու:

Ժողովրդա-ուսպուրլիկական պարտիայի այդ ժամանակվա գլխավոր քարտուղար Կասրմ Գյուլելը հանդես գալով Կարամյուրսելում ծաղրամերով նշում էր, որ «կառավարությունը շատ բան էր ւպասում գերմանական միջխտրից և, իհարկե առաջին հերթին, փող: Բայց կրհարող փողից կարևոր խորհուրդներ բերեց, որոնց խմբատը կայանում էր նրանում, որ աշխատանքները ընթանան պլանի ու ծրագրի համաձայն»<sup>19</sup>:

Ընդդիմադիր մամուլը էրհարդի բանակցու-

<sup>19</sup> „Akşam“, 1959, 24 <sup>^</sup>agustos.

թյունների մասին միաբերան գրում էր նաև, որ վերջինս բանակցությունների ժամանակ հետապրնդում էր առաջին հերթին արևմտագերմանական մոնոպոլիաների շահերը: Այդ մամուլի տվյալների համաձայն, նա թուրքական կառավարությունից պահանջեց էլ ավելի իջեցնել լիրայի արժեքը, որպեսզի ԳՖՌ-ն կարողանա էժան գնով ավելի շատ թուրքական գյուղատնտեսական ապրանքներ գնել կամ ինչպես գրում էր «Ակիս» հանդեսը որպեսզի, «էրհարդի հայրենակիցները կարողանան ավելի էժանագին սիգարետներ գնել»:

«Ուլուս» թերթի հաղորդման համաձայն, Արևմրայան Գերմանիան Եվրոպական տնտեսական համագործակցության կազմակերպության ու Միջազգային վալյուտային ֆոնդի շրջանակներից դուրս Թուրքիայի հանդեպ ոչ մի պարտավորություն չվերցրեց<sup>20</sup>: Այնուհետև թերթը շարունակում էր, թե էրհարդը հասկացրեց, որ Թուրքիան իր տնտեսական ծրագրի վերաբերյալ նախ պետք է ստանա արևմտյան երկրների հավանությունը, որից հետո միայն Արևմտյան Գերմանիան կմտածի՝ օգնել նրան, թե ոչ:

Ընդդիմադիր մամուլը միաժամանակ նշում էր, որ էրհարդի այցելության նպատակը նոր շուկաների ու շահավետ ազդեցության ոլորտների ա-

<sup>20</sup> „Ulus“, 1959, 26 agosto.

պահովումն է արևմտագերմանական ու ուրիշ մո-  
նոպոլիաների կապիտալ ներդրումների համար:  
Այդ մամուլը նախազգուշացնում էր, որ Թուրքիայի  
տնտեսական մերձեցումը արևմտյան երկրների  
հետ կարող է կասեցնել երկրի տնտեսական զար-  
գացումը ու իջեցնել ժողովրդի կենսամակարդակը:

Այստեղ հարկ է նշել, որ այն, ինչի մասին  
նախազգուշացնում էր այդ մամուլը, արդեն տեղի  
է ունեցել: Արևմտյան երկրների հետ տնտեսական  
մերձեցման պատճառով Թուրքիայի տնտեսությու-  
նը դուրսում է տեղում, և օրավուր իջնում է աշխա-  
տավոր զանգվածների կենսամակարդակը: Թուր-  
քական «Քիմ» հանդեսը հեզնանքով նշում էր, որ  
այն ժուռնալիստները, որոնք գրպանները հարցե-  
րով լցրած դնում էին էրհարդի հետ հանդիպելու,  
չէին էլ կասկածում, որ այդ հարցերի մեծ մասը  
կմնա առանց պատասխանի, և սարը կերկնի ու  
մուկ կծնի:

Արևմտագերմանական մոնոպոլիաները հա-  
տուկ շահագորգութան լինելու են ցուցաբերում նաև  
Թուրքիայի հանքային հանածոների շահագործմա-  
նը մասնակցելու հարցում: Դեռևս 1951 թվականին  
նրանք քրոմի հանքանյութի շահագործման իրա-  
վունք ստացան Մուղլայի շրջակայքում<sup>21</sup>:

Մինչև 1954 թվականի մարտի 7-ի՝ Թուրքիա-  
յի նավթարդյունաբերութան ապաազգայնացման

<sup>21</sup> М. Бункина, там же, стр. 75.

ու օտարերկրյա կապիտալին նավթահետախուղա-  
կան աշխատանքներ թուլլատրելու մասին օրենքի  
ընդունումը<sup>22</sup>, օտարերկրյա նավթային մոնոպո-  
լիաների դործունեությունն այստեղ շնչին էր. այն  
ուսումնասիրվում էր գլխավորապես նավթա-  
մթերքների վաճառքով: Սակայն վերոհիշյալ օրեն-  
քի ընդունումից հետո արևմտյան երկրների նավ-  
թային մոնոպոլիաները ուժեղ հոսանքով ներխու-  
ժեցին Թուրքիա: Արդեն 1957 թվականի վերջերին,  
օտարերկրյա 18 և տեղական երկու նավթային  
ընկերություններ ստացել էին նավթահետախու-  
ղական աշխատանքների 200 թուլլատվություն  
9.177.732 հեկտար տարածության վրա<sup>23</sup>:

Նավթահետախուղական աշխատանքների թուլլա-  
տվություն են ստանում նաև արևմտագերմանական  
նավթային ընկերությունները: Առաջինն այդպիսի  
թուլլատվություն ստացավ «Դեյլման Մոնտան»  
ֆիրման, 1954 թվականի վերջին: Այս ընկերու-  
թյունը նավթահետախուղական աշխատանքների  
կոնցեսիա ստացավ Թրակիայում (Եվրոպական  
Թուրքիա): Ընկերությունը ստացավ 4 կոնցեսիա  
198,885 հեկտար տարածության վրա<sup>24</sup>:

<sup>22</sup> Վերոհիշյալ օրենքը ընդունվել է ամերիկյան նավթ-  
թային մասնագետներ Մարքս-Մ. Բոլլի և էլմեր է. Բեոցելի  
հանձնարարականների համաձայն:

<sup>23</sup> „L'Économiste d'Orient“, 1958, 15 septembre, p.  
1805.

<sup>24</sup> „Der Volkswirt“, 1957, 7 September, s. 2008.

1957 թվականի ամռանը այդպիսի թուլլավու-  
թյուն ստացավ նաև «Դյոյչե էրդոլ» ֆիրման<sup>25</sup>։  
Վերջինս ստացավ նավթաէկոնոմիկական աշխա-  
տանքների ութ կոնցեսիոն շրջան՝ 390 հազար  
էկտար ընդհանուր տարածությամբ, դրանցից  
հինգը գտնվում են սիրիական սահմանի մոտ  
(Դիարբեքից հարավ) և երեքը՝ Սլեյքից արևելք  
(Հարզանի ու Ռամանդաղի մոտ)։ Արևմտագերմա-  
նական նավթային մոնոպոլիաներն այստեղ ար-  
դեն ծավալել են լայն էկոնոմիկական աշխա-  
տանքներ։ Այս փաստերն ակնհայտ կերպով  
վկայում են այն մասին, թե արևմտագերմանական  
մոնոպոլիստական կապիտալը ինչպիսի վճռակա-  
նություն է ցուցաբերում և հեռու գնացող ինչ շա-  
հադիսական նպատակներ է հետապնդում Մեր-  
ձավոր և Միջին արևելքի, հատկապես Թուրքիա-  
յի, նավթային հարստությունների շահագործման  
ուղղությամբ։

Հայտնի է, որ առաջին և երկրորդ համաշ-  
խարհային պատերազմների միջև ընկած ժամա-  
նակաշրջանում գերմանական իմպերիալիզմը,  
հանդիպելով Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի  
ուժեղ դիմադրությանը, զրկված էր Մերձավոր և  
Միջին արևելքի նավթի շահագործմանը մասնակ-  
ցելու հնարավորությունից։ Ահա թե ինչու մենք  
հատկապես շեշտեցինք արևմտագերմանական

<sup>25</sup> „Erdöl und Kohle“, 1957, № 10, s. 720.



նալթաշին մոնոպոլիաների ներխուժումը Թուրքիա, որպես մի նոր երևույթ Մերձավոր ու Միջին արևելքում նրանց վարած համաշխարհային քաղաքականության մեջ:

#### ԿՐՈՒՊՊԻ ԿՈՆՅԵՐՆԸ ԹՈՒՐԳԻԱՅՈՒՄ

Թուրքիայում իրենց գործունեությունը ծափալող արևմտագերմանական մոնոպոլիաներից առավել ակտիվը Կրուպպի կոնցերնն է: Վերջինս անցյալում ունեցել է իր շահերը Թուրքիայում, սկսած դեռևս XX դարի սկզբներից, երբ նա ղենք ու ղինամթերք էր արտահանում Թուրքիա և շարունակում արդյունաբերական ձեռնարկություններ կառուցել մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո վերականգնելով և այնուհետև ընդարձակելով իր ազդմաարդյունաբերական հզորությունը, Կրուպպի կոնցերնը նորից ակտիվ գործունեություն ծավալել արտաքին շուկաներում, այդ թվում նաև Թուրքիայում: Թուրքական կառավարողները սերտ «բարեկամական» կապեր հաստատեցին հատկապես Կրուպպի հետ: Ամեն անգամ, Արևմտյան Գերմանիայում եղած ժամանակ, նրանք իրենց պարտականությունն են համարում այցելել Էսսենի մոտ գտնվող «Հյուբել» վիլլան՝ Կրուպպի ընտանիքի ղլխավոր բեզիդենցիան, գրում է գերմանական հայտնի պրոպրետարի վրաստմաբան Ա. Նորդենը<sup>26</sup>:

<sup>26</sup> „Правда“, 23 ноября 1954.

Դեռ ավելին, թուրքական կառավարությունն իր ներկա շահույթին ունի Կրուպպի ֆիրմային կից<sup>27</sup>, որպիսի պրակտիկա երբեք չի կիրառվել արտասահմանյան մոնոպոլիաների նկատմամբ:

Նախորդ գլխում մենք արդեն նշեցինք, թե արեւմտադերմանա-թուրքական առևտրի բնույթի վրա ինչպիսի մեծ ազդեցություն է գործում Կրուպպի կոնցերնը: Սակայն Կրուպպի կոնցերնի շահերը Թուրքիայում չեն սահմանափակվում միայն արտաքին առևտրական շրջանակներում:

Կրուպպի կոնցերնը մեծ շահադրդովածություն է ցուցաբերում Թուրքիայի հատկապես հանքային հանածոների շահագործման հարցում: Արդեն 1955 թվականի օգոստոսին Կրուպպի կոնցերնի ու թուրքական «Էթիրանկ», «Սումերքանկ», «Բշբանկ» ու «Էմլյաք-վե-կրեդի բանկ» բանկերի միջև հիմնվեց «Մադեն արամա վէ էտյուդ լիմիտեդ շիրքեթի» խառը բաժնետիրական ընկերությունը 1 մ.ն. թ. լիրա ընդհանուր դրամադրսով<sup>28</sup>: Կրուպպի բաժինը կազմում էր ընկերության դրամագլխի 20%<sup>29</sup>, սարքավորման մատակարարման ձևով: Այս ընկերությունը հիմնվեց երեք տարի ծամկետով և զբաղվում էր հանքային հանածոների հետախուզական աշխատանքներով, այն նպա-

<sup>27</sup> „Yeni Sabah“, 1957, 14 ekim.

<sup>28</sup> W. Uhrenbacher, ibid, s. 118.

<sup>29</sup> K. Мукульскый, там же, стр. 104.

տակ ունեւր հումքով ապահովել Թուրքիայի երկ-  
րորդ մետալուրգիական կոմբինատի պահանջները:  
Ընկերութիւնը դրադովում էր նաև այդ կոմբինատի  
շինարարութեան նախապատրաստական աշխա-  
տանքներով, իսկ հետախուզական աշխատանքնե-  
րը սկսեց էգեշան ծովի ափին: Վերոհիշյալ ընկե-  
րութեան կանոնադրութիւնը նախատեսում էր  
նաև, որ հանքային հանածոների հայտնաբերու-  
մից ու կոմբինատի շինարարութեան տեղը որոշե-  
լուց հետո, այդ նույն բաժնետերերը կհիմնեն նոր  
խառը ընկերութիւն 400 մլն. թ. լիրա դրամագրու-  
թեամբ մետալուրգիական կոմբինատի շինարարու-  
թեան ու շահագործման համար: Ընկերութեան կա-  
նոնադրութեան ստորագրման արարողութեան ժա-  
մանակ Կրուպայի կոնցերնի ներկայացուցիչն իր  
հայտարարութեան մեջ նշեց, որ «Մեր համագոր-  
ծակցութիւնը բխում է երկու երկրների յուրահատ-  
կութիւնից: Գերմանիայի ու Թուրքիայի էկոնոմի-  
կան փոխադարձաբար լրացնում են միմյանց»:

1956 թվականի դեկտեմբերի վերջին Կրուպ-  
այի կոնցերնը հիմնեց երկրորդ խառը բաժնետի-  
րական ընկերութիւնը հանքային հանածոների հե-  
տախուզական աշխատանքների համար: Այս ան-  
դամ, ընկերութիւնը հիմնվեց «էթիրանկի» հետ  
Ռուս-դադի շրջանում նոր հայտնաբերած վոլֆրա-  
մի հանքերի շահագործման նպատակով: Կրուպ-  
այի կոնցերնը հատուկ ուշադրութիւն է դարձնում

վոլֆրամի հանքերի շահագործման վրա միայն ու միայն այն պատճառով, որ վոլֆրամը խիստ անհրաժեշտ է Արևմտյան Գերմանիային բարձրորակ պողպատի արտադրության գործում: Ամերիկյան աղբյուրների համաձայն, Կեսարիայի գործարար մարդկանց մի խումբ խնդրել էր Կրուպպին, երկաթահանքերի մոտ գտնվող սոժիսի պաշարները պողպատի արտադրության համար օգտագործելու մի նախագիծ կազմել:<sup>30</sup>

1957 թվականի ընթացքում Կրուպպի կոնցերնի ներխուժումը Թուրքիա ավելի ակտիվացավ, որին մեծ շափով աջակցեց հենց իր Կրուպպի աջակցությունը: Կրուպպը Թուրքիա ժամանեց 1957 թվականի մայիսին, համաձայն պրեմիեր-մինիստր Ադնան Մենդերեսի 1955 թվականի և քաղմական մինիստր էթեմ Մենդերեսի 1957 թվականի հրավերների: Այդ աջակցության ժամանակ Կրուպպը կազմակերպեց Կարարչուք, Ալեքսանդրեստա, (Իսքենդերուլ), Կեսարիա, Էսքիշեհիր, Քոնյա, Ադանա, Մերսին, Բերգամա, Իզմիր, Բուրսա, Վան, Անկարա և Սաամրուպ քաղաքներում: Նա հանդիպումներ ունեցավ թուրքական կառավարության ու պետության ղեկավար գործիչների, գործարար շրջանների հետ: Այդ ընթացքում քննարկվեցին Կրուպպի կոնցերնի գործունեության ընդարձակման հարցերը: Թուրքական կառավարողների ու գործա-

<sup>30</sup> „Investments in Turkey“, ...ibid, p. 76.

րար շրջանների հետ Կրուպուլը բանակցություններ վարեց վոլֆրամի, քարածխի ու քրոմի հանքերի շահագործման, ջերմանավի կառուցման, էդրեմիտի մոտ երկրորդ մետալուրգիական կոմբինատի, Բոսֆորի վրա կամուրջի կառուցման ու դեպի իրանական սահմանը ձգվող երկաթուղադժի շինարարության և ուրիշ հարցերի շուրջը: Բանակցություններն ավարտվեցին նրանով, որ Կրուպուլի կոնցերնը ստացավ արդյունաբերական ձեռնարկություններ կառուցելու մի շարք նոր պատվերներ: 1957 թվականի մայիսի 18-ին Կրուպուլի ու թուրքական կառավարության միջև ստորագրվեց համաձայնագիր Կարաբյուքի մետալուրգիական կոմբինատի 3-րդ դոմնային վառարանի կառուցման վերաբերյալ, այն հաշվով, որ կոմբինատի տարեկան արտադրողականությունը կազմի 750 հազար տոննա պողպատ: Այդ նույն օրը Կարաբյուքում տեղի ունեցավ նոր դոմնային վառարանի շինարարությունը սկսելու արարողությունը, որի ժամանակ Կրուպուլը դրեց հիմքի առաջին աղյուսը<sup>31</sup>: Բայց շուտով, այդ պատվերը թուրքական կառավարությունը հանձնեց «Ջալցղիտտեր ինդուստրի բաու» և «Դեմադ» ֆիրմաներին<sup>32</sup>: Այդ աշխատանքներն արդեն մոտ են ավարտմանը:

<sup>31</sup> „Ekonomi gazetesi“, 1957, 19 mayis.

<sup>32</sup> „БИКИ“, 19 августа 1958, Приложение № 9, стр. 54.

Այնուհետև, Թուրքիայի երկաթուղային ճանապարհների գլխավոր վարչությունը Կրուպայի հետ սկզբունքային համաձայնություն է կազմակերպել 80 մլն. գուլլար արժեքով Թուրքիային երկաթուղային սարքավորում վաճառելու մասին: Այդ սարքավորումը օգտագործվելու է Մուշ-Վան-Կոթուր (460 կմ) ճանապարհի շինարարության նպատակով: Հայտնի է նաև, որ Կրուպայը մտադիր է Վանա լճի վրա, Տաթլիանից մինչև Վան լաստանավ աշխատացնել: Այդ սարքավորումը վաճառվելու է թուրքական քրոմի մատակարարումների դիմաց: Կրուպայի կոնցերնը ստացավ նաև Իզմիդում շորտորդ թղթի գործարանի շինարարության պատվերը, որը տարեկան արտադրելու է 20 հազար տոննա թուղթ: Շինարարության արժեքը կազմելու է 7 մլն. թլիրա<sup>33</sup>: Կրուպայի ու Թուրքիայի միջև նախնական համաձայնություն ձևաբերվեց նաև Բուրսայի շրջանում վոլֆրամի հանքերի համատեղ շահագործման մասին<sup>34</sup>: Թուրքական կառավարությունը Կրուպային հանձնեց վեց ցեմենտի գործարանի շինարարության ու մոնտաժման պատվերը<sup>35</sup>:

Էդրեմիտի մոտ կառուցվող մետալուրգիական կոմբինատի շինարարության պատվերը նույնպես հանձնվեց Կրուպային: Կոմբինատի տարեկան ար-

<sup>33</sup> „Cumhuriyet“, 1957, 5 haziran.

<sup>34</sup> „Cumhuriyet“, 1957, 29 mayis.

<sup>35</sup> „БИКИ“, там же, стр. 51.

տադրանքը կազմելու է 600 հազար տոննա սյուր-  
սլաս, իսկ շինարարության արժեքը կկազմի 400  
մլն. թ. լիրա: Բոննը հետագայում թուլլատրեց  
այդ վարկը տրամադրել Թուրքիային<sup>36</sup>:

Իր իսկ հայտարարության համաձայն, Կրուպ-  
պը մտադիր է մասնակցել նաև սինթետիկ ման-  
վածքի ու նավթաթոր գործարանների և Բոսֆորի  
վրա կամուրջի շինարարությանը և այլն: Ի դեպ,  
անհրաժեշտ է նշել, որ Կրուպպի կոնցերնը վա-  
ղուց էր ձգտում ստանալ Բոսֆորի վրա կամուրջի  
շինարարության պատվերը: Դեռևս 1953 թվա-  
կանին ամերիկյան մամուլը հաղորդում էր, որ  
«Թուրքական կառավարության համար Կրուպպը  
պետք է միացնի Բոսֆորի ասիերը, գերմանական  
մի ճարտարապետի \* կողմից նախագծված մեկ  
մղոն երկարությու՞ն ունեցող կախովի կամուրջով,  
որի շինարարությունը կարժենա 70 մլն. դոլլար»<sup>37</sup>:

Շուտով Թուրքիա ժամանեցին Կրուպպի մաս-  
նագետները Բոսֆորի վրա շորս հենարանով  
երկաթբետոնե կամուրջի կառուցման հարցերով  
զբաղվելու համար: Այդ մասնագետների հայ-  
տարարությամբ, իրենց նախագիծն ավելի էժան  
ու հաստատուն է, քան կախովի կամուրջի  
շինարարության ամերիկյան նախագիծը: Սակայն

<sup>36</sup> „Middle East Economic Digest“, 1958, 5 december,  
p. 392.

<sup>37</sup> „New-Republic“, 1953, 14 december, p. 10.

ինչպես հետադաշում հայտարարեց Կրուպսկը, այդ կամուրջի շինարարությունը հետաձգվում է, որովհետև այն դժվար կլինի իր համար:

Իսկ նավթաթոր գործարանի շինարարության կապակցությամբ Կրուպսկը հայտարարեց, որ մտադիր է այդ գործին մասնակից դարձնել նաև ամերիկյան կապիտալին, քանի որ ինքը կարող է ներդնել միայն 100 մլն. մարկ<sup>38</sup>: Այնուհետև Թուրքիա ժամանեցին Կրուպսկի կոնցերնի մասնադեռերը վոլֆրամի ու ածխի հանքերի շահագործման հարցերն ուսումնասիրելու նպատակով, իսկ մեքենաշինության ու քիմիական արդյունաբերության ընկերությունը Կրուպսկի հետ համաձայնվեց վերադառնալու ման համար ռեխնիկական մասնագետներ ուղարկելու հարցում:

Բանակցությունների արդյունքներին նվիրված մամուլի կոնֆերանսում երբ Կրուպսկին հարցրին, թե նա ինչ է ցանկանում Թուրքիային, նա ուղղակի հայտարարեց, որ ինքը ցանկանում է, որ Թուրքիան «գնա գյուղատնտեսական հումքի և հանքային հանածոների նկատմամբ Արևմտյան Գերմանիայի աճող պահանջները ավելի լայն բավարարելու ճանապարհով»<sup>39</sup>: Իսկ Կրուպսկի կոնցերնի

<sup>38</sup> „Recherches internationales á la lumière du marxisme“, 1958, № 8, juillet-août, p. 182.

<sup>39</sup> „Zafer“, 1957, 1 haziran.



կառավարիչ էոնստ Կուենը իր հերթին հայտարարեց, որ Թուրքիան իրենից ներկայացնում է իդեալական վայր կոնցերնի գործունեության համար<sup>40</sup>: Ինչպես տեսնում ենք, Կրուպպը և իր կառավարիչը ավելի հեռուն գնացին, քան ուրիշները, որոնք ասեն կերպ սքողում են արևմտագերմանական մոնոպոլիաների շահագիտական նպատակները Թուրքիայում:

Վերջերս հայտնի դարձավ նաև այն, որ Կրուպպի ֆիրման ձեռնարկել է երկաթահանքերի հետադոտական աշխատանքներին, Իզմիրի և Ալեքսանդրեստոպլի շրջաններում<sup>41</sup>: Թուրքական մամուլի հաղորդման համաձայն, Կրուպպը մտադրություն ունի Թուրքական կառավարության ու մասնավոր կապիտալի մասնակցությամբ այստեղ կառուցելու արդյունաբերական ձեռնարկություններ 1 մլրդ. մարկ արժողությամբ<sup>42</sup>:

Եթե Կրուպպին հաջողվի իր նախատեսած կապիտալ ներդրումների թեկուղ կեսն իրագործել, ապա կստացվի որ նա ավելի ուժեղ դիրքերի տեղ կդառնա Թուրքիայում, քան արևմտագերմանական բոլոր մյուս մոնոպոլիաները և նույնիսկ ամերիկյան մոնոպոլիաները միասին վերցրած:

Կրուպպի կոնցերնը գերմանական ժողովրդին

<sup>40</sup> „Journal d'Orient“, 1957, 27 octobre.

<sup>41</sup> „L'Asie Nouvelle“, 1959, mars, p. 69.

<sup>42</sup> „Milliyet“, 1957, 19 mayis.

ինչպես հետադաշում հայտարարեց Կրուպսկը, այդ կամուրջի շինարարությունը հետաձգվում է, որովհետև այն դժվար կլինի իր համար:

Իսկ նավթաթոր դործարանի շինարարության կապակցությամբ Կրուպսկը հայտարարեց, որ մտադիր է այդ դործին մասնակից դարձնել նաև ամերիկյան կապիտալին, քանի որ ինքը կարող է ներդնել միայն 100 մլն. մարկ<sup>38</sup>: Այնուհետև Թուրքիա ժամանեցին Կրուպսկի կոնցերնի մասնագետները լուրջրամի ու ածխի հանքերի շահագործման հարցերն ուսումնասիրելու նպատակով, իսկ մեքենաշինության ու քիմիական արդյունաբերության ընկերությունը Կրուպսկի հետ համաձայնվեց վերապատրաստման համար տեխնիկական մասնագետներ ուղարկելու հարցում:

Բանակցությունների արդյունքներին նվիրված մամուլի կոնֆերանսում երբ Կրուպսկին հարցրին, թե նա ինչ է ցանկանում Թուրքիային, նա ուղղակի հայտարարեց, որ ինքը ցանկանում է, որ Թուրքիան «դնա դյուզատնտեսական հումքի և հանքաչին հանածոների նկատմամբ Արևմտյան Գերմանիայի աճող պահանջները ավելի լայն բավարարելու ճանապարհով»<sup>39</sup>: Իսկ Կրուպսկի կոնցերնի

<sup>38</sup> „Recherches internationales á la lumière du marxisme“, 1958, № 8, juillet-août, p. 182.

<sup>39</sup> „Zafer“, 1957, 1 haziran.

կառավարիչ էոնստ Կուենը իր հերթին հայտարարեց, որ Թուրքիան իրենից ներկայացնում է իդեալական վայր կոնցերնի գործունեության համար<sup>40</sup>: Ինչպես տեսնում ենք, Կրուպպը և իր կառավարիչը ավելի հեռուն գնացին, քան ուրիշները, որոնք աճեն կերպ սքողում են արևմտագերմանական մոնոպոլիաների շահագիտական նպատակները Թուրքիայում:

Վերջերս հայտնի դարձավ նաև այն, որ Կրուպպի ֆիրման ձեռնարկել է երկաթահանքերի հետադոտական աշխատանքներին, Իզմիրի և Ալեքսանդրեստայի շրջաններում<sup>41</sup>: Թուրքական մամուլի հաղորդման համաձայն, Կրուպպը մտադրություն ունի Թուրքական կառավարության ու մասնավոր կապիտալի մասնակցությամբ այստեղ կառուցելու արդյունաբերական ձեռնարկություններ 1 մլրդ. մարկ արժողությամբ<sup>42</sup>:

Եթե Կրուպպին հաջողվի իր նախատեսած կապիտալ ներդրումների թեկուղ կեսն իրագործել, ապա կստացվի որ նա ավելի ուժեղ դիրքերի տեղ կդառնա Թուրքիայում, քան արևմտագերմանական բոլոր մյուս մոնոպոլիաները և նույնիսկ ամերիկյան մոնոպոլիաները միասին վերցրած:

Կրուպպի կոնցերնը գերմանական ժողովրդին

<sup>40</sup> „Journal d'Orient“, 1957, 27 octobre.

<sup>41</sup> „L'Asie Nouvelle“, 1959, mars, p. 69.

<sup>42</sup> „Milliyet“, 1957, 19 mayis.

արդեն պատճառել է բաղմամբով դժբախտություններ, որովհետև այն հանդիսանում է երկու համաշխարհային պատերազմները սանձազերծող գերմանական մոնոպոլիաների սլարաղլուխը:

Կրուպայի կոնցերնի գործունեության ընդարձակումը Թուրքիայում վերջինիս ուղղակի լծում է արևմտագերմանական ռազմամուլ մոնոպոլիաների ռազմակառքին, ու թուրք ժողովրդի բախտը կապում Արևմտյան Գերմանիայի ռեանշիստների արկածախնդրական քաղաքականության հետ:

Այն, որ օտարերկրյա և հատկապես արևմտագերմանական կապիտալը Թուրքիայում կառուցելու է մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, դեռ բուլորովին չի նշանակում, թե կփոխվի երկրի գյուղատնտեսական բնույթը, այն կգառնա արդյունաբերական ինքնուրույն երկիր ու կազատվի, օտարերկրյա կապիտալի ազդեցությունից: Օտարերկրյա կապիտալի ներխուժման հետևանքը արդեն ակնհայտ է. Թուրքիան ավելի ու ավելի է ենթարկվում նրա շահերին ի վնաս թուրք ժողովրդի ու Թուրքիայի ազգային շահերին, նրա տնտեսական ու քաղաքական անկախության շահերին:

Արևմտյան Գերմանիան թափանցում է նաև Թուրքիայի գյուղատնտեսության մեջ: Այս կապակցությամբ տեղին է հիշել, որ արևմտագերմանական մոնոպոլիաները վաղուց են նպատակ դրել

հաստատելու իրենց դերի շխտանությունը Թուրքիայի գյուղատնտեսության, այսինքն նրա տնտեսության հիմնական ճյուղի վրա:

«Աիրշաֆտդդիենատ» հանդեսը պատասխանելով այն հարցին, թե Թուրքիայի տնտեսության ո՞ր ճյուղերի մեջ առավել շատ հնարավորություններ կան կապիտալ ներդրումներ կատարելու համար, տնտեսության մի շարք ճյուղերի հետ միասին շեշտում էր նաև գյուղատնտեսությունը<sup>43</sup>:

1957 թվականի մայիսի 6-ին Թուրքիայի մեջիսը ընդունեց № 6963 օրենքը արևմտադերմանասական գյուղատնտեսական օրինակելի-ցուցադրական տնտեսությունների կազմակերպման մասին:

Այդ օրենքի համաձայն թուրքական կողմը տրամադրում է հողային տարածություններ օրինակելի տնտեսությունների համար: Վերջիններս ազատվում են ընկերություններից դանձվող, ինչպես նաև կառույցների, հողային, գերբային և ուրիշ հարկերից: Հարկերից ու մաքսերից ազատվում են նաև տնտեսությունների կողմից ներմուծվող ապրանքները<sup>44</sup>: Թուրքական մամուլի հաղորդումների համաձայն նախատեսվում է նաև, որ օրինակելի տնտեսությունները կհիմնվեն արևմտադերմանական օրինակով: Արևմտյան Գերմանիան սխառավորվեց Թուրքիային տրամադրել իր

<sup>43</sup> Yves Fanchon et Maurice Leruth, *ibid*, p. 86.

<sup>44</sup> „T. C. Resmi gazete“, 1957, 14 mayis, s. 17076.

գիտական հետազոտությունների արդյունքներն ու մեթոդները, ինչպես նաև գյուղատնտեսական տեխնիկա<sup>45</sup>: Պաշտանադրի համաձայն, պետք է ստեղծվեն երեք այդպիսի տնտեսություն և բացվեն դասընթացներ գյուղատնտեսական մասնագետների պատրաստման համար:

Արևմտագերմանա-թուրքական օրինակելի ցուցադրական առաջին տնտեսությունը հիմնվեց Գյունենի մոտ՝ Մարմարչա ծովի ափին<sup>46</sup>: Այդ տնտեսությունն Արևմտյան Գերմանիայից արդեն ստացել է գյուղատնտեսական մեքենաներ ու ցեղային անասուն:

Այդ նույն թվականի հուլիսի 31-ին Թուրքիայի գյուղատնտեսության մինիստր էսադ Բուդադողլուն օրինակելի տնտեսությունների գիրեկտոր Ռեմզի Այոզգերի ու Անկարայի Գյուղատնտեսական ինստիտուտի գիրեկտոր Նեժատ Բերմենի ուղեկցությամբ մեկնեց Արևմտյան Գերմանիա, լիբջինի գյուղատնտեսությունը ծանոթանալու նպատակով:

Կազմակերպելով իրենց օրինակելի տնտեսությունները Թուրքիայում արևմտագերմանական մոնոպոլիաները հետապնդում են հետևյալ նպատակը՝ շահագրգռել Թուրքիային իր գյուղատնտեսությունը ավելի մեծ ուշադրություն դարձնելու:

<sup>45</sup> „Zafer“, 1957, 16 Eylül.

<sup>46</sup> „Industrie kurier“, 1958, 10 April.

Գեո ավելին, էրհարդը իր աչցելության ժամանակ հասկացրեց թուրքական կառավարութեանը, որ Թուրքիայի տնտեսական դրութեան բարելավումը հնարավոր է միայն գյուղատնտեսութեան արտադրանքի շեշտակի ավելացումը ու արտահանութեանը և, որ այդ նպատակով անհրաժեշտ է լայնորեն օգտագործել ժամանակակից տեխնիկան ու մեքենայացումը: Բացի դրանից, նա թուրքական կառավարողների հետ քննարկեց նաև Թուրքիայի գյուղատնտեսութեան զարգացման նախագիծը, որը մշակվել էր պրոֆ. Բաադեի<sup>47</sup> կողմից և համաձայնեցնելու ամեն անգամ այդ նախագիծին: Ինչպես հետագայում հայտնի դարձավ թուրքական մամուլի հաղորդումներից, երկու երկրներն համաձայնութեան էին եկել, որ Արևմտյան Գերմանիան կապիտալ ներդրումներ կատարի նաև Թուրքիայի գյուղատնտեսութեան մեջ: Եվ դա հասկանալի է, չէ՞ որ արևմտյան երկրները և, առաջին հերթին Արևմտյան Գերմանիան, Թուրքիային ևն հատկացնում ՆԱՏՕ--ի հումքային հավելուկի դերը: Իզուր չէ, որ «Ինդուստրիալուրիեր» թերթը այդ տնտեսութեանների ստեղծման կապակցութեամբ հարցնում էր «Արդյոք Թուրքիան շրջադարձ չի՞ կատա-

<sup>47</sup> Պրոֆ. Ֆրից Բաադեն բունդեստագի անդամ է ԳՄԴՊ-ի կողմից և Քիլի համալսարանի համաշխարհային տնտեսութեան ինստիտուտի դիրեկտորն է:

րում դեպի գյուղատնտեսական երկիր»<sup>48</sup>: Թերթը շատ նուրբ և քողարկված ձևով թուրքական կառավարողներին հասկացնում էր, թե արևմտադեմանական մոնոպոլիաները ինչ նպատակ են հետապնդում Թուրքիայում օրինակելի գյուղատնտեսական տնտեսություններ հիմնելով: Դրանք կլինեն առաջին օտարերկրյա գյուղատնտեսական տնտեսությունները Թուրքիայի տերիտորիայի վրա և, քանի որ նրանց մեծ առավելություններ են տրվում, ուստի սպասելի է, որ նրանք շուտով լայն տարածում կգտնեն երկրում:

1960 թվականի ապրիլի սկզբներին պրոֆ. Բաադեն նորից եղավ Թուրքիայում և Նվրոպական տնտեսական համագործակցության կազմակերպության հանձնարարությամբ շարունակեց երկրի գյուղատնտեսության ու տուրիզմի վիճակի ուսումնասիրությունը: Նա մշակեց գյուղատնտեսության զարգացման ու նրա արտադրանքի արտահանման ավելացման տասնամյա վերջնական նախագիծ, որը քննության առնվեց Անկարայում այդ նույն թվականի ապրիլի 20—22-ին մի շարք միջխարությունների միացյալ հանձնաժողովի կողմից<sup>49</sup>: Արդեն այն փաստը, որ Թուրքիայի գյուղատնտեսության ուսումնասիրությունը հանձնարարվել է պրոֆ. Բաադեին, մի անգամ ևս խոսում

<sup>48</sup> „Industriekurier“, 1958, 10 April.

<sup>49</sup> „Zafer“, 1960, 23 nisan.



է այն մասին, թե որքան մեծ է Արևմտյան Գերմանիայի շահագրգռվածությունը Թուրքիան իր գյուղատնտեսական հումքի բազա դարձնելու հարցում: Թեև Բաադեի մշակած նախագծի մասին արտասահմանյան մամուլում միայն կցկտուր տվյալներ երևացին, այնուամենայնիվ մի բան կարելի էր շկասկածել, որ նրա նախագծի գլխավոր նպատակը Թուրքիայի գյուղատնտեսությունն արևմտագերմանական մոնոպոլիաների շահերին ենթարկելն է: Այսպիսով թուրքական գյուղատնտեսությունը նույնպես հետզհետե կընկնի օտարերկրյա կապիտալի ազդեցության տակ: Թուրքիայի գյուղատնտեսությունը, որն առանց այն էլ դժվարությունների է հանդիպում արտաքին առևտրական շուկաներում, նման դեպքում ավելի ծանր դրություն մեջ կընկնի:

Արևմտագերմանական մոնոպոլիաների ներխուժմանը զուգընթաց Թուրքիայի վրա ուժեղացել է Արևմտյան Գերմանիայի նաև ռազմական ու քաղաքական ազդեցությունը: Բոննի ռեսպուբլիկայի հռչակման հենց առաջին օրերից երկու երկրների հարաբերությունները գնալով ընդունում էին սերտ բնույթ: Թուրքական կառավարողները գոհունակությամբ դիմավորեցին Գերմանիայի Ֆեդերալ ռեսպուբլիկայի հռչակումը: Իսմեթ Ինենյուն՝ Թուրքիայի այն ժամանակվա պրեզիդենտը՝ շնորհավորական հեռագիր հղեց Գ.ՖՌ-ի պրեզի-

դենտ Հեյսին: Իսկ թուրքական «Տան» թերթը, արտահայտելով հառապարտող շրջանների կարծիքը, այդ կապակցությամբ գրում էր, «Ամերիկացիները սկսեցին ուղղել այն սխալը, որ նրանք կատարեցին շորս տարի առաջ, թուշ տալով Գերմանիայի ջախջախումը»<sup>50</sup>:

Թուրքիան կապիտալիստական երկրներից մեկն էր, որ առաջինը ճանաչեց Գերմանիայի Զեդերլառեսպուբլիկան ու նորմալ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց նրա հետ: Անկարայի դեսպանությունից բացի արևմտյան Գերմանիան Թուրքիայում բացել է դիտավոր հյուպատոսություն Ստամբուլում և հյուպատոսություններ Իզմիրում ու Ալեքսանդրեստայում:

Թուրքիան իր հերթին դեսպանություն ունի Բոննում և հյուպատոսություններ արևմտյան Բեռլինում, Ֆրանկֆուրտում-Մայնի վրա, Համբուրգում, Մյունխենում, Բրեմենում, Գյուտենդորֆում ու Հաննովերում<sup>51</sup>:

Արևմտյան Գերմանիայի արտաքին քաղաքական ակտիվությունը Թուրքիայում նշանավորվեց Ադենաուերի այցելությամբ (1953 թվականի աշուն): Ադենաուերը այստեղ բանակցություններ վարեց նաև երկու երկրների միջև սաղմահան ու քաղաքական համադորժակցություն հաստատելու

<sup>50</sup> Տե՛ս „Новое время“, 1950, № 3, стр. 24.

<sup>51</sup> W. Uhrenbacher, ibid, s. 14.

հարցի շուրջը: Այդ ժամանակվանից ի վեր, Թուրքիան սկսեց ավելի ջերմորեն պաշտպանել Արևմտյան Գերմանիան ՆԱՏՕ-ի մեջ ընդունելու հարցը:

Արդեն 1954 թվականի հոկտեմբերին Թուրքիան ստորագրեց արձանագրություն ԳՖՌ-ն ՆԱՏՕ-ի կազմի մեջ ընդունելու մասին, որից հետո Արևմտյան Գերմանիայի ու Թուրքիայի կապերը ռազմական ասպարեզում ընդունեցին ակնհայտ բնույթ: Արևմտյան Գերմանիայի ու Թուրքիայի միջև ռազմական կապերի ընդլայնումը ՆԱՏՕ-ի շրջանակներում համապատասխանում է ԱՄՆ-ի արտաքին համաշխարհային քաղաքականությանը ու հովանավորում է նրա կողմից: Նա այդ երկրներին է հատկացնում իր դիսավոր ռազմական պլանցարմաների դերը, մեկին՝ արևմտյան եվրոպայում, մյուսին՝ Մերձավոր ու Միջին արևելքում:

ԳՖՌ-ի ՆԱՏՕ-ի մեջ ընդունվելուց հետո հաճախակի են դարձել արևմտագերմանական դինվորականության այցելությունները Թուրքիա:

Առաջին անգամ, արևմտագերմանական դինվորականները Թուրքիա ժամանեցին 1955 թվականի հոկտեմբերի վերջին: Արևմտագերմանական դինվորական պատվիրակության կազմը հետևյալն էր. ԳՖՌ-ի ռազմական մինիստր Թեոդոր Բլանկ (պատվիրակության ղեկավար), գեներալ Հոյզին-

գեր, գնդատակա Կառույթախ և Բլանկի շտաբի սկա-  
 ֆոն Դեմ Բուշե: Արևմտագերմանական զինվորա-  
 կանները այցելեցին թուրքական զորամասերը  
 Իզմիրում, Էսկիշեհիրում, Ստամբուլում, Անկա-  
 րայում, մի շարք ռազմական ուսումնարաններ,  
 ավիացիոն գործարան Կայսերիում ու մասնակցե-  
 ցին թուրքական բանակի զորախաղերին Ստամ-  
 բուլի մերձակայքում: Նրանք եղան նաև Թուրքիա-  
 յում կառուցված ամերիկյան ռազմա-օդային ու  
 ռազմա-ծովային բազաներում և սովետա-թուրքա-  
 կան սահմանի վրա: Պատվիրակության Թուրքիա-  
 յում դռնվե ու ժամանակ, թուրքական մամուլը,  
 ու ռադիոն, իշխանութչունների թուլլտվութչամբ  
 ու հովանավորութչամբ, ամեն կերպ փառաբանում  
 էին երկու երկրների անցյալի «բարեկամութչու-  
 նը», գովերգում նորաստեղծ կապերը ու պահան-  
 ջում ռազմաքաղաքական համագործակցութչյան  
 հաստատում նրանց միջև<sup>52</sup>:

Վերջում Բլանկը բանակցութչուններ վարեց  
 թուրքական կառավարութչյան հետ ՆԱՏՕ-ի դժով  
 ռազմական սերտ համագործակցութչյան հաստատ-  
 ման ուղղութչամբ: Սակայն այստեղ հարկավոր է  
 նշել, որ բանակցող երկու կողմերն էլ աչդ համա-  
 գործակցութչունը դիտում էին որպես թշնամական  
 բայ՝ ուղղված Սովետական Միութչյան դեմ:

1957-թ. մարտի վերջին Թուրքիա ժամանած

<sup>52</sup> „Правда“, 12 ноября 1955.

Արևմտյան Գերմանիայի ռազմական նոր միմիստր Շտրաուսը թուրքական կառավարողների հետ բանակցություններ վարեց նաև ռազմական հարցերի շուրջը: Առևտրական սլայմանագիրը Թուրքիայի կողմից Արևմտյան Գերմանիային ղենք ու զինամթերք վաճառելու մասին անկասկած հետապրնդում է նաև երկու երկրների ռազմական կապերի ընդլայնման նպատակ: Բանակցությունների մյուս արդյունքն եղավ այն, որ Արևմտյան Գերմանիան հնարավորութուն ստացավ մասնակցելու թուրքական բանակի վերազինմանը՝ զինվորական հրահանգիչներ տրամադրելու միջոցով: Այդ նույն ժամանակ Թուրքիայում էին դառնում նաև գեներալ Պանիցկին, ծովակալ Ռուզեն և բունդեստագի ազգային պաշտպանության հանձնաժողովի անդամ Դևերկուխին: Արևմտագերմանական ռևանշիստներին, ինչպես աչդ մասին ցինիկաբար հայտարարեց Հուլիսդերը, դուր էր գալիս հատկապես այն հանգամանքը, որ սոցիալիզմի համաշխարհային սիստեմի նկատմամբ Մենդերեսի կառավարության ու Արևմտյան Գերմանիայի թշնամական դիրքերի միջև ոչ մի տարբերություն չկա<sup>53</sup>:

Արևմտագերմանական ռևանշիստները Թուրքիան արդեն դիտում են մասամբ նաև որպես իրենց ռազմական պլացդարմը Մերձավոր արևելքում: Այդ նույն թվականի հուլիսի սկզբներին

<sup>53</sup> „Ulus“, 1957, 16 haziran.

Թուրքիա ժամանեց արևմտագերմանական ազմա-ծովային պատվիրակութունը ԳՖՌ-ի ազմա-ծովային ուժերի տեսչի տեղակալ՝ ծովակալ Վադ-ների գլխավորությամբ: Պատվիրակութունը ծանոթացավ Թուրքիայի ազմա-ծովային բազանե-րին Քյուլջուքում և Ալեքսանդրետտայում:

Արևմտագերմանական զինվորականության զործունեութունը Թուրքիայում ուժեղացավ հատկապես 1958 թվականի հուլիսին, երբ ամերիկյան իմպերիալիզմն ազրեսիա սանձադերձեց Լիրա-նանի դեմ: Հենց այդ օրերին էր, որ Թուրքիայի պրեմիեր-մինիստր Մենդերեսը ուղևորութուն կատարեց դեպի Բոնն, որտեղ նա Ադենաուերի հետ զաղտնի բանակցություններ վարեց Թուրքիայի տերիտորիայում - արևմտագերմանական զորամասեր տեղադրելու մասին: Ըստ պայմանավորվածու-թյան, հիշված զորամասերը հետագայում պետք է իրենք ևս մասնակցեին այդ ազրեսիային:

Մենդերեսի այդ ուղևորությունից հետո, Արևմրտյան Գերմանիայի բարձրաստիճան զինվորա-կանների մի խումբ «հատուկ հանձնարարությամբ» ժամանեց Թուրքիա: Այս խումբն եղավ Անկարա-յում, Ադանայում և Թուրք-սիրիական ու Թուրք-իրաքյան սահմանների վրա: Արևմտագերմանա-կան զինվորականները տեղում քննարկեցին այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ կլինեին ամերիկյան ազրեսիայի ընդարձակման դեպքում:

Սակայն արևմտագերմանական իմպերիալիզմի ագրեսիվ պլանները հօգս ցնդեցին ամերիկա-անգլիական իմպերիալիստների զավթողական պլանների հետ միասին՝ հանդիպելով Սովետական Միության ու սոցիալիստական մյուս երկրների հետևողական խաղաղասիրական քաղաքականությանը:

1958 թ. հոկտեմբերի սկզբին Թուրքիա ժամանեց արևմտագերմանական ռազմա-օդային մի միավորում, որն այստեղ զորախաղեր անցկացրեց: Արդեն 1959 թվականի ամռանը Բանդերմայի մոտ հիմնվեց արևմտագերմանական ռազմա-օդային բազա, ուր տեղադրվեցին ռեակտիվ ավիացիայի 33-րդ էսկադրիլիայի միավորումները<sup>54</sup>: Թուրքիայում սրևմտագերմանական օդաչուները զբաղվում են նշանակետային ռմբաձգությամբ<sup>55</sup>, բայց ոչ թե ուսումնական, այլ իսկական ռազմական հրադենով: Թուրքական կառավարողները Բանդերմայի ռազմա-օդային բազան արևմտագերմանական դինվորականությանը տրամադրեցին առանց մեջլիսի գիտության, որը սահմանադրության կոպիտ խախտում էր ու Թուրքիայի սուվերենության ոտնահարում: Թուրքական սպաներն իրենց հերթին վերապատրաստման դասընթացներ են անցնում

<sup>54</sup> „Труд“, 25 февраля 1960.

<sup>55</sup> „Правда“, 2 марта 1960.

Արևմտյան Գերմանիայում և մասնակցում այս-  
տեղ տեղի ունեցող զորախառնակներին:

Թուրքիայի և Արևմտյան Գերմանիայի միջև  
ուսումնական կապերի հաստատումն ու ընդլայնումը  
ազգային մեծ շարիք են ներկայացնում Թուրք ժո-  
ղովրդի ապագայի համար, որն արդեն երկու ան-  
գամ՝ առաջին և երկրորդ համաշխարհային պա-  
տերազմների ժամանակ, ճաշակել է այդ «համա-  
դորժակցության» դառը պատուհները:

Արևմտյան Գերմանիան աշխուժացրել է նաև  
իր դադափարային հարձակումը Թուրքիայում:  
Բացի նրանից, որ Թուրքական համալսարաններում  
ու բուհերում վաղուց արդեն դասախոսում են  
Արևմտյան Գերմանիայից ժամանած նացիստ դա-  
սախոսներ, Թուրքական կառավարությունը խրա-  
խուսում է նաև Թուրք ուսանողների ուսումնառու-  
թյունն Արևմտյան Գերմանիայի բուհերում: Այն-  
տեղ սովորում են մոտ 1600 Թուրք ուսանողներ,  
այսինքն ավելի քան որևէ այլ երկրում<sup>56</sup>: 1948 թ.  
դեկտեմբերին Ստամբուլում սկսեց լույս տեսնել  
«Յենի Իսթանբուլ» թերթը, որը հանդիսանում է  
«Թյուրքիշե պոստ»-ի ժառանգորդը: Թերթի խրմ-  
րագիրն էր Ստամբուլի համալսարանի նացիստ  
դասախոսներից մեկը՝ Նիյմարկը, որը թաքնվում  
է Հաբիբ էդիպ Թյորեհան ծածկանվան տակ: Թեր-  
թին աշխատակցում են նաև ուրիշ նացիստներ,

<sup>56</sup> „Zafer“, 1957, 9 mayıs.



իսկ ֆոն Պապենը և Շախտը «պատվավոր» թղթա-  
կիցներ են: Մինչև վերջերս թերթն ամեն կերպ գո-  
վերգում էր երկու երկրների անցյալի «բարեկա-  
մությունը» ու հանդիսանում էր Արևմտյան Գեր-  
մանիայի դադափարային հարձակման կենտրոնը:

Թուրքիայի վրա Արևմտյան Գերմանիայի դա-  
դափարական ազդեցության ուժեղացմանն էր  
ուղղված 1957 թվականի մայիսի 8-ին կնքված  
երկու երկրների միջև «կուլտուրական համագոր-  
ծակցության» պայմանագիրը, որը կնքվեց Արև-  
մտյան Գերմանիայի պրեզիդենտ Հեյսի Թուր-  
քիայում գտնվելու ժամանակ: Այս պայմանագրի  
համաձայն, երկու երկրների բուհերում հիմնվեցին  
ամբիոններ, որոնք զբաղվում են այդ երկրների  
լեզվի, պատմության, գրականության ու արվեստի  
հարցերի ուսումնասիրությամբ: Պայմանագիրը  
նախատեսում էր նաև դասախոսների, ուսուցիչ-  
ների, ուսանողների ու տեխնիկական մասնագետ-  
ների փոխանակություն: Այս պայմանագիրը կրնա-  
վեց հինգ տարի ժամանակով: Հենց այդ ժամանակ  
հայտնի դարձավ, որ Հեյսի անձնական միջա-  
մտությամբ 150 թուրք ուսանողներ Արևմտյան  
Գերմանիայի հաշվին մեկ տարի ժամկետով կարող  
են շարունակել իրենց կրթությունը արևմտագեր-  
մանական տեխնիկական բուհերում<sup>57</sup>:

Այստեղ աչքի է դարնվում այն հանգամանքը,

<sup>57</sup> „Zafer“, 1957, 9 mayis; „Monde“, 1957, 14 mai.

որ վերոհիշյալ պայմանագիրը կնքվեց Հեյսի Թուրքիայում գտնվելու ժամանակ, որպեսզի նրա շուրջը բարձրացրած աղմուկը մեծ տպավորություն թողնի թուրքական հասարակության վրա:

Թուրքական կառավարողները առանձնահատուկ ընդունելություն կազմակերպեցին Հեյսի պատվին: Նա ընտրվեց Անկարայի պատվավոր քաղաքացի, նրա դիմանկարով բաց թողնվեց փոստային դրոշմանիշ, որպիսի պատիվ անցյալում չէր արված օտար պետությունների դեկավարներին, այլևս չենք խոսում այն մասին, որ նրա պատվին կազմակերպվեցին նաև մի շարք ճոխ ընդունելություններ: Հեյսի Թուրքիայում գտնվելու ժամանակ թուրքական կառավարողները, մամուլն ու ռադիոն միարբերան գովերգում էին գերմանա-թուրքական վաղեմի «բարեկամությունը», Արևմտյան Գերմանիայի ավանդը, այսպես կոչված, «ազատ աշխարհի» ռազմական հպորտության բարձրացման գործում և այլն: Իսկ «Ճումհուրիեթ» թերթը Հեյսի այցելության կապակցությամբ գրում էր, որ Գերմանիայի ու Թուրքիայի ռեժիմները թեև փոխվեցին, բայց նրանց միջև գոյություն ունեցող բարեկամությունը և մտերմությունը չկորցրին իրենց արժեքն ու ջերմությունը<sup>58</sup>:

Թուրքիայում հիմնվեց նաև թուրք-արևմտագերմանական «բարեկամության» ընկերություն.

<sup>58</sup> „Cumhuriyet“, 1957, 5 mayıs.

որի գլխավոր նպատակն է, ամեն կերպ աջակցել Արևմտյան Գերմանիայի ազդեցութեան տարածմանը Թուրքիայում: 1958 թվականի փետրվարի 21-ին այդ ընկերութունն Անկարայում բացեց իր բաժանմունքը: Մինչ այդ Անկարայում բացվել էր այդ ընկերութեան գրադարանը: Ընկերութունը բացել է իր բաժանմունքները նաև երկրի մի շարք այլ վայրերում:

Բացի դրանից հիմնվել է երկու երկրների միջպառլամենտական «բարեկամութեան» խումբ:

Թուրքիայի վրա ուժեղացել է նաև Արևմտյան Գերմանիայի արտաքին քաղաքական ազդեցութունը, որը թուրքական էկոնոմիկայի վրա արևմտագերմանական մոնոպոլիաների ազդեցութեան ուժեղացման անմիջական հետևանքն է: Այդ երեւում է թեկուզ այն բանից; թե ինչպիսի համառութեամբ էին թուրքական կառավարողները սլաշտսլանում Արևմտյան Գերմանիայի ռազմականացման քաղաքականութունը, նրա դիրքը դերմանական ու սպառազինութունների մրցավազքի հարցերում: Թուրքական կառավարողները երկրի հասարակական կարծիքը նույնպես նախապատրաստում էին Արևմտյան Գերմանիայի օգտին: Այդ նպատակով նրանք 1959 թվականի մարտին Թուրքիա հրավիրեցին Արևմտյան Բեռլինի քաղաքապետի Բրանդտին, իսկ նույն թվի ապրիլի վերջին՝ նրա տեղակալ Ամրենին: Ամրենը Ան-

կարայում ու մի շարք այլ քաղաքներում հանդես  
 եկավ ղեկուցումներով Արևմտյան Բեռլինի հարցի  
 շուրջը, բռնազբոսիկ կերպով աղավաղելով  
 ՄՍՌՄ-ի առաջարկներն այդ հարցի կարգավորման  
 մասին: Կարևոր է այստեղ հիշատակել, որ Ամրե-  
 նը Թուրքիա ժամանեց հենց այն ժամանակ, երբ  
 շուտով ժնկում տեղի էր ունենալու մեծ պետու-  
 թյունների արտաքին գործերի մինիստրների խոր-  
 հրրդակցությունը՝ նվիրված Արևմտյան Բեռլինի  
 հարցին: Թե որքան ուժեղ էր Արևմտյան Գերմա-  
 նիայի ազդեցությունը Մենդերեսի կառավարու-  
 թյան արտաքին քաղաքականության վրա, ցույց է  
 տալիս այն փաստը, որ Թուրքական կառավարու-  
 թյունն այդ ժամանակ քննարկում էր սևծովյան  
 նեղուցները Սովետական Միության առաջ փակե-  
 լու հարցը, այն դեպքում, եթե վերջինս փակեր  
 Արևմտյան Գերմանիայից դեպի Արևմտյան Բեռ-  
 լին տանող ճանապարհները<sup>59</sup>: Ուղղակի պրովո-  
 կացիոն մտադրություն Սովետական Միության  
 նկատմամբ, այն էլ այն դեպքում, երբ հայտնի է,  
 որ Սովետական Միությունը երբեք այդպիսի նպա-  
 տակ չի ունեցել:

Այն փաստը, որ Թուրքիան հետևում էր Արև-  
 մրտյան Գերմանիայի ու անշխտական քաղաքա-  
 կանությանը, բոլորովին չէր բարձրացնում նրա  
 միջազգային հեղինակությունը և դեռ ավելին, մի

<sup>59</sup> Տե՛ս „Yeni gün“, 1959, 9 <sup>Ա</sup>agustos.

ավելորդ անգամ մերկացնում էր թուրքական կառավարողների արտաքին քաղաքականության հակաազգային ու հակաժողովրդական բնույթը:

Թուրքական կառավարողների վերոհիշյալ քաղաքականությունը չէր աջակցում Եվրոպայի կենտրոնում միջազգային լարվածության թուլացմանը ու խաղաղության ամրապնդմանը: Դեռ ավելին, այդ քաղաքականությունը չէր նպաստում նաև երկու հարևան երկրների՝ ՍՍՌՄ-ի ու Թուրքիայի միջև բարի-գրացիական հարաբերությունների վերականգնմանն ու հետագա զարգացմանը, որոնք Թուրքիայի ազգային անկախության ու անվտանգության գլխավոր երաշխիքներից մեկն են:

\* \* \*

Ինչպես հայտնի է, 1960 թվականի մայիսի 27-ին Թուրքիայում տեղի ունեցավ զինվորական հեղաշրջում: Կազմվեց նոր կառավարություն՝ գեներալ Զեմալ Գյուլսելի գլխավորությամբ: Գյուլսելի կառավարությունը մի շարք միջոցառումներ մշակեց երկրի տնտեսական վիճակը «կայունացնելու» նպատակով: Առաջին հերթին դադարեցվեցին մի շարք արդյունաբերական և ուրիշ ձեռնարկությունների, այդ թվում նաև Բոսֆորի վրա կախովի կամրջի շինարարության աշխատանքները, որոնք պահանջում էին երկարատև կապիտալ

ներդրումներ: Այնուհետև հայտարարվեց, որ կառավարութունը մտադիր է երկիրը միացնելու «ընդհանուր շուկային» և ջանքեր գործադրելու արտասահմանյան կապիտալի խրախուսման համար: Իսմեթ Ինենյուն, որը 1961 թվականի նոյեմբերին հաջորդեց Գյուլբեկին պրեմիեր-մինիստրի պաշտոնում, հայտարարեց, որ կառավարութունը կշարունակի Գյուլբեկի կառավարության քաղաքականութունը վերահիշյալ հարցերում: Այսպիսով ստացվում է, որ հեղաշրջումից հետո թուրքական կառավարության վերաբերմունքը «ընդհանուր շուկային» և օտարերկրյա կապիտալի նկատմամբ չի փոխվել:

Չնայած այն հանգամանքին, որ Արևմտյան Գերմանիայի ու Թուրքիայի նախկին կառավարության միջև գոյութուն ունեին սերտ կապեր, և Գեմոկրատական պարտիայի կառավարման ժամանակաշրջանում արևմտագերմանական մոնոպոլիաների դիրքերը այստեղ զգալիորեն ուժեղացան, այնուամենայնիվ Արևմտյան Գերմանիայի կառավարողներն ողջունեցին Բայար-Մենդերես արյունալի ռեժիմի անփառունակ վախճանը: Այդտեղի ունեցավ նախ այն պատճառով, որ հեղաշրջումը շուներ ո՛չ սոցիալական և ո՛չ էլ հակաիմպերիալիստական հեղաշրջման բնույթ, այլ իրենից ներկայացնում էր սովորական բուրժուական հեղաշրջում՝ կոչված ամրապնդելու կառավա-

բող դասակարգերի դիրքերը երկրում: Երկրորդ-  
Արևմտյան Գերմանիան և արևմտագերմանական  
մոնոպոլիաները շէին էլ կարող այլ կերպ վերա-  
բերվել կատարված փաստին, այլապես վտանգի  
կենթադրեին իրենց դիրքերը Թուրքիայում: Եվ  
երրորդ, ղինվորական իշխանությունների հռչա-  
կած սկզբունքներն երկրի տնտեսական դրության  
«կայունացման» ուղղությամբ արևմտագերմանա-  
կան մոնոպոլիաներին հույս ներշնչեցին, որ այս-  
տեղ ոչ միայն շեն սահմանափակվի, այլ ավելի  
կընդլայնվեն արտասահմանյան մոնոպոլիատական  
կապիտալի գործունեության շրջանակները, որը  
հարկավոր էր նրանց:

Արևմտագերմանական մոնոպոլիատական կա-  
պիտալի վերաբերմունքը Բայար-Մենդերես ռեժի-  
մի տապալման նկատմամբ առավել պարզ ու հրա-  
տակ ձևով արտահայտեց Ֆոն Պապենը, որը հե-  
ղաշրջման օրերին դառնվում էր Ստամբուլում: Նա  
իսկատար հավանություն տվեց Թուրքական ղին-  
վորականության միջոցառումներին և կոչ արեց  
արևմտյան երկրներին՝ տնտեսական օգնություն  
ցույց տալ Թուրքական նոր կառավարությանը:  
Նրա ասելով, որպեսզի Թուրքիան կարողանա հաղ-  
թահարել տնտեսական դժվարությունները, ան-  
հրաժեշտ է, որ արևմտյան երկրներն անհապաղ  
օգնություն տրամադրեն Գյուերսելին: Միաժամա-  
նակ Ֆոն Պապենը առաջարկեց, որ Թուրքիայի

դաշնակիցները զիջեն վերջինիս արտաքին պարտ-  
քերի զգալի մասը<sup>60</sup>:

Զինվորական հեղաշրջումից հետո անցած ժա-  
մանակամիջոցում արևմտադերմական մոնոպո-  
լիաներն ավելի ուժեղացրին իրենց ներխուժումը  
Թուրքիա: Նրանք մի շարք միջոցների ձեռնարկե-  
ցին՝ Թուրքիային իրենց տնտեսական «օգնության»  
ցանցը զցելու նպատակով: Արդեն 1960 թվականի  
նոյեմբեր ամսին, համաձայն Թուրքիայում Արև-  
մրտյան Գերմանիայի դեսպան ֆոն Բրոյխ-Օպ-  
պերտի հայտարարության, Արևմտյան Գերմա-  
նիան Թուրքիային տրամադրեց 207 մլն. թ. լիրա  
վարկ<sup>61</sup>:

Շատ շուտով, 1961 թվականի հունվարին  
ԳՖՍԻ-ի կառավարութունը սկսեց քննարկել Հու-  
նաստանին և Թուրքիային ուղղմական «օգնու-  
թյուն» տրամադրելու հարցում ԱՄՆ-ին փոխարի-  
նելու հարցը: Ինչպես հաղորդում էր հունական  
«էլեֆտերիա» թերթը, Արևմտյան Գերմանիան  
մտադրվում էր վերոհիշյալ երկու երկրներին տրա-  
մադրել ուղղմական հանդերձանք 1 մլրդ. մարկ  
գումարի չափով<sup>62</sup>: Բանակցությունները դրական  
արդյունք չտվեցին: Սակայն այս դեպքում կարե-  
վորն այն է, որ Արևմտյան Գերմանիան լուրջ

<sup>60</sup> „Cumhuriyet“, 1960, 30 haziran.

<sup>61</sup> „Ulus“, 1960, 19 kasım.

<sup>62</sup> „Ske“ „За рубежом“, 4 февраля 1961, стр. 4.



փորձ է կատարում իր ռազմական «օգնությունը»  
 վերոհիշյալ երկու երկրների վրին փաթաթելու  
 ուղղությամբ: Այդ նույն ամսին Բոննում սկսվե-  
 ցին արևմտագերմանա-թուրքական բանակցու-  
 թյունները նոր վարկի հարցի շուրջը: Որոշ ժա-  
 մանակից հետո բանակցություններն ընդհատվե-  
 ցին այն պատճառով, որ թուրքական կողմը ներ-  
 կայացնի ավելի մանրամասն տվյալներ այն նա-  
 խագծերի մասին, որոնց ֆինանսավորման հա-  
 մար տրամադրվելու էր վարկը: 1961 թվականի  
 ապրիլին այդ բանակցությունները վերսկսվեցին:  
 Մամուլի տվյալների համաձայն այդ վարկի գու-  
 մարը տատանվում էր 25—100 մլն. մարկի միջև<sup>63</sup>:  
 Հենց այդ ժամանակ տեղի ունեցավ ուղերձների  
 փոխանակում Գյուրսելի և Ադենաուերի միջև: Իր  
 ուղերձում Գյուրսելը գրում էր հետևյալը. «Հաճելի  
 է դիտակցե՛, որ ԳՖՌ-ի և Թուրքիայի կառավա-  
 րությունների միջև գոյություն ունեն սերտ և բա-  
 րեկամական հարաբերություններ, իսկ երկու եր-  
 կրրների ժողովուրդները փոխադարձ համակրանքի  
 ու եղբայրության ղգացմունք են տածում միմյանց  
 նկատմամբ»: Այնուհետև Գյուրսելը հույս էր հայտ-  
 նում, որ Արևմտյան Գերմանիան ապագայում ևս  
 տնտեսական «օգնություն» կտրամադրի Թուրքիա-  
 յին<sup>64</sup>: Իր պատասխան ուղերձում Ադենաուերը

<sup>63</sup> „Financial Times“, 1961, 5 april.

<sup>64</sup> „Yeni Istanbul“, 1961, 12 nisan.

խոստացաւ ամեն տեսակի «օգնութիւն» տրամադրել Թուրքիային: Բանակցութիւններն ավարտվեցին արևմտադերմանական . նոր վարկի տրամադրումով Թուրքիային: Վերսհիշյալ փաստերը խոսում են այն մասին, որ հեղաշրջումից հետո անցած ժամանակաշրջանում Արևմտյան Գերմանիայի ազդեցութիւնը Թուրքիայում ոչ թի թուլացաւ, այլ հակում ունի ավելի ուժեղանալու:

## ԹՈՒՐԲԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Սպառազինությունների մրցավազքի, օտարերկրյա մոնոպոլիստական կապիտալի խրախուսման թուրքական կառավարության քաղաքականությունը մեծ վնաս է հասցրել երկրին, նրա էկոնոմիկային ու ժողովրդին:

Նստյատերազմյան ժամանակաշրջանում թուրքիայի միայն ընդհանուր ազմական ծախսերը կազմել են մոտ 25 մլրդ. թ. լիրա, կամ երկու ու կես անգամ ավելի, քան ամերիկյան և մյուս օտարերկրյա ազմական, տնտեսական ու տեխնիկական «օգնությունը» միասին վերցրած: Ռազմական անհամեմատ բարձր ծախսերը նախ և առաջ հանդիսանում են պետական բյուջեի ուղծացման ու նրա մշտական պակասորդի դժխավոր պատճառը:

1950—1960 թվականների ընթացքում թուրքիայի պետական բյուջեի պակասորդը կազմել է 2141 մլն. թ. լիրա: Հաշվված է՝ եթե 1960 թվականի պետական բյուջեով նախատեսված բոլոր

հատկացումները իրացվեին, ապա բյուջեի պակասորդը կկազմեր 500 մլն. թ. լիրա<sup>1</sup>։

Մյուս կողմից, ռազմական ծախսերը զբրկում են արտադրության խաղաղ ճյուղերը անհրաժեշտ հատկացումներից։

Թուրքիայում տարեց-տարի աճում են նաև պետական ու առևտրական պարտքերը, կազմալուծվում ֆինանսները։ 1955 թվականի վերջերին երկրի ներքին ու արտաքին պետական պարտքերը կազմում էին 3060 մլն. թ. լիրա, էկոնոմիկայի ու առևտրի նախկին մինիստր Ուլաշի հայտարարությամբ, Թուրքիան այդ պարտքերը հաղիվ կարող էր մարել 2002 թվականին։ Առ 1959 թվականի հոկտեմբերի 31-ը Թուրքիայի պետական ներքին և արտաքին պարտքերը, ըստ ֆինանսների մինիստր Փոլաթքանի հայտարարության, կազմում էին 4894 մլն. թ. լիրա և այն էլ այն դեպքում, երբ արտաքին պարտքերը հաշվվում են հետևյալ կերպ 1 դոլլարը հավասար է 2,9 թ. լիրայի։ Եթե արտաքին պարտքերը հաշվարկվեին լիրայի հոր կուրսով՝ 1 դոլլարը հավասար է 9,2 լիրայի, ապա կստացվեր, որ Թուրքիայի պետական պարտքերը կազմում են 7925 մլն. թ. լիրա<sup>2</sup>։

1960—61 թվականների բյուջեի նախագծի

<sup>1</sup> „Ulus“, 1960, 18 haziran.

<sup>2</sup> „Ulus“, 1959, 18 aralik.

համաձայն, պետական պարտքերը մարելու համար նախատեսվում էր 271,304,000 թ. լիրա: Սակայն ինչպես պարզվեց պետական հեղաշրջումից հետո, Թուրքիայի ներքին ու արտաքին պետական պարտքերը կազմում էին ավելի մեծ գումար, քան ֆինանսների նախկին մինիստր Փուլաթբանի հաշվումները: Նոր պաշտոնական տվյալների համաձայն միայն արտաքին պետական պարտքը առ 1960 թվականի մայիսի 27-ը կազմել է 12.191.441.724 թ. լիրա<sup>3</sup>, որը 25 անգամ ավելի է երկրի ոսկու և վալյուտայի պաշարներից<sup>4</sup>: Այդ նույն տվյալների համաձայն 1960—1965 թթ. ընթացքում Թուրքիան իր արտաքին պարտքը մարելու համար պետք է հատկացնի առնվազն մեկ միլիարդ լիրա: Արտաքին պարտքի մարումը տևելու է մինչև 2008 թվականը<sup>5</sup>: Այդ նույն ժամանակաշրջանում երկրի ներքին պետական պարտքը կազմել է մոտ 7 մլն. թ. լիրա<sup>6</sup>: Այսպիսով ստացվում է, որ Թուրքիայի պարտքերը կազմում են մոտ 19 մլրդ. թ. լիրա: Միայն Եվրոպական տնտեսական համագործակցության կազմակերպության մեջ մտնող երկրներին Թուրքիան պարտք է 359

<sup>3</sup> „Ulus“, 1960, 18 haziran.

<sup>4</sup> „Ulus“, 1960, 21 haziran.

<sup>5</sup> „Ulus“, 1960, 21 haziran.

<sup>6</sup> „Ulus“, 1960, 22 haziran.

մլն. դոլլար, որից 110 մլն. դոլլարը՝ Արևմտյան Գերմանիային<sup>7</sup>:

Աճում են Թուրքիայի նաև արտաքին առևտրական պարտքերը, որոնք 1950—1959 թվականների ընթացքում կազմեցին մոտ 3096 մլն. թ. լիրա<sup>8</sup>: Անդրադառնալով Թուրքիայի արտաքին առևտրական դժվարություններին, «էկոնոմիստ» հանդեսը նշում էր, որ Թուրքիան «հիմար համբավ է ձեռք բերում իր առևտրական դորժակիցների շրջանում»<sup>9</sup>:

Անցյալ ժամանակաշրջանում երկրում ավելացել է նաև շրջանառության մեջ գտնվող թղթադրամների գումարը, ընկել է լիրայի արժեքը: 1958 թվականի օգոստոսին շրջանառության մեջ գտնվող թղթադրամների գումարը կազմել է 3.920.770.395 թ. լիրա<sup>10</sup>, որն ավելի քան 4 անգամ շատ էր 1950 թվականին շրջանառության մեջ գտնվող թղթադրամների գումարից: Թղթադրամների գումարը շրջանառության մեջ աճում էր շարաթական նույնիսկ մինչև 200 մլն. թ. լիրայի չափով:

1958 թվականի օգոստոսին թուրքական կառավարողները ստիպված եղան, ետպատերազ-

<sup>7</sup> „Birmingham post“, 1959, 8 september.

<sup>8</sup> „Ulus“, 1960, 18 kasım.

<sup>9</sup> „Economist“, 1954, 15 may, supplement „Turkey“, p. 11.

<sup>10</sup> „Ulus“, 1958, 9 ağustos.

մշան ժամանակաշրջանում, երկրորդ անգամ իջեց-  
նելու լիրայի արժեքը: Լիրայի նոր սահմանված  
կուրսի համաձայն 1 դոլլարը հավասարվեց 9,2  
լիրայի, 1946 թվականի 2,8 լիրայի դիմաց: Չնա-  
չած վերոհիշյալ միջոցառմանը, դոլլարը «սև շու-  
կայում» արդեն արժի 15—18 թ. լիրա:

Պակասել է նաև Թուրքիայի պետական ոսկու  
ուաշարը: 118 տոննա ոսկու ուաշարից 102 տոննա  
պարտագրված է օտարերկրյա բանկերում՝ կար-  
ճատև վարկերի դիմաց: Ըստ ֆինանսների նոր  
մինիստր Ալիջանի հայտարարության, Թուրքիան  
պարտավոր է տարեկան 4,5 մլն. դոլլար վճարել  
որպես տոկոս պարտագրված ոսկու փոխարեն  
ստացած վարկերի դիմաց<sup>11</sup>:

Բացահայտելով ռազմականացման քաղաքա-  
կանության ծայր աստիճան վնասակար ազդեցու-  
թյունն էկոնոմիկայի վրա, Մարքսը և էնդելսը գրել  
են, որ անմիջական տնտեսական տեսակետից,  
պատերազմի համար կատարվող ծախսումները ոչ  
այլ ինչ են, քան «եթե ազգը ջուրը պցեր իր կապի-  
տալի մի մասը»<sup>12</sup>:

Թուրքիայի ծանր տնտեսական վիճակը մի  
ավելորդ անգամ ապացուցում է այն բնութագիրը,  
որը տրվել է մարքսիզմի կլասիկների կողմից ռազ-

<sup>11</sup> „Ulus“, 1960, 18 հաջրառ.

<sup>12</sup> „Архив Маркса и Энгельса“, М., 1935 г., том 4,  
стр. 29.

մականացման քաղաքականությանը: Նույնիսկ Ադենաուերը չի թաքցնում, որ Թուրքիայի տնտեսական դժվարությունների գլխավոր պատճառը կայանում է նրանում, որ վերջինս ղենքի տակ է պահում մոտ 500 հազար զինվոր<sup>13</sup>: Ուրիշ խոսքով, Թուրքիան մեծ ծախսեր է կատարում երկրի ռազմականացման նպատակով: Ֆ. Բաադեն ևս նշում է, որ Թուրքիայի տնտեսական դժվարությունների հիմնական պատճառը երկրի ռազմականացումն է: Նա գրում է. «Պաշտպանության վրա կատարվող ծախսերը ծանր բեռ են Թուրքիայի վրա, և եթե այդ ճնշումը դադարի կերպով շաղկապեցվի, ապա թուրքական տնտեսությունը չի կարող լավանալ: Թուրքիայի բյուջեն ներկա կուրսով հաշված, հավասար է մեկ միլիարդ դոլլարի: Այդ բյուջեից Թուրքիան բավարարում է 23 դիվիզիայից կազմված իր բանակի պահանջները: Թուրքիայի դաշնակից ՆԱՏՕ-ի երկրների բյուջեների ընդհանուր գումարը կազմում է 600 մլրդ. դոլլար, այսինքն թուրքական բյուջեից 600 անգամ ավելի: Իսկ ինչ վերաբերում է Եվրոպայում ՆԱՏՕ-ի երկրների զինված ուժերի թվին, ապա այն կազմում է թուրքական ներկա բանակի կեսը: Այսպիսով թուրքական տնտեսության թուլության վերացման ուղին պարզ է՝ անհրաժեշտ է տարեցտարի կրճատել թուրքական բանակի թիվը կամ կանոնավոր բանակը:

<sup>13</sup> „Vatan“, 1958, 29 temmuz.



իոսիսարինել աշխատանքային բանակով»<sup>14</sup>: Մամուլի հաղորդումների համաձայն, տնտեսական նշանաժամը Թուրքիայում սկսում էր ընդունել ազգային աղետի բնույթ<sup>15</sup>: Այս բուլոբից հետո, շատ տարօրինակ է «Միդլ իստերն աֆֆերս» հանդեսի սկսումն այն մասին, որ Թուրքիայի տնտեսական դժվարությունների գլխավոր պատճառը հացահատիկային ու մյուս գյուղատնտեսական կուլտուրաների ցածր բերքատվությունն է<sup>16</sup>:

1958 թվականի օգոստոսին ԱՄՆ-ը ու արևմրտյան մյուս երկրները Թուրքիային տրամադրեցին նոր վարկ 359 մլն. դոլար գումարի շափով: Ինչպես գրում էր «Նյուեյուրիսեր ցայտունգ» թերթը, այդ վարկը Թուրքիային տրամադրվեց միայն ու միայն նրա համար, որպեսզի փրկվի նրա էկոնոմիկան, որը նստել է ծանծաղուտի մեջ<sup>17</sup>: Սակայն այդ վարկը Թուրքիային տրամադրվեց այնպիսի ստրկացուցիչ պայմաններով (լիրայի արժեքի իջեցում և այլն), որոնք Թուրքիային տնտեսական ու քաղաքական ավելի ծանր կախման մեջ դրեցին օտարերկրյա կապիտալից: Այդ վարկը շթեթեացրեց Թուրքիայի տնտեսական ծանր վիճակը: Ինչպես ինքը Մենդերեսն էր նշում 1960 թ.

<sup>14</sup> „Yeni Istanbul“, 1959, 26 kasım.

<sup>15</sup> „La Tribune des Nations“, 1959, 5 septembre.

<sup>16</sup> „Middle Eastern Affairs“, 1958, january, p. 4.

<sup>17</sup> „Neue Züricher Zeitung“, 1958, 30 Juli.

սկզբներին Ադենաուերին հղած իր դիմումի մեջ, Թուրքիան այդ ժամանակ գտնվում էր ֆինանսական սնանկացման եզրին<sup>18</sup>:

Թուրքիայի պետական ու արտաքին առևտրական պարտքերի աճը, դրամի արժեքազրկումը ու ֆինանսների կազմալուծումն անխուսափելիորեն հանգեցրին աշխատավոր զանգվածների շահագործման ուժեղացմանը, գործազրկության աճմանը ու նրանց կենսամակարդակի հետագա իջեցմանը: Այստեղ օրավուր բարձրանում են լայն սպառման ապրանքների գները, բնակարանային ու կոմունալ սպասարկման ծախսերը, ավելանում են բնակչությաններից դանձվող հարկերը:

Էկոնոմիկայի ու առևտրի մինիստրության տվյալներով լայն սպառման ապրանքների գները 1958 թվականին, 1938 թվականի համեմատությամբ, բարձրացել են 900 տոկոսով<sup>19</sup>, իսկ բնակարանային վարձը՝ 3650 տոկոսով<sup>20</sup>: Թուրքիայի վիճակագրական վարչության տվյալների համաձայն, 1950 թվականի համեմատությամբ ապրուստը 1959 թվականի հունիսին թանկացել էր վեց անգամ<sup>21</sup>: Դեռ ավելին, միջազգային պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն ապ-

<sup>18</sup> „Neues Deutschland“, 1960, 31 Mai.

<sup>19</sup> „Yeni Sabah“, 1959, 2 nisan.

<sup>20</sup> „Yeni Sabah“, 1959, 4 aralik.

<sup>21</sup> „Ulus“, 1959, 16 ekim.

րուստի թանկությամբ Թուրքիան կապիտալիստա-  
կան աշխարհում գրավում է առաջին տեղը<sup>22</sup>: Ապ-  
րուստի թանկությամբ Թուրքիայում առաջին տեղը  
գրավում է Դիարբեքիրը: Հաշվված է նաև, որ կա-  
պիտալիստական երկրների մայրաքաղաքների մեջ  
ապրուստի թանկությամբ երկրորդ տեղը գրավում  
է Անկարան: Այդ նույն ժամանակաշրջանում բան-  
վորների աշխատավարձը և գյուղացիների եկա-  
մուտները ավելացել են միայն 1,5—2 անգամ:

Կյանքի պայմանների վատթարացումը ստի-  
պում է դիմելու ծայրահեղ միջոցների՝ երեխաների  
վաճառքի ու նրանց սպանության ծնողների կող-  
մից, ինչպես նաև ինքնասպանությունների: Այս-  
պես օրինակ, «Ննի սաբահ» թերթը գրում էր, որ  
էրեզլի քաղաքում Մանշարե անունով երկու երե-  
խաների մայրը ինքնասպանություն է գործել:  
Իր թողած գրության մեջ նա նշել է, թե այդպիսի  
որոշում կայացրել է այն պատճառով, որ հնարա-  
վորություն չունի կերակրելու իր զավակներին<sup>23</sup>:  
Իսկ «Հաբեր» թերթի տվյալներով (1959 թվականի  
հոկտեմբեր) Բալըքեսիրի վիլայեթի գյուղերից մե-  
կում մի երիտասարդ կին սպանել է իր երեք երե-  
խաներին ու այնուհետև հայտարարել, որ չի  
պղջում իր հանցագործության համար: Այդ ավելի

<sup>22</sup> „Ulus“, 1959, 8 eylül.

<sup>23</sup> „Yeni Sabah“, 1958, 29 aralık.

լավ է, քան թե նրանք մեռնեն սովից, — ասել է  
նա:

Սպառազինությունների մրցավազքի ու օ-  
տարերկրյա, այդ թվում նաև արևմտագերմանա-  
կան մոնոպոլիաների ներխուժումը Թուրքիա, մո-  
նոպոլիաներ, որոնք մի անգամ իշխանութունը  
հանձնեցին ֆաշիզմին ու այժմ էլ ճանապարհ են  
հարթում նրա համար Արևմտյան Գերմանիայում,  
ինչպես սպասելի էր, հանգեցրեց նաև ռեակցիայի  
դիրքերի ամրապնդմանը Թուրքիա ի ներքին ու  
արտաքին քաղաքականության բոլոր բնագավառ-  
ներում:

Բայարի-Մենդերեսի՝ ազգագավաճան կլիկը  
արչունալի հետապնդումների էր ենթարկում Կո-  
մունիստական պարտիայի անդամներին ու խա-  
ղաղության կողմնակիցներին, բոլոր այն հայրե-  
նասերներին, որոնք իրենց բողոքի ձայնն էին  
բարձրացնում երկրի ռազմականացման ու օտար-  
երկրյա կապիտալի ներխուժման դեմ: Հետա-  
պնդումների էին ենթարկվում նաև այն բանվոր-  
ները, գյուղացիներն ու առաջավոր ինտելիգեն-  
ցիան, որոնք պայքարում են հացի, հողի ու իրենց  
կենսական իրավունքների համար:

Սակայն Դեմոկրատական պարտիայի կառա-  
վարութունը հետապնդում էր ոչ միայն աշխա-  
տավոր մասսաներին ու նրանց պայքարի կազմա-  
կերպիչներին, այլ նաև լիկվիդացնում էր բուր-

ժողովուրդի անհատական արժանատիների վերջին  
մնացորդները, ամեն կերպ խափանում էր ընդդի-  
մադիր պարտիաների ու մամուլի գործունեու-  
թյունը, ճնշում էր մամուլի ու խոսքի արժանու-  
թյունը ու նույնիսկ առանց դատի ու դատարանի  
բանտարկում էր ընդդիմադիր պարտիաներից  
մեջլիսի անդամ դեպուտատներին:

Ուժեղ հետապնդումների էր ենթարկվում  
հատկապես ընդդիմադիր մամուլը: Պաշտոնական  
տվյալների համաձայն, Դեմոկրատական պար-  
տիայի իշխանության գլուխ անցնելուց հետո 811  
ժողովուրդի դատապարտվել էին 144 տարի 8 ա-  
միս և 3 օր բանտարկության ու 41862960 թ. լի-  
րա դրամական տուգանքի<sup>24</sup>: Տարբեր ժամանակնե-  
րում բանտարկվել էին նաև այնպիսի հայտնի  
թուրք ռեակցիոն ժողովուրդներ, ինչպես Յալչի-  
նը, Յալմանը, Թուկերը և ուրիշներ:

Թուրքական իշխանությունները շարունակում  
էին ազդային փոքրամասնությունների ֆիզիկա-  
կան բնաջնջման ու նյութական քայքայման հա-  
միդյան քաղաքականությունը:

Երկիրը ծածկվել էր դատարանների ու ոստի-  
կանական տեղամասերի խիտ ցանցով: Այսպես  
օրինակ, թուրքական պաշտոնական տվյալների  
համաձայն դատարանների թիվը, որոնք կազմա-  
կերպվել էին 1950 թվականի մայիսից հետո, կազ-

<sup>24</sup> „Ulus“, 1958, 19 aralık.

մում է 477, որոնցից 36-ը՝ ծանր հանցանքների  
բնույթի համար<sup>25</sup>:

Սրանք կառավարման ֆաշիստական մեթոդի  
ակնհայտ դրսևորումներ են: Եվ դա չի կարելի  
սխառահավանութուն համարել, չէ՞ որ իմպերիա-  
լիզմն ամենուրեք ու ամեն ժամանակ ձգտում է  
«դեմոկրատիան ընդհանրապես մոխարինել օլի-  
գարխիաչուի»<sup>26</sup>:

Ոստիկանական ուժիմի հաստատումը և  
ռեակցիայի դիրքերի ամրապնդումը Թուրքիայի  
ներքաղաքային կյանքում այնպիսի ակնհայտ  
բնույթ էր ստացել, որ այն չէր ժխտվում նաև արև-  
մրտյան մոնոպոլիստական մամուլի կողմից: Այս-  
պես օրինակ, «Մանչեստր Գարդիան» թերթը գրում  
էր, որ Թուրքիայում «թաղավորում է ոստիկանա-  
կան տեուրը»<sup>27</sup>:

Տնտեսական ու ներքաղաքական դժվարու-  
թյուններից դուրս դալու ճանապարհը Բաչարի-  
Մենդերեսի տիպի կառավարողները տեսնում էին  
երկրի հետագա ուղիմականացման մեջ: Թուրքիա-  
յի արտաքին քաղաքականությունն ենթակա էր  
տեղական ու օտարերկրյա մոնոպոլիստական կա-  
պիտալի ազդեցությանը և ելնում էր նրա շահե-  
րից: Բայց այդ քաղաքականությունը չէր համա-

<sup>25</sup> „Zafer“, 1957, 2 kasım.

<sup>26</sup> Վ. Ի. Լեևին, *Ընտիր երկեր*, 1951, հատ. 23, էջ 45:

<sup>27</sup> „Manchester guardian“, 1958, 8 may.

պատասխանում Թուրքիայի ազգային անկախու-  
թյան ու անվտանգության շահերին, նրա ժողովրդի  
սրմատական շահերին:

Ինչպես վերևում նշվել է, 1960 թվականի մա-  
յիսի վերջերին Թուրքիայում տեղի ունեցավ զին-  
վորական հեղաշրջում, տապալվեց Բայարի-Մեն-  
դերեսի ինքնիշխանությունը, ու հաստատվեց ռազ-  
մական դիկտատուրա: Նոր կառավարությունը  
մտադիր է վերականգնելու թուրքական ռեսպուբ-  
լիկայի հիմնադիր Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի  
կողմից հռչակված ներքին ու արտաքին քաղաքա-  
կանության սկզբունքները, հատկապես «Խաղաղու-  
թյուն երկրում, խաղաղություն ամբողջ աշխար-  
հում» սկզբունքը: Մշակվել են նաև մի շարք մի-  
ջոցառումներ երկրի տնտեսական կյանքը «կայու-  
նացնելու» նպատակով:

Թուրքիայի ազգային անկախության ու անվը-  
տանգության և նրա ժողովրդի կենսական շահերը  
պահանջում են, որ թուրքական նոր կառավարող-  
ները հրաժարվեն սպառազինությունների մրցա-  
վազի քաղաքականությունից, ինչպես նաև ա-  
ջակցեն միջազգային լարվածության թուլացմանը,  
հարևան երկրների՝ հատկապես Սովետական  
Միության հետ հարաբերությունների բարելավ-  
մանը:

Դա իր հերթին մեծ շահով կնպաստի Միջին  
ու Մերձավոր արևելքում խաղաղության, ինչպես

նաև Քուրբիայի ազգային անկախութեան ու անվը-  
տանդութեան պահպանմանը ու հետագա ամրա-  
պնդմանը:



ՅԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

Վ. Ի. Լենին, *Ընտիր երկեր, հատոր 22.*

Վ. Ի. Լենին, *Ընտիր երկեր, հատոր 23.*

*Սովետական Միության կոմունիստական պարտիայի  
Ծրագիրը, Հայպետհրատ, 1961.*

Ն. Ս. Խրուշչով, *ՍՄԿՊ Կենտկոմի հաշվետվությունը  
պարտիայի XXII համագումարին, Հայպետհրատ,  
1961.*

ՌՌԻՍԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

Архив Маркса и Энгельса, М., 1935, т. 4.

Хрущев Н. С., Разоружение — путь к упрочению мира  
и обеспечению дружбы между народами. Речь на  
IV сессии Верховного Совета СССР, «Правда»,  
15 января 1960.

Андреев А., Экспорт американского капитала, М., 1957.

Бауман Г., Атлантический пакт концернов. ИЛ, 1953.

Бауман Г., Хозяева западногерманских монополий, ИЛ,  
1954.

Белая книга о возрождении германского империализма,  
ИЛ, 1952.

- Бельчук Ал., Вывоз капитала из Западной Германии, М., 1957.
- Бункина М., Внешняя экономическая экспансия западногерманских монополий, М., 1958.
- Бюллетень иностранной коммерческой информации (БИКИ), 1953—1961.
- Варга Е., Основные вопросы экономики и политики империализма, М., 1957.
- Герст Ф., Федеральная республика Германии под властью Аденауэра, ИЛ, 1958.
- Ерусалимский А., Внешняя политика и дипломатия германского империализма в конце XIX в., М., 1951.
- Иноземцев Н., Американский империализм и германский вопрос, М., 1954.
- Иностранный капитал в предприятиях Западной Германии. ИЛ, 1953.
- Из истории Германии нового и новейшего времени, М., 1958.
- Капчев Г., «Турецкое наследство» и мировая война, Петроград, 1917.
- Кряжин В., Национально-освободительное движение на Ближнем Востоке, М., 1923.
- Кучинский Ю., Очерки истории германского империализма, ИЛ, 1952.
- Лудшувейт Е., Турция, М., 1955.
- Микульский К., Концерн Круппа, М., 1959.
- Монополистический капитал в Западной Германии, ИЛ, 1956.
- Муратов Н., Турция в тисках внутренней и внешней реакции, М., 1949.

- Новичев А., Экономика Турции в период мировой войны, изд. АН СССР, 1935.
- Новичев А., Очерки экономики Турции до мировой войны, изд. АН СССР, 1937.
- Правда о политике западных держав в германском вопросе, М., 1959.
- Розен Д., История Турции, 1872.
- Рымалов В., Колониальная экспансия финансового капитала США под флагом «помощи», М., 1956.
- Секистов В., Странная война в Западной Европе и в бассейне Средиземного моря (1939—1943), М., 1958.
- «Современная Турция», ИВЛ, 1958.
- Солюс Г., Государственные финансы и иностранный капитал в Западной Германии, М., 1957.
- «Современное экономическое положение капиталистических стран», М., 1959.
- Туганова О. Э., Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, М., 1950.
- Ульбрихт В., К истории новейшего времени, ИЛ, 1957.
- Файнгар И., Очерк развития германского монополистического капитала, М., 1958.
- «Экономика капиталистических стран после второй мировой войны», М., 1953.
- «Экономика и внешняя торговля капиталистических стран», М., 1954.
- «Экономическое положение капиталистических стран в 1954 г.», М., 1955.
- «Экономическое положение капиталистических стран в 1955 г.», М., 1956.

- «Экономическое положение капиталистических стран в 1956 г.», М., 1957.
- «Экономическое положение Западной Европы», М., 1958.
- «Экономическое положение капиталистических стран». Приложение № 8 к журналу «Мировая экономика и международные отношения», 1958.
- «Экономика капиталистических стран после второй мировой войны», Статистический сборник, М., 1959.
- «Экономическое положение стран Азии и Африки в 1957 г. и первой половине 1958 г.», ИВЛ, 1959.
- Элбакиан А., Экономическое поражение фашистской Германии в войне против СССР, М., 1955.

#### Газеты

- «Известия», 1954—1961.
- «Заря Востока», 1953—1955.
- «За прочный мир, за народную демократию», 1955.
- «Коммунист» — Ереван, 1960.
- «Литературная газета», 1954.
- «Правда», 1953—1961.
- «Труд», 1960—1961.
- «Советская Абхазия», 1953.

#### Журналы

- «За рубежом», 1961.
- «Коммунист», 1953—1961.
- «Международная жизнь», 1955—1961.
- «Мировая экономика и международные отношения», 1957—1961.

- «Новое время», 1950—1961.  
 «Проблемы мира и социализма», 1960—1961.  
 «Советское востоковедение», 1958—1960.  
 «Современный Восток», 1958—1960.

*ԹՈՒՐԻԿԻՅԵՆ ԼԵՁՎՈՎ*

- T. Tunaya*, Türkiyede siyasi partiler (1859—1952), Istanbul, 1952.  
 „Akşam“, 1950—1961.  
 „Cumhuriyet“, 1950—1961.  
 „Ekonomi gazetesi“, 1954—1961.  
 „Milliyet“, 1957—1961.  
 „T. C. Resmi gazete“, 1950—1961.  
 „Ulus“, 1950—1961.  
 „Vatan“, 1950—1961.  
 „Yeni Istanbul“, 1950—1961.  
 „Yeni gün“, 1959—1961.  
 „Yeni sabah“, 1957—1961.  
 „Zafer“, 1950—1961.

*ԳԵՐՄԱՆԻՅԵՆ ԼԵՁՎՈՎ*

- Sözeri S.*, Der Wirtschaftsaufbau der Türkei nach dem zweiten Weltkrieg. Kiel, 1955.  
*Uhrenbacher W.*, Türkei, B., 1957.  
 „Bulletin des Press-und Informationsamtes der Bundesregierung“, Bonn, 1960.  
 „Chemische Industrie“, Düss., 1955—1958.  
 „Deutsche Finanzwirtschaft“, B., 1958.  
 „Erdöl und Kohle“, 1957.  
 „Frankfurter Allgemeine Zeitung“, F. a/M., 1960.

- „Handelsblatt“, 1954—1960.
- „Industriekurier“, 1958.
- „Neues Deutschland“, B., 1953—1960.
- „Nachrichten für Aussenhandel“, 1954.
- „Neue Züricher Zeitung“, 1958.
- „Der Volkswirt“, 1957.
- „Die Welt“, 1957.
- „Die Wirtschaft“, 1953—1955.
- „Zeitschrift für die Zuckerindustrie“, 1955.

### ՅՐԱՆՍԵՐԵՆ 1,624,04

- Aziz Hanki Bey*, Turcs et Atatürk, Caire, 1939.
- Baudin P.*, La Turquie et les Ottomans P., 1896.
- Yves Fanchon et Maurice Leruth*, L'Allemagne et le Moyen-Orient, P., 1957.
- „L'Asie Nouvelle“, P., 1959.
- „Cahiers de l'Orient contemporain“, 1954—1958.
- „Drapeau Rouge Magazine“, Brux., 1958.
- „L'Économiste d'Orient“, Ist., 1958—1961.
- „Économie et Politique“, 1958.
- „Istanbul“, 1957—1961.
- „Journal d'Orient“, Ist., 1953—1957.
- „Monde“, 1957—1961.
- „Moniteur officiel du commerce et de l'industrie“, 1956.
- „Recherches internationales à la lumière du marxisme“, 1958.
- „Problèmes Économiques“, 1957—1958.
- „La Tribune des Nations“, 1958—1959.
- „L'Usine Nouvelle“, 1956—1959.

ԱՆԳՆՆԵՐԻ ԼԵՂՎՈՎ

- Cenani R.*, Foreign Capital Investments in Turkey, Ist., 1954, 1958.
- „Investments in Turkey“, Wash., 1956.
- „Birmingham post“, 1959.
- „Blitz“, Bombay, 1959.
- „Business International“, N. Y., 1959.
- „The Economist“, L., 1954.
- „The Financial Times“, L., 1953—1961.
- „The Middle East“, L., 1959, 1961.
- „The Middle Eastern Affairs“, N. Y., 1956—1958.
- „The Middle East Economic Digest“, L., 1958.
- „The Manchester Guardian“, 1958—1959.
- „The New Republic“, Wash., 1953—1959.
- „The Spectator“, L., 1951.
- „Three monthly economic review Turkey“, Annual supplement, L., may, 1960.
- „The Times“, L., 1953.
- „The United States News and World Report“, N. Y., 1953.
- „The Wall Street Journal“, N. Y., 1953.
- „The World Telegram and Sun“, N. Y., 1957.
- „The Yearbook of international trade statistics“, 1958, U. N., N. Y., 1958.

ԲՈՎԱՆԿԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Գերմանական խմբերիալիզմի Թուրքիա ներխուժման սպամուխյունից . . . . .	5
Արևմտադերմանական մոնոպոլիաների առևտրական ներխուժումը Թուրքիա . . . . .	26
Արևմտադերմանական մոնոպոլիաների կապիտալ ներդրումները Թուրքիայում . . . . .	61
Թուրքիայի անասնական դրուխյան շուրջը . . . . .	113





Ռաֆֆի Պոզոսի Կոնդակչյան  
Раффи Погосович Кондакчян

ԱՐԵՎՄՏԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄՈՆՈԳՐԱԿԱՆԵՐԻ  
ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԹՈՒՐԲԻԱ

Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ  
արևելագիտության սեկտորի գիտական  
խորհրդի հանձնարարությամբ

Պատ. խմբագիր՝ Ս. Ս. ԱՎԱՆԵՍՏՈՎ  
Հրատ. խմբագիր՝ Ա. Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ  
Նկարչական ձևավորումը՝ Ա. ՉԱԽՄԱԽՉՅԱՆԻ  
Տեխ. խմբագիր՝ Հ. Լ. ԳՈՐՈՅԱՆ  
Սրբագրիչ՝ Լ. Ս. ՍԱՐԱՖՅԱՆ

ՎՖ 07148, հրատ. № 2281, ԽՀԽ № 829, պատվեր 205,  
տիրաժ 1500: Հանձնված է արտադրության 9/V 1963 թ.,  
ստորագրված է տպագրության 8/VII 1963 թ., տպագրական  
Ց,Ց մամուլ, հրատ. Յ,7 մամուլ, թուղթ 70 × 92<sup>1</sup>/<sub>32</sub>:  
Գինը 22 կոպ.:

---

ՀՍՍՌ ԳԱ հրատ. տպարան, Երևան, Բարեկամության 24